

ԳԵՎՈՐԳ  
ՂԱՐԻԲՅԱՆՅԱՆ

ՀԱՅԵՐ Ա ԱՍԴՅ ԵՎ  
ՌԱՐԻՇ ԸՐԺՈՒՄ  
ՄԻԾԻՎՅՈՒ



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱՊԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

---

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

## ԳԵՎՈՐԳ ԴԱՄԻՔՅԱՆՑԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՐՈՎ ԿՎՈՒՂԱՐ  
ԸՆՐԺՈՒԹ ՄԻՐԻԱՅՅՈՒՄ

ԵՐԵՎԱՆ 2012  
Հեղինակային հրատարակություն

929: 956.91 Համբայ Եւ համաց Ը

GEVORG GHARIBJANIAN

HAFEZ AL ASSAD AND THE CORRECTIVE MOVEMENT IN SYRIA

*It is recommended for publication by the Scientific  
Council of the Institute of Oriental  
Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia*

A 98374  
//



VERE VAN 2012

Հրատարակում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՀՏԴ՝ 94/99  
ԳՄԴ՝ 63.3  
Դ՝ 472

Խոմքագիր՝ Ն. Հ. Հռիփաննիսյան  
պատմական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր,  
ՀՀ ԳԱԱ բրակից անդամ

“Նարիջանյան Գ.  
Դ. 472 Հաճեց աչ Ասացը և ուղիւ շարժումը Սիրիայում/Գ. Նարիջանյան; ՀՀ ԳԱԱ  
Արևելագիտության ինստիտուտ. — Եր.: Հեղ. իրատ., 2012.— 224է:

Աշխատության մեջ բննարկվում են Սիրիայում 1970 թվականի ուղիւ շարժման հիմնադրման պատմական նախադրյապները, դրապատճառները, նպատակներն ու սկզբունքները: Լուսաբանվում են 1970–2000 քր. Սիրիայի Արարական Հանրապետության նախագահ Հաճեց աչ Ասացի հայացքներն ու քաղաքական ուղղությունը, ինչպես նաև Սիրիայի մերժադարձական և սոցիալ-տնտեսական զարգացումների առանձնահատկությունները՝ ուղիւ շարժման հայեցակարգի ներու:

Նախախոսված է արարագիտությի, պատմարան-աքնակագիտությի, Փրազգայնագիտությի, դիվանագիտությի և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ՝ 94/99

ԳՄԴ՝ 63.3

ISBN 978-9939-0-0395-5

© “Նարիջանյան Գ. Բ., 2012

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

7

### ԳԼՈՒԽ I

<b>ՈՒՂԻՄԸ ԸԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄ, ԷՌԽԹՅՈՒՆԸ</b>	15
<b>ԵՎԸ ԾՐԱԿՐԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ</b>	15
1.1. Ներքաղաքական և սոցիալ-տնտեսական խրապությունը Սիրիայում 1963-1970 րր.	15
1.2. Ուղղիչ շարժման պատճառները .....	24
ա) Սոցիալ-տնտեսական պատճառները .....	24
բ) Կուսակցական-զարգափարախոսական պատճառները .....	29
գ) Արտաքին քաղաքական պատճառները .....	38
1.3. Բշխանափոխությունը երկրում և ուղղիչ շարժման քաղաքականության հոլակումը .....	48

### ԳԼՈՒԽ II

<b>ՈՒՂԻՄԸ ԸԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ</b>	75
<b>ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄ ՍԻՐԻԱՅՈՒՄ</b>	75
2.1. Ժամանակավոր կառավարության և ժողովրդական ժողովի կազմավորումը: Նախագահական հանրաքվեի անցկացումը Սիրիայում և Հաֆնազ ալ Ասադի ընտրությունը Սիրիայի նախագահ 75	75
2.2. Պետության ամփուանգության նոր համակարգն Ասադի օրոք .....	87
2.3. Ազգային առաջադիմական ճակատի ձևավորումը Սիրիայում .....	100
2.4. Սիրիայի մշտական սահմանադրության ընդունումը և ժողովրդական ժողովի (մաջլիս աշ-շաար) ձևավորումը .....	116

2.5. 1973 թ. հոկտեմբերյան պատերազմն ու արարական միասնության խնդիրը ուղղիչ շարժման հայեցակարգի ներքո	125
--	-----

### ԳԼՈՒԽ III

ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԲԱՐԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ 1970-1980-ԱԿԱՆ, ԹԹ.	140
3.1. Սոցիալ-տնտեսական վերափոխումները	140
3.2. Ներքաղաքական լարվածությունը Սիրիայում և «Մուտքման եղբայրներ» կազմակերպության հակապետական գործունեությունը որպես սպառնալիք ուղղիչ շարժմանը	156
ԵԶՐԱՓՈԱԿՈՒՄ	178
ԱՄՓՈՓՈՒՄ (անզերեն)	202
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ 5ԱՆԿ	205

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիրիայի Արաբական Հանրապետության պատմության նորագույն շրջանի կարևորագույն իրադարձություններից մեջ՝ 1970 թ. նոյեմբերի 16-ին հոչակված ուղղիչ շարժման եռյան, դրապատճառների, նպատակների, զաղափարախոսության, շարժման հիմնադիր Հաֆեզ ալ Ասադի քաղաքական ուղիղության, ինչպես նաև շարժման արձանագրած քաղաքական ու սոցիալ-տնտեսական ծերքերումների ուսումնասիրությունների կարևոր գիտական և հասարակական-քաղաքական նշանակություն:

Ուղղիչ շարժումն, ըստ Հաֆեզ ալ Ասադի, վերադարձ էր Արաբական վերածննդի սոցիալական կուսակցության (ԱՎՍԿ կամ Բաաս) սկզբանական զաղափարախոսությանը, որը հիմնական սկզբունքներին ներքադարական, սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքական ոլորտաներում, որոնցից, ըստ եռյան, շեղվել էր Բաասի ծախ թե՛ կառավարման տարիներին՝ 1966–1970 թթ.:

20-րդ դարում Սիրծափոր Արևելքի երկրների առաջնորդների և պետական-քաղաքական գործիչների գահակարգում իր ուրույն տեղն ունի 1971–2000 թթ. Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ Հաֆեզ ալ Ասադը, որի երեսնամյա ղեկավարման շրջանը Սիրիայի քաղաքարյան պատմության մեջ իրավամբ հաճարվում է առաջընթացի և կայտնության ժամանակաշրջան:

Արաբական ոչ մի երկրում թերևս անկախության նվաճումից հետո ներքադարական կյանքն այնքան բուռն ընթաց չէ տնեցել, ինչպես Սիրիայում: Ուշագրավ է այս հանգանանքը, որ Սիրիայում հազվադիպ էր պատահումն. որ կառավարությունն իրականացներ իր գործառույթները մեկ տարուց ավելի: Հաճախակի պետական հեղաշրջումները երկրում<sup>1</sup> չեն կարող չկասեցնել Սիրիայի սոցիալ-տնտեսական և պետական կառավարման հաճակարգի բնականոն զարգացումը: Այդ հեղաշրջումների ամենագական հիմք և նախապատճառը կին հանցիսանում խորը սոցիալա-

<sup>1</sup> Մայիս 1949 թ., օրինակ, առևի ամենավ նրա նեղացում, իսկ ընթանութ առաջ, անհայտությունը մքանչ 1970 թ. Սիրիայում կառավել է ուստ երկու տասնյակ նեղացում կամ նեղացումն փոք:

կան և քաղաքական հակասությունները սիրիական հասարակությունում: Անկախությունից ի վեր Սիրիայում իշխանության դեկի մոտ իրենց փորձնեցին նրկի գույքը բոլոր քաղաքական կուսակցությունների, քանի ակային տարրեր խմբավորումների ներկայացուցիչները: Սիրիան հոգնել էր տարիներ ի վեր ձգվող անկայունությունից և զարգացման միջու ու հեռանկարային ուսուի գտնելու փնտրությունից: Հաֆեզ ալ Ասադի ամենազիստոր ծեռքբերումներից մեկն ընդհանուր առմամբ ներքաղաքական անհայտադիա կայունության հաստատումն էր, որն անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեց տարրեր ոլորտներում առաջընթացի համար:

1970 թ. մոյնամբերի ուղղի շարժումը Սիրիայի նորագույն պատմության մեջ համարվում է ամենախոշոր իրադարձությունն անկախության ծեռքբերումից հետո: Ուղղի շարժման համատեքստում նրկում իրականացվեցին մի շարք քարենիչները և արմատական փոփոխություններ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականության ոլորտներում: Սիրիան արժանի տնդ գրավեց տարածաշրջանային և միջազգային քաղաքականության ասպարեզում, նրա տեսակետը սկսեց կարևորվել արարական աշխարհում, այդ թվում՝ պատմատիենյան հիմնահարցի, ինչպես նաև ընդհանրապես մերձավորարևելյան տարածաշրջանում գոյություն ունեցող խմելիրների լուծման ժամանակ: Ուղղի շարժման արդյունքում Սիրիան Հաֆեզ ալ Ասադի նախազակության շրջանում դարձավ արարական աշխարհի ազդեցիկ կենտրոններից մեկը:

Ուղղի շարժման ուսումնամիրունց հնարավորությունն է ընծեռու քաշահայտնելու Սիրիայի ներքաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումների առանձնահատկությունները, միշտ հասկանալու և զնահատելու տարրեր նրեւությունների ու իրադարձությունների խորհրդային պատճառները:

Հետազոտության թեմայի արդիականությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ Սիրիան Մերձավոր Արևելյան Հայաստանի Հանրապետության քարեկան պետություններից ու կարևորագույն գործընկերներից մեկն է, որի հետ մեր նրկից ունի ավանդական ցերմ և քարիցացիական քաղաքական, ինչպես նաև գլուխակրական, մշակութային ու տնտեսական հարաբերություններ, իսկ հայկական մեծ զարգօջախի առկայության փաստը, նրա կարգավիճակը և նրկում տեղի ունեցող հասա-

բակալավրի-բարդարական գարզացումները ու դրանց հետևանքները շնչ կարող չմտահոգել նաև Հայաստանին և համայն հայությանը: Ուղիղ շարժման ուսումնասիրությունը կարևոր է նաև այն առումով, որ Հայն ալ Ասաղի իր կառավարման ամրոց շրջանում ընդգծված ջերմ վերաբեր մունք ուներ և նպաստավոր քաղաքականություն էր որին կրթ Սիրիայի և այ համայնքի նկատմամբ՝ բազմիցս նշեցով, որ «Սիրիան հայերի երկրու հայրենիքն է»:

Գրում ներկայացված է Սիրիայի ներքաղաքական և սոցիալ անտեսական իրավիճակը 1963 թ. Արաբական վերածննդի առջակատական կուսակցության իշխանության զարուց հետո մինչև ուղիղ շարժումը՝ 1970 թ.: Վերընդգույն են շարժման հիմնական և զիսավոր դրվագաւճաները՝ ներքաղաքական, սոցիալ-տնտեսական, կուսակցական-գույշակարախուսական, ինչպես նաև արտաքին քաղաքական շարժափենքը: Ներկայացված են շարժման հիմնադիր Հաֆեզ ալ Ասաղի նայացքներն ու քաղաքական ուղղությունը: Գրում ցուարանվում են նաև Հայն ալ Ասաղի օրոր նրկում իրականացված պետական կառավարման համակարգի քարեփոխումները և պետական ինստիտուտների կազմափորումը: Ուղիղ շարժման հիմնարար սկզբումըների վերընդուրյան հիման վրա գրցու փորձ է կատարվել նաև ամենուննակալ կերպով լուսարանելու Սիրիայի ներքաղաքական ու սոցիալ-տնտեսական գարզացումները, հետագութեալ շարժման քաղաքականության հետևանքով իրականացված ծնորրերումներն ու քացրողումները:

Թեման, ընդհանուր առմամբ, մեզանում դիմուս չի արժանացել հատուկ ուսումնասիրության: Սիրիայի 1970-ական թթ. պատմությանը, նրա առանձին խմբիներին, ներքաղաքական, արտաքին քաղաքական ու սոցիալ-տնտեսական որոշ գարզացումներին անդրադառնել են ինչպես հայ և խորհրդային, այնպիսի է արևմտյան, արաբական, երեսական հետինակները, սակայն դրանք որպես այդպիսին չեն ներկայացվել առանձին աշխատանքով: Որպես կանոն՝ հետազոտվող ժամանակաշրջանի ուսումնասիրությունները կատարվել են իհմնականում Սիրիայում ազգային-ազգատագրական պայքարի, Սիրիայի արտաքին քաղաքականությանը վերաբերու հարցերի, արաբա-խորայելյան նաևաճարության, «Մոտուման

եղբայրների» գործունեության, ինչպես նաև արարական աշխարհի և Մերձավոր Արևելքի ընդհանուր իշմանախոյիների լույսի ներքո:

Աշխատանքը գրելիս նեծապես օգտվել ենք հայերեն, ոռոսիրեն, արարերեն և անգլերեն լեզուներով սկզբնաբրյուրներից և հնտազուուրյուններից: Ուստինասիրության համար բավական օգտակար են եղել հայ, խորհրդային, ինչպես նաև ամերիկյան, արևմտավելյուսական, իրավա և արար հնտազուուրմերի՝ բնարկվող ժամանակաշրջանում Միջիայի պատմությանը. Արարական աշխարհի բաղարական և տնտեսական հիմնախնդիրներին, ինչպես նաև արարա-խորայելյան հակամարտությանը նվիրված մասնագիտական արժեքավոր աշխատությունները, եղակածները, եռշերն ու բաղարական գործիչների ելույթները:

Ուստինասիրության համար սկզբնաբրյուր են ծառայել ուղղիչ շարժման բաղարականությանն ու գաղափարախոսությանը նվիրված արարալեզու պաշտօնական փաստարդերն ու նյութերը<sup>2</sup>. 1970 թ. նոյեմբերի 16-ի հոչակագիրը, ուղղիչ շարժման ծրագիրը. Թասա կուսակցության համագումարների որոշումները, երկրի մշտական սահմանադրությունը, Ազգային առաջարիխական ճակատի կանոնադրությունը, որոշումները, ինչպես նաև Ասաղի ելույթները. Երասմարակային հայտարարությունները<sup>3</sup>:

نضال حزب أئمّة العرب الاشتراكي ١٩٤٣-١٩٧٥: دراسة تاريخية تحليلية موجزة « دمشق »، ١٩٨٢ . حزب أئمّة العرب الاشتراكي، القيادة القرمية، مكتب الشفالة والاعداد الحزبي، المؤتمرات القطرية لحزب أئمّة العرب الاشتراكي في القطر العربي السوري، الحركة التصحيحية المجيدة في الذكرة الخامسة والعشرين، دمشق، ١٩٩٥، الأحزاب السياسية في سوريا، بيروت، ١٩٥٤ . بيروت، ١٩٥٤.

بروف. عزيز الجبهة الوطنية التقديمية والتعددية السياسية في القطر العربي السوري، دمشق، ١ . ١٩٩٣ . نضال عقاش، المجالس الشعبية والتابعية في الوطن العربي، مجلس الشعب في السورية ١٩٨٨-١٩٢٨ ، دمشق، ١٩٨٨ . مجموعة خطب الفريق القائد حافظ الأسد، الكتاب الأول، ٢/٢٤، ١٩٧٠/٨/٣٠- ١٩٧١/٨/٣٠، اليمعة الشعبية الاجتماعية لترفيق الامين العام للحزب القائد حافظ الأسد، وثائق وحقائق، خطب وكلمات وتصريحات السيد الرئيس القائد حافظ الأسد.

Կարևոր աղջյուր են ծառայել նաև արաբական տարրեր պարբերականները, իմանականում Սիրիայի, Եգիպտոսի, Լիբանանի և արաբական մյուս երկրների նամուլը, որտեղից հարկ է նշել «ալ-Բաաս», «Թիջրին», «աս-Սաուդա», «ալ-Ալիքամ», «ամ-Նահար», «ամ-Նահար ալ-Արաբի վա ալ-Դուալի», «ալ-Անուար», «ալ-Հայար», «Սիրալ աշ-Շաար», «ալ-Ալիքար» և այլն<sup>4</sup>:

Թեև հետազոտվող ժամանակահատվածում, եթք Սիրիայում գոյություն ուներ գրաբննուրյուն մի շարք օրյեկտիվ և սուրյեկտիվ պատճառներով, և ուսումնաշիրվող թշմայի վերաբերյալ սիրիական գրականուրյունը Փիջու չէ, որ աշքի է ընկնում անհրաժեշտ օրյեկտիվուրյամբ, այդուհանդեռձ, հեղինակը փորձել է հնարավորինս օգտագործել սիրիական պաշտօնական փաստաքրթերը, տեղեկատու գրականուրյան նյութերն ու սիրիական հեղինակների աշխատուրյունները։ Սիրիացի հեղինակներից ուսումնասիրուրյանց նպաստել են Ռիյազ Առաջ Առվեյմանի, Խալիֆ Հանիի, Հիշան Մուքավալիի, Հաննա աշ-Խուրիի, Սաֆեան Կուրդիի, Աննա Կառումանի, Խարամին Լուկայի և այլոց աշխատուրյունները<sup>4</sup>։

دمشق، ١٩٨٤، مجموعة الخطب للرئيس والامين حافظ الأسد، الكتاب الاول، دمشق، ١٩٩٣،  
دستور الجمهورية العربية السورية الصادر بالمرسوم رقم ٢٠٨ تاريخ ١٢-٣-١٩٧٣.  
البعث، دمشق، تشرين، دمشق، الثورة، دمشق، النجاح، بيروت، التحار، العربي والدولي،  
باريس، تحالف الشعب، دمشق، الحياة، بيروت، الأنوار، بيروت، الأخبار، القاهرة.  
زياد سليمان عواد، حافظ الأسد وتجربة الجبهة الوطنية التقديمة في سوريا، دمشق، ١٩٩٢،  
زياد سليمان عواد، هاني شعاعة الخوري، القائد المفكّر حافظ الأسد والمشروع التنموي  
الحضاري، دمشق، ٢٠٠٠، صفحات درسي، أبطال وأئمّة، قراءة في فكر الرئيس حافظ الأسد  
أكاديمي، الطبعة الأولى، دمشق، ١٩٨٤، هاني خليل، حافظ الأسد، الآيديولوجية الثورية والفكر  
أكاديمي، الطبعة الثانية، دمشق، ١٩٨٧، هشام متولي، أبحاث في الاتصال السياسي وأنصاري  
دمشق ١٩٧٤، إسكندر لوكا، جولة في فكر القائد حافظ الأسد، قيم فكرية انسانية، دمشق، ١٩٨٧،  
أحمد قرقنة، حافظ الأسد، صانع تاريخ الأمة وبناني مجد الوطن، المجلدات الخمسة، حلبي - بيروت.

Հարկ է նշել նաև սիրիացի հեղինակների՝ Մասկվայում ուսուերեն լեզվով իրատարակված ուսումնասիրությունները, որոնցից կարելի է առանձնացնել Սուհամմադ ալ-Հարթիի, Սալե Այութի, Հուդա Արտ Տարիի և ստագուուրյունները<sup>6</sup>:

Ուսումնասիրության համար օգտակար են նոյն հատկապես հայ և խորհրդային արևելագետների արժեքավոր աշխատությունները, Մերձավոր Արևելյան երկրների ներքին և արտաքին քաղաքականությանը, տարածաշրջանային քաղաքական և տնտեսական հիմնահարթերին, ինչպես նաև արարա-խրայնյան հակամարտությանը նվիրված մենագործություններն ու հողվածները, որոնցից անհրաժեշտ է առանձնացնել Գ. Միրզիի, Ե. Դմիտրիևի, Ե. Պրիմակովի, Վ. Վավիլովի աշխատությունները<sup>7</sup>: Օգտակար են նոյն նաև նաև Վ. Վիկուրովի, Ե. Փիր-Բույալովայի, Ս. Խվանովի, Վ. Ախմետովի, Ա. Ֆիլոնիկի գրքերն ու հողվածները<sup>8</sup>: Հայ արարագետներից անհրաժեշտ է առանձնացնել Ն. Հովհաննիսյանի արժեքավոր

<sup>6</sup> Аль-Харрири Мухаммад, Налоговое законодательство и практика уклонения от налогов в Египте и Сирии, в сб. Страны Ближнего Востока (актуальные проблемы современности и истории). Москва, 1998. Айюби Сакр, Структура и основные направления внешних экономических связей Сирии (70-е – начало 90-х годов), в сб. Страны Ближнего Востока (актуальные проблемы современности и истории). Москва, 1998. Худа Абу-Табих, Особенности социально-экономического развития Сирии в период подготовки реформ, Арабский сборник: выпуск второй, Москва, 2000, его же Исправительное движение и опыт либерализации сирийской экономики, Арабский сборник: выпуск второй, Москва, 2000.

<sup>7</sup> Мирзий Г., Армия и политика в странах Азии и Африки, М., 1970, его же, Третий мир. Общество, власть, армия, М., 1976, его же, Роль армии в политической жизни стран "третьего мира", М., 1989. Дмитриев Е. Палестинский узел: к вопросу об урегулировании палестинской проблемы, М., 1978, Примаков Е. История одного слова: ближневосточная политика США в 70-е начале 80-х годов, Москва, 1985, его же, Анатомия ближневосточного конфликта, М., 1978, Вавилов В. В., Социально-экономические преобразования в Сирии (1946–1970 гг.), Москва, 1972.

<sup>8</sup> Викторов В. П., Экономика современной Сирии. (проблемы и перспективы), Москва, 1968, Пир-Будагова Э. П., Сирия в борьбе за упрочение национальной независимости (1945–1966), М., 1978. Пир-Будагова Э. П., Концепции "Арабского социализма" в идеологии Партии Арабского Социалистического Возрождения Сирии (ПАСВ), в кн. Проблемы современной советской арабистики I: современные политические и социально-экономические проблемы Арабских стран, Ереван, 1988. Пир-Будагова Э., Итоги внутри и внешнеполитического развития Сирии к концу 80-х гг., Специальный бюллетень № 2 (273), Москва, 1991. Иванов С. А., Межарабская политика Сирии, Том 1, Москва, 1986. Ахмедов В. Современная Сирия: промышленность, рабочий класс, профсоюзы, Москва, 1991, Филиппик А. Аграрные проблемы современной Сирии, М., 1981, его же, Некоторые итоги эволюции социальной структуры Сирии, Специальный бюллетень № 2 (273), Москва, 1991.

աշխատությունները, որոնք շատ օգտակար են եղել սույն գիրքը գրելիս<sup>9</sup>: Հայ հետազոտողներից հարկ է նշել նաև Շ. Կարամանուլյանի, Հ. Գրիգորյանի, Պ. Սարաջյանի, Ռ. Կարապետյանի ուսումնասիրությունները<sup>10</sup>:

Արևմտյան և հրեա հետազոտողներից հարկ նոց համարում նշել Վ. Թվանդուի, Պ. Սիլի, Մ. Մառզի ուսումնասիրությունները<sup>11</sup>, արժանի են հիշատակին նաև Զ. Դեկլինի, Մ. Թերքի, Ն. Վան-Դամի, Յու. Շորիշի, Ֆ. Ազամի հետազոտությունները<sup>12</sup>:

Աշխատանքի համար ոչ երերորդական նշանակություն են ունեցել նաև խորերդային, ամերիկյան և արևմտահյուսական մանուկան Միրիամ Վերաբերյալ տեղ գտած հրապարակումներն ու հոդվածները, ինչպես

<sup>9</sup> Հովհաննեսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Ա., Սիրիան անբախտության համար մրգն պայքարում (1917–1946 թ.), Երևան, 1975; Հովհաննեսյան Ն. Հ. Երանեալի լինչելու և Շրամական հայ համայնքի գիրքորչություն (1975–1982), Երևան, 1982; Օլառսկ Հ. Ա. Օտնությունները և պատմությունները Արաբական արևմտյան ազգական պատմությունների մասին (1918–2005 թ.), հ. IV, Երևան, 2007:

<sup>10</sup> Կարամանուլյան Շ. Ա. Արարական պատությունների լիզայի դիրք արարական օրենքների հակաֆիզիքականական պայմանն, Երևան, 1988; Գրիգորյան Շ. Ա. Պոզիտիվ և Բնութագութական կոնֆերանսում (1989), Երևան, 1989, այս ու Պոզիտիվ և ազատական պատմությունների համար ՍԱՀ և Արևմտաաօստանում կրիզուս (1967–1970 թ.), Երևան, 1984; Սարգսյան Պ. Ա. 1973 թ. պատահ-լուրջավայր պատկանած և պարագան առաջարկման ուժի ուժը ուղղությունը, Մերձական և Արևի Արևելքի երկրներ և ժողովություններ, IX համար, Արարական երեքներ, Երևան, 1978, առյօն, Արարական Արևելքի կումբիուլանի կուսակցությունների և առաջադիմական ուժի ուղղությունը պատճենահանական պատճենահանական վերափոխությունների համար, Երևան, 1986, այս ու Ակտանան գետեղությունների համար, Երևան, 1986; Ա. Ի. Ալիքանյան և այլ աշխատանքները Սիրիա և Արաբական պատմությունների համար, Երևան, 1987:

<sup>11</sup> Quandt W., Decade of Decision: American Policy toward the Arab-Israeli Conflict 1967–1976, Berkeley, 1977.; Seale Patrick, Assad and the Struggle for the Middle East. London, 1988; Ma'oz Moshe, Assad, The Sphinx of Damascus: A Political Biography. Weidenfeld and Nicolson, London, 1988.; Ma'oz Moshe. The Emergence of Modern Syria, Syria under Assad: Domestic Constraints and Regional Risks. Edited by Moshe Ma'oz and Avner Yaniv. Croom Helm, London and Sydney, 1987.

<sup>12</sup> Devlin F. John. Syria: Modern State in an Ancient Land. Boulder, Colorado, 1983.; Kett Malkolen, Hafiz al-Assad and the Changing Patterns of Syrian Politics, International Journal, 28 (4) 1975.; Van Dam Nicoletos, The Struggle for Power in Syria: Sectarianism, Regionalism and Tribalism in Politics 1961–1978, Croom Helm, London – New York, 1979.; Choucri Youssef. State and Society in Syria and Lebanon. St. Martin's Press, New York, 1994.; Ajami Fouad, Geopolitical Illusions, The Middle East and the Western Alliance, Edited by Steven L. Spiegel, London, George Alles and Unwin, 1982.

նաև նախագահ Ասադի հետ կայացած հարցազրույցները, որոնցից կարենի է առանձնազնել «Պրավիդա», «Ժամանակա», «Անժունարույնայս Ժիզմ», «Ազիյա» ի աֆրիկա սեփանյան, «Միջուկայա էկոնոմիկա» ի մեծության արողների օտնոշներիա», «Միջլ Խառ ջորմալ», «Յորին ընկերութ», «Զորնալ օֆ փակեարայն սրայիս», «Միջլ Խառ ենդ Նորք Ազրիկա», «Նյու Յորք բայմ», «Վաշինգտոն փուլու», «Յայնենցլ բայմ», «Թայմս», «Նյու Յուուլիկ» պարբերականները<sup>12</sup>.

Գրքում արծարծվող խնդիրները, փաստերն ու տվյալները կարող են օգտագործվել Սիրիայի նորագույն շրջանի պատմությունն ուսումնասիրությունի կողմից, ինչպես նաև Սիրիայի և ընդհանրապես Սերծավոր Արևելքի քաղաքական գործընթացներին, տվյալ ժամանակաշրջանի քաղաքականության պատմության հիմնախնդիրներին նվիրված դասընթացներում կամ ուսումնասիրություններում: Ուղղիչ շարժման լույսի ներք տեղի ունեցած Սիրիայի կարևորագույն իրադարձությունների լուսաբանումը կարող է օգտակար լինել նաև Սիրիայի Արարական Հանրապետության նկատմամբ Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության որոշ նույնացուներ նշակեցն տնօսանելունից:

<sup>12</sup> «Правда», «Известия», «Международная жизнь», «Азия и Африка сегодня», «Мировая экономика и международные отношения», «Middle East Journal», «Foreign Affairs», «The Journal of Palestine Studies», «The Middle East and North Africa», «The New York Times», «The Washington Post», «Financial Times», «The Times», «Newsweek».

**ԳԼՈՒԽ I  
ՈՒՂԱԿ ԾԱՐԺՄԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄ, ԷՌԻԹՅՈՒՆ ԵՎ  
ԾՐԱԳՐԱՑԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

**1.1. Ներքաղաքական և տօնիալ-տնտեսական իրադրույթն Սիրիայում  
1963-1970 թթ.**

1963 թ. մարտի 8-ին Սիրիայում տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում, որի հետևանքով երկրու իշխանության նկազ Արաքական վերածննդի տոցիալիստական կուսակցությունը (կրօնակ' Բաաս, որը, արաքերենից բարգանաբար նշանակում է «վերածննդուր»)<sup>14</sup>: Ընեւ Բաասը անմիջական մասնակցության շահնեցավ հեղաշրջման կազմակերպման գործում, տակայն դարձավ ճիակ ոչ ռազմական խմբավորումը, որին ոյմեց հեղաշրջման կազմակերպիչ, գեներալ մայոր Ջիյադ Հարիրին՝ կառավարություն կազմելու առաջարկությամբ: Այդ ժամանակաշրջանում Սիրիայի ճյուս բաղադրական խմբավորումներն ու կուսակցություններն անկիմումակ էին և հեղինակազրկված ժողովրդի շրջանում: Մարտի 24-ին օրենսդիր և գործադիր իշխանությունը հանձնվեց «Հեղափոխական երանանատարության

<sup>14</sup> Արաքական վեցածննդի կուսակցության հեմքը դրվե էր 1940 թ. Սիրիայում ստացվելու Սիւն Աշխամի և Սաւան առ Հին Թիսաքի կողմէն: Նույ պաշտօնական հիմնարքման օրը համարվում է 1947 թ. ապրիլ 7-ը, եթ անել ունեցավ կուսակցության առաջին հիմնությի համագումարը: Նոր միմնական կազմակերպություն էր՝ «այսանություն, ազատություն, աշխատիք»: 1952 թ. նոյեմբերին ժամանակվեց 1950 թ. Արաքա Հարիրիի կողմէ հիմնացուցած Արաքական ստացածառական կուսակցության ներ' վերանայեց Արաքական վերածննդի ստացածառական կուսակցություն: Արեւ 1949-1950 թթ. ստուդիոցին կուսակցության առաջնանական նրանու նրացու, Հարզմանակու և Լիքամանու: 1954 թ. Համակարգության առաջնանական նրանու նամազօպային կամ համարական դիկայարքությունը՝ Նազմակերպական առողջության կուսակցության դիկայարքությունը բաժանվում է նրանունային և համագումարային: Կուսակցության կամնապետության նախանձու Եղիշանասային դիկայարքությունը իրականացնում է կուսակցական գործունեությունը տվյալ երկին շրջանակներում, ինչ համագումարի դիկայարքությունը մշակում է կուսակցության ընթանուր առաջավարությունը և կույսն է նկրույթում իրականացնել եղիշանասային դիկայարքությունների գործունակյան, ինչպես նաև կուսակցության կողմէ նըրանված որոշումների կառավագան վեա: Սիրիայի և Իրաքի միջև կուսակցական դրու տարածայնությունների և մրգակցության պատճառով գոյություն ունենալ երկու նամազօպային դիկայարքության՝ միբական և իրարյա:

յան ազգային խորհրդին (ՀՀԱՆ), որի նախագահ և սիրիական քանակի հրամանատար նշանակվեց գեներալ-լեյտենանտ Լուի աղ Արասին: Մայիսի 9-ին Բաաս կուսակցության ղեկավարներից մեկի՝ Սալահ աղ Դին Շիրարի զիւտվորությամբ կազմվեց նոր կառավարություն, որի մեջ մտած 20 նախարարներից 10-ը Բաաս կուսակցության անդամներ էին: Հարկ է նշել, որ բաասականների իշխանության գլուխ անցնելը Սիրիայում շողեցվեց այնպիսի սանձարձակ քույրյումներով, ինչպես Խրաբում, սակայն այստեղ ևս կատարվեցին քազմարիվ ձերքակալություններ, արգելվեցին բոլոր հանրահավաքներն ու ցույցները, և հետապնդումների ներարկվեցին գործող մի շարք կուսակցությունների անդամները<sup>15</sup>:

Իշխանության գալուց հետո Բաասը ժողովրդի շրջանում հեղինակության պակասը փորձում էր ցացնել միջարարական առարկեզրում ակտով քաղաքականություն վարելով և արարական երկրների հետ միավորամբ իրականացնան կազմակերպելով: Հառեկապն նգիպուսի հետ հարաբերությունները քարենավելու նպատակով ձերքակալվեցին մի քանի քաղաքական գործիչներ և սպաններ, որոնք մեղադրվում էին 1961 թ. Եգիպտոսից Սիրիայի ամջաւումը կազմակերպելու մեջ: Նրանցից ոճանք զրկվեցին քաղաքական գործունեություն ծավալելու իրավունքներից<sup>16</sup>: Բաասականները քայլեր կիմ ճնշոնարկում նաև քանակի սպայական կազմը քաասականներով համալրելու ուղղությամբ՝ քանակում ամեու հենարան ապահովեցին նապատակով: 1963 թ. ապրիլի վերջներին սիրիական քանակից հեռացվեցին 47 յունինշառ սպաններ, որոնք անմիջապես փոխարինվեցին քաասական սպաններով<sup>17</sup>: Դրա հետևանքով Սիրիայում շշին դադարում յտնիութաւնների ելույթները, որոնք վերականորեն պահանջում էին վերականգնել քանակից հեռացված սպաններին և անհապաղ կիրառել Արաքական Սիրաց-

<sup>15</sup> Մասրաւան տես Է. Պ. Փիք-Ռուսարվա, Թագավարական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970 թթ.), Սերծագոր և Միջն Արևելքի երկրներ և ժողովրդություններ IX, Արաքական երկրներ, Երևան, 1978, էջ 41-42:

<sup>16</sup> Chronology of Arab politics, 1963, v. 1, No 2, p. 139-140, է. Պ. Փիք-Ռուսարվա, Թագավարական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում, էջ 47:

<sup>17</sup> The Middle East. A Survey and Directory, 1963, p. 370, K.S. Abu Jaber, The Arab Ba'th, p. 71, դաւ Է. Պ. Փիք-Ռուսարվա, Թագավարական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում, էջ 48:

յալ Հանրապետության (ԱՄՀ) հետ մխառլով վերաբերյալ որոշումները: Բանակում ուժիւացավ պայքարը մի կողմից պաշտպանության նախարար և զինավոր շտաբի պետ գեներալ Զիյադ Հարիրիի, իսկ մյուս կողմից՝ բանական սպաների միջև, որտես գրախ կանգնած էր վարչապետի տեղակալ և ներքին գործերի նախարար Ամին Հաֆեզը<sup>18</sup>:

1963 թ. հուլիսի 9-ին ՀՀԱԽ-ը Հարիրիին ազատեց պաշտպանության նախարարի և զինավոր շտաբի պետի պաշտոններից և նրա գոյացած նշանակեց Ամին Հաֆեզին: Հուլիսի 27-ին Ամին Հաֆեզը նշանակվեց նաև ՀՀԱԽ-ի նախագահ և սերժական բանակի զինավոր հրամանատար: Նա պահպանեց նաև նախարարների խորհրդի տեղակալի, ներքին գործերի նախարարի պաշտոնները: Այսպիսով նրանուն փաստացի ամբողջ իշխանությունն անցավ Ամին Հաֆեզին:

Այդուհանդեռ շուտով սուր տարածայնություններ երևան եկան ՀՀԱԽ-ի ներսում, որտեղ ուժիւ պայքար ծավալվեց Ամին Հաֆեզի և նրա տեղակալ Մուհամմադ Ռամրամի միջև<sup>19</sup>: Թասախ ներսում նետզինտ ուժեղանում էին ճախակողման տարրերը, որոնք պահանջում էին նրանուն իրականացնել սոցիալ-տնտեսական վերափոխություններ: 1963 թ. հունիսի 23-ի դեկտեմբեր որոշ փոփոխություններ մտցվեցին ազգարային բարեփոխման վերաբերյալ օրենքի մեջ: Զգայի բախում կրօնաւովց նորատիւրյան առավելագույն շափուց: 1963 թ. նույնամերժերին փոփոխության ենթարկվեց «Ազրարային եարաքերպություն» կազմակերպման նախն օրենքը<sup>20</sup>: Կառավարությունն ազգային կասխտավի արտասահման արտահոսքի կապակցությամբ փորձեց իր ձեռքը վերցնել երկրի ֆինանսավարկային եանձակարգի վերահսկողությունը: 1963 թ. մայիսին ազգային վեցին երկրի բոլոր նախավոր բանկերն ու ապահովագրական ընկերությունները: Միաժամանակ վերահսկողություն սահմանվեց տարապարանային գործառնությունների վրա, և փակվեց ազատ տարապարանային շու-

<sup>18</sup>Տե՛ս Պ. Փիր-Շավարչյան, Բարերարակ և ազիակ-տնտեսական վերափոխություններ Ալիբայուն, էջ 51-52:

<sup>19</sup>Г. Мирский, Развитие событий в кризисном мире, Новое время, 1965, № 6, с. 3.

<sup>20</sup>Մանուկյան տե՛ս Վ. Պ. Վիկորով, Էկономика современной Средней Азии (и ее перспективы), М., 1968, с. 105.



կամ<sup>21</sup>: Այդուհանդեմ նրկում իրադրությունը չեր բարելավվում, և շաբաթականը էր գործազրկության աճը, ավելի քան 100 հազար սիրիացիներ աշխատանք փնտրելու համար հեռացան նրկից<sup>22</sup>:

1963 թ. նոյեմբերի 12-ին Սալահ Ռիբարը հրաժարական տվեց: Մեծ մասամբ ծախրաասականներից բաղկացած նոր կառավարությունը զիսավորեց Ամին Հաֆեզը: Ըստով Մուհամմադ Ռուբանի և Ամին Հաֆեզի միջև բացահայտ պայքար սկսվեց: Վերջինս վարում էր տարրեր բարձրական ուժերի հաշտեցման բաղարականություն: Նա բանտից ազատ արձակեց նախկին նախագահ Նավլի Կուզիմին, նախկին նախարարների խորհրդի նախագահ Խալեն Ազրմին և որիշների: Դնկունմքներին Ամին Հաֆեզը հրամանագիր հրապարակեց բոլոր բարյանտարկացներին ներում շնորհելու մասին, իսկ Ռուբանը հանդես էր գալիս Հաֆեզի նմանօրինակ բարդարականության դեմ: Նա պահանջում էր պայքարել ծախրաասականների և նրանց համախոն ուժերի դեմ<sup>23</sup>:

1964 թ. կեսերին Սիրիայում ցնուրեց նախագահական խորհրդը, որի նախագահ դարձավ Ամին Հաֆեզը, Սալահ Ռիբարն ու Մուհամմադ Ռուբանը՝ տեղականներ, և Թասաս կուսակցության ներկու ներկայացուցիչներ՝ Նոր աղ-Նիմ աղ-Արասին և Մամուռ աղ-Արրաջը՝ որպիս անդամներ՝<sup>24</sup>, որից հետո Սալահ Ռիբարի զիսավորությանը կազմվեց նոր կառավարություն, որը բաղկացած էր հիմնականության բառականներից:

Կոսակցության ճախ ուժերին որոշ զիջումներ անելով հանդեմ բարասի դեկանարությունը միաժամանակ ձգուում էր սերու համազործակցություն հաստատելու Սիրիայի մեծահարութառների և խոշոր ծեսնարկատերների հետ՝ գտնելով, որ տմտեսության գարգացման զիսավոր միջոցը մասնավոր հնչան ազգային, այնպիս էլ օտարերկրյաց) կապիտալի ներգրավումն է: Ժողովրդին ուղղված իր դիմումներում թասափ դեկանա-

<sup>21</sup> А. В. Вавилов, Характер социально-экономических преобразований в Сирии, Проблемы экономики и истории стран Ближнего и Среднего Востока, М., 1966, с. 51.

<sup>22</sup> Է. Պ. Փիր-Բուլազրի, Ց24, աշխ., էջ 56:

<sup>23</sup> Г. Мирский, Развитие событий в Арабском мире, Новое Время, 1965, № 6, с. 5.

<sup>24</sup> The Middle East and North Africa, 1965-1966, London, 1966, p. 567.

բորյումը բոլոր խավերի գաղափարական և ազգային նիստնության կող էր անում<sup>25</sup>:

Օգտագործելով տնտեսական ոլորտում իր դիրքը՝ գործարար շրջանակները հույս ունեին ստիլիզի քառական կառավարությանը՝ դիմելու զգայի քաղաքական գիշումների, այդ թվում համաձայնիվ որոշ գործարարների ներտուզ կառավարության կազմի մեջ: Պատճառաբանելով կառավարության ոչ քարենապատ քաղաքականությունը՝ նրանց իրաժարվում էին երկրի ներտուզ կապիտալ ներդրումներից: 1964 թ. սկզբներին մի շարք ձեռնարկատերներ, փաստարկելով առկա դժվարություններն ու միջոցների քացակայությունն, սկսեցին վակել իրենց ձեռնարկությունները կամ էլ կրօնատել արտադրությունը, իսկ իրենց շահույթներն փոխադրել արտասահման: Միայն 1963–1964 թթ. Սիրիայից արտասահման էր փոխանցվել 800 մեծ սիրիական լիրա<sup>26</sup>:

Սիրիայում հետզինեան սրվում էին հարաբերությունները Թաասի աջ դեկաֆարների և քանակի միջև, որտեղ որոշ սպաներ, պաշտպանության գոտիներում Թաասի ձախ թիվ կողմից, վճռականորեն պահանջում էին շուրջ միջոցներ ձեռնարկել երկրի տնտեսական ոլորտումն իրենց գաղափարախուսության ու ծրագրերին համապատասխանեցնելու ուղղությամբ: Ուժութացող ներկուածքական պայքարը հանգեցրեց Թաասի ձախ թիվ դիրքերի ամբողջմանը: Միշել Աշխակը հարկադրված եղավ իրաժարվել կոսակցության համարարական դեկաֆարության զիսավոր քարտուղարի պաշտոնից, որը գրադարձրեց Մումիք առ-Շազզապը, իսկ Թաասի սիրիական մարզային դեկաֆարության զիսավոր քարտուղար դարձավ գեներալ Ամին Հաֆեզը: Կոսակցության դեկաֆարության մեջ նաև մի շարք քաղաքացիության ձախ քառականներ՝ Նոր ար-Դիմ ար-Արտսիմ, Յուսեֆ Զոււյնը, Խըրահիմ Մախտուր և այլոր: Սիրիական մարզային դեկաֆարությունում սկսեց վճռական դեր խարազ կոսակցության ձախ թիվ<sup>27</sup>: Երկրի նոր

<sup>25</sup> Ю. Островитянов, Прошлое и настоящее национального социализма партии Бас, в сб. Мировая экономика и международные отношения, 1966, № 1, с.47.

<sup>26</sup> 1965/1/77، البعث، دمشق.

<sup>27</sup> ٥٤٣-٦٧١، ملحوظات ألمانية، جزء ٢، ت. ٢، دار مصر-برلين، ١٩٦٠، ص 63:

նախարարների խորհրդի նախագահ դարձավ կրկին Ամին Հաֆեզը, որը սկսեց իրականացնել սոցիալ-տնտեսակամ վերափոխումներ, ինչպես նաև տարրեր ծեռնարկությունների և ընկերությունների ազգայնացման քաղաքականություն: 1964 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 113 դևերնուով Սիրիայում ազգայնացվեց նավը և մյուս օգտակար համաձուները: Արգելվեց օւստրերկրյա ընկերությունների և անհատների կողմից դրանց շահագործումը: Սիրիան ձեռնամուխ եղանէ նաև ազգային արդյունաբերության ստեղծմանը և իր սեփական միջոցներով երկրի բնական հարստությունների օգտագործմանը, որն ուներ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական մնացանակություն<sup>28</sup>: Սիրիա-լիբանանյան տահմանի վրա ուժեղացվեց մաքսային հակողությունը, որպեսզի բույլ չտրվի ազգայնացված ձեռնարկությունների կապիտալի արտահանումը: Այս ամենը հանգեցրեց նրան, որ Սիրիայում սկսեցին բորբոքվել հակակառավարական տրամադրություններ, հատկապես սումնի<sup>29</sup> հոգևորականների կողմից, որոնք, փաստորեն, հանդես էին գալիս մնամարտուստ սումնիների անոնից: 1965 թ. հունվարի 22-ին «Խամասկզոսի Օմայանների, ինչպես նաև այլ ճգկիրներում քաղաքական քարոզներ ինչեցին. հոգևորականությունը դատապարտուեց կառավարության քայլիքն ազգայնացման ուղղությամբ և ժողովրդին «սրբազն պատրաստման» ջիհատի կոչ արեց ընդեմ կառավարության: Սումնի հարստու սումնարականների նվիրատվությունների միջոցով ստեղծվեցին, այսպիս կոչված, «Մուհամմադի ջոկատները», որոնք դեկավարվում էին կրոնաքաղաքական «Մուսավան Ներայիններ» կազմակերպության ներկայացուցիչների կողմից<sup>30</sup>.

1965 թ. դեկտեմբերին ներկուսակցական պայքարը սուր ճգնաժամի բնույթ ընտրություն: «Խեկտեմբերի 21-ին Ամին Հաֆեզը, օգտակար կուսակցության համարարական դեկավարության աջակցությունից, հայտարարեց Բաաս կուսակցության սիրիական նարզային դեկավարության գրման

<sup>28</sup> О. Волгин. На переднем крае борьбы, Азия и Африка сегодня № 6 1988, с. 13. Азия и Африка сегодня, № 1, 1969, с. 35. В. П. Викторов, Экономика современной Сирии, (проблемы и перспективы) М., 1968, с. 60.

<sup>29</sup> Սումնիականությունների խօսք ուղարկած է, որի մեջամտման առաջացնելու համար պահպանային՝ սումնայի անոնի:

<sup>30</sup> Новейшая история арабских стран, М., 1968, с. 85.

մասին<sup>31</sup>: Փոխվեց նաև գործադիր իշխանությունը, նախարարների խորհրդի նոր նախագահ դարձավ կրկին Սալահ Ռիբարը: Նա վարում էր ճախրաստականներին քաղաքական հենարանից զրկելու և նրանց դիմություն բացնելու քաղաքականություն: Նույնը կատարվում էր նաև բանակոմ:

Այս ամենը հանգեցրեց նրան, որ 1966 թ. փետրվարի 23-ին Սիրիայի Արարական վերածննդի սոցիալիստական կուսակցության ձախ ուժերը իրազրծնեցին ռազմական հեղաշրջում և երկրի զեկյավարությունից հեռացրեցին Բառա կուսակցության հիմնադիրներ Միջեւ Աշյակին, Սալահ առ-Դին Ռիբարին, Մունիֆ առ-Շազզապին և նրանց կողմնակիցներին: Չեղյալ հայտարարվեց Ժամանակավոր սահմանադրությունը, ցըսեց Հեղափոխական իրամանատարության աօգային խորհրդը: Սիրիայի նախագահ Եշամակին Նոր առ-Դին ալ-Արասին, իսկ իրական իշխանությունն իր ծեռորության կենտրոնացրեց Բառա կուսակցության երկրամասային կազմակերպության գլխավոր քարտուղար Սալահ Զայդին: 1966 թ. սնապահմաբեր-հոկտեմբերի ամիսներին Դամասկոսում իրավերպած Բառասի նախագային համագումարում Մ. Աշյակիը, Ս. Ռիբարը և Մ. Շազզապը ընդհամարապն հետացվեցին կուսակցությունից այն բանից հետո, եթե վորդեցին կազմակերպել հակակառավարական դավադրություն<sup>32</sup>: Խշխանության գալուց անմիջապես հետո ճախրաստականները հայտարարեցին սոցիալ-տնտեսական քարեփոխումներ անցկացնելու իրենց մռայրության մասին: Սակայն արագորեն իրականացվող այդ գրանիդիտումներին ավելի խորացրին տնտեսական զգմաժամը երկրում, քանի որ կառավարության կողմից հաշվի չէին առնվուն երկրի տնտեսական կարողություններին ու պետության մասնակցությամբ արշունքի հասնելու հնարակությունները: Պետական անհախալիքն իմկողության սահմանումը երկրի տնտեսության վրա համգեցրեց պետական միջոցների ոչ այնքան նպատակառության և անարդյունավետ օգտագործմանը: Արշունքում իրավ բնակչության կենսամակարդակը, ամեց գործազրկների թիվը, երկրում նկատվում էր բայն սպառողական ապրանքների պակաս, իսկ ուներ

<sup>31</sup> 1965/12/22

<sup>32</sup> Le Monde, Paris, November 11, 1967.

խավին աստիճանաբար լրաց էր հայրենիքը՝ բնակչանարար իր հետ տանելով զգալի կապիտալ միջոցներ՝<sup>33</sup>: Անգլիացի գիտնական Սիլը նշում էր, որ ծախրասասական Միդլդան պեննինյան տիպի պետություն էր, և հասարակությունը բաժանված էր «քարեկանների» և «օքնամինների»<sup>34</sup>:

Օգտվելով բնակչության դժգոհությունից՝ 1966 թ. ընթացքում կառավարության դեմ մի շարք անհաջող դրավագրություններ կազմակերպեցին աջ բաասականները, միաժամանակ բավականին սրվել էր իրադրությունը սիրիա-խրայելական սահմանում, որտեղ հաճախակի կիմ դարձել գինված ընդհարությունները:

1967 թ. հունիսի 5-ին սկսված և վեց օր տևած արարա-խրաելյան պատերազմի ընթացքում Խարացյալն հաջողվեց գրավել արարական երկրներին պատկանող ընդարձակ տարածքներ՝ մոտ 60 հազ. քառ. կմ: Խարացյալ Արարական Միացյալ Հանրապետությունից<sup>35</sup> զավեց Սիմայի թերակղզին՝ դուրս գալով Սուեզի ջրանցքի արևելյան ափը, Հորդանանից Հորդանան գետի արևմտյան ափը, այդ բվեմ Ելուսաղմի արարական հաստվածը, ինչպես նաև Սիրիային պատկանող Գուանի բարձումքները<sup>36</sup> և նրա վարչական կենտրոն ալ-Կումեյտքան՝ կանգ առնելով Դամասկոսից ընդամենը 40 կմ հեռավորության վրա<sup>37</sup>: Պատերազմից անմիջապես հետո Սիրիան խզեց դիվանագիտական հարաբերությունները Միացյալ

<sup>33</sup> باترك سيل، صرائع على الشرق الأوسط دمشق، ص. ۱۷۸.

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 179:

<sup>35</sup> Այժմ Եղիպատոսի Արարական Հանրապետություն:

<sup>36</sup> Մինչև 1967 թ. սրտերազմը Գեղամի բարձումքները (տարածք՝ մոտ 1800 կմ<sup>2</sup>) ապրում էր 153 հզ. մարզ: 1968 թ. Գուանուն անդաբենկմենից մասն էր ընդամենը 7 հազար մարզ, որոնց մեծամասնությունը դրագմեր էին: Բացի նրանից, որ Գեղամի բարձումքները կարմրագույն ուսումնաբարձր շրջաններ էին, դամբ նույն ջրել մեջ պաշարներ ունեն: Տարիներ անդամաները այստեղ հասնում են 1,2 մըր մ<sup>3</sup>: Գուանուն նրանմերը կատարելին 6 ըրաբրաբեր է: 1968 թ. Գեղամի բարձումքներուն հաշվով էմ 32 երեսական բնակչության գույնը էր բարաբարությունը և ստուգավ Խարայի բարպարագելություն:

<sup>37</sup> Г. С. Никитина, Государство Израиль, М., 1968, с. 386.

Նախաճաշմերի, Անգլիայի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության հետ<sup>28</sup>:

Անհաջողաբարյունը «վեցօրյա պատերազմում» խիստ քննադրատական պրատահայությունների տեղիք տվեց Սիրիայի և Եղիպատոսի վարչակարգերի հասցեին ոչ միայն այլ երկրների ներսում, այլև ամբողջ արարական աշխարհում։ Որոշ քննադրատներ նույնիսկ պարտության միմնական պատճառը տեսնում էին Սիրիայում և Եղիպատոսի անցկացվող տոփակ-տնտեսական վերափոխությունների մեջ<sup>29</sup>։ Պատերազմը հակայական վճառ պատճառուն Սիրիայի տնտեսությամբ ու ենթակառուցվածքներին, երկիր կրեց զգայի նարուկային և նյութական կողուստներ։

Արարա-խրայեցան Յ-րդ պատերազմին ու նրա հետևանքները շափականց խորացրին նաև Սիրիայի ներքաղաքական առանց այլ էլ անկայում իրադրությունը։ Բառս կուտակցությունը հետզինուն կորցնում էր իր հեղինակությունը և հենարանը թի՛ քանակում, թի՛ հասարակությունում։ Վեցօրյա պատերազմի հետևանքները ակնհայտորեն վեր համեցին վարչակարգի լորջ քաղաքական և տնտեսական քնրությունները և 1966 թվականից հետու Սիրիայի պիտուական-քաղաքական զարգացման հակառակությունները։ 1968 թ. Սիրիայում կառավարությունը գալուրաւական պատճենությունների դեմ (որունց առաջնորդը էր Սալահ Զադիլը) ձևավորեց ընդլիմություն՝ ի դեմս զինվորական խմբակցության, որոյ զիսավորում էր Սիրիայի պաշտպանության նախարար, զեներալ-լիցենզիանուն Հաֆեզ ալ Ասադը, որը երկու թի՛ ծանր ստույալ-տնտեսական իրավիճակը, ինչպես նաև Սիրիայի պարտությունը 1967 թ. արարա-խրայեցան պատերազմում պատճենաբարանում էր կուսակցության ծրագրից և զաղափարախանությունից քառասու ծախս թի՛ շնորհմանը, սիսալ, անհետությական և հստակնեպ առցիւթյուններական վերափոխությունը, ինչպես նաև ոչ միշտ և Սիրիայի իրական շահերից շրխող արտաքին քաղաքականությամբ։

<sup>28</sup> Լուսա Բերլան. Հագել անձ. Ամեր Մահմել թերթագիրը Եղիպատոսի առաջնորդության մասին. Խորհրդական պատերազմում պատճենաբարանում էր կուսակցության ծրագրից և զաղափարախանությունից քառասու ծախս թի՛ շնորհմանը, սիսալ, անհետությական և հստակնեպ առցիւթյուններական վերափոխությունը, ինչպես նաև ոչ միշտ և Սիրիայի իրական շահերից շրխող արտաքին քաղաքականությամբ։

<sup>29</sup> Е. Дмитриев, В. Ладеевкин, Путь к миру на Ближнем Востоке, Москва, 1974, с. 204.

## 1.2. Ուղղիչ շարժման պատճառները

### ա) Սոցիալ-տնտեսական պատճառները

Թասա կուսակցության ծրագրում սոցիալ-տնտեսական խնդիրների առանձին մոտեցումները հստակ ծևակերպված չեն և անորոշ բնույթ էին կրում<sup>40</sup>, որն է հմարավորություն էր ընծառում 1963-1966 թթ. աջ թասասականներին, 1966-1970 թթ.-ը ճախրասականներին, իսկ 1970 թվականից սկսած՝ Հային ալ Ասադին իրականում վարել իրենց քաղաքական ողեզդին համապատասխան սոցիալ-տնտեսական քաղաքականություն։ Նոր 1950-կան թթ. ակզբներին Թասար միավորումց Արաքական սոցիալիստական կուսակցության հետ, նոր ստեղծված կուսակցության գաղափարախոսության հիմքում առյուծի քաժինց կազմոց Թասաի ծրագիրը շնայած այն հաճախանքին, որ միավորումից հետո Թասար ստացակ հստակ ընդողձված սոցիալիստական ուղղվածություն։

Դեռ 1947 թ. իր կուսակցական ծրագրում Թասար հանդես էր գախս «ազգի շահերին համապատասխան տնտեսական հեղափոխության», բնական ռեսուրսների ազգայնացման, բնակչության եկամուտների արդյար քաշիման ու շահագործման վերացման, ներքին և արտարին առևտության հսկողության, տնտեսության պլանավորման, հողի սեփականությունը մինչև նվազագույն շափերի կրնաւուման, ամելախ արհմիությանների ստեղծման և բոլոր քաղաքացիների համար պարտապետ ամբողջ միջնակարգ կրթության իրավունքի ստեղծման օգտին<sup>41</sup>։ Խոկ 1966 թ. Միրֆայյան ճախրասականների իշխանության գաղուց հետո Թասաի քաղաքական գործիչների և գաղափարախոսների վրա զգալի էր ԽՍՀՄ, մասնավորապես այնուն տիրապետող Կոմունիստական կուսակցության գաղափարախոսության ազդեցությունը տարբեր ոլորտներում։

Ճախրասականների հեղաշրջումից հետո ԽՍՀՄ-ի աջևն նոր համարավորություններ քաղվեցին Միրիան ներքափանցելու համար։ ԽՍՀՄ-ի

<sup>40</sup> Միք գլուխությունը պրեզիդենտ Սարս Խափեա Ասադ, Մ., 2000, ս. 31.

<sup>41</sup> الأحزاب السياسية في سوريا. جزء، ١٩٥٤-٢٢٩، ص.

ինտ տնտեսական հաճագործակցության հետևանքով Սիրիան բազմաթիվ օգուտներ բաղեց, և համատես իրականացվեցին երկրի համար շահեկան մի շարք տնտեսական ծրագրեր:

1966 թ. ապրիլին պաշտոնական այցով ԽՍՀՄ ժամանեց սիրիական կառավարական պատվիրակությունը՝ նախարարների խորհրդի նախագահ Ֆուսեֆ Զուեյմի գլխավորությամբ: Մուլգայում, իսկ հետագայում նաև՝ Դամասկոսում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում նախաճայնագիր առորագրվեց Սիրիայի պատմության մեջ ամենախոչը կառույցի՝ Եփրատի հիմքուանոցույցի առաջին հատվածի շիմարարության և ԽՍՀՄ-ի կողմից Սիրիային հատկացվելիք տեխնիկական օգնության և վարկերի մասին<sup>42</sup>:

Հիշատակման է արժանի նաև, որ ձախրասասականների օրոք 1968 թ-ի սկզբներից Սիրիայում մկանք նավի արդյունահանումը, այն ուղյուն տարվա վերջին հասավ 2 մին 400 հազ. տոննայի, իսկ 1969 թ.՝ 3,5 մին տոննայի<sup>43</sup>:

Զրային ուսուցությունի սակավության և գլխավորապես անբերրի հողերի առկայության պայմաններում արարական երկրների տնտեսության մեջ ամենասուր և միևնույն ժամանակ ամենաղթվար լածվող հարցերից էր հողի և նրա սեփականության հարցը, որը ձախրասասականները փարձեցին լուծել համատարած ազգայնացման քաղաքականության միջոցով: Ձախրասասականների կառավարման շրջանում կառավարությունն էլ ավելի անզիջում դիրքորոշում որդեգրեց պիտուականացման հարցում<sup>44</sup>:

Բառասի ձախ թիվ իշխանության Ժամանակաշրջանում պիտույքուն ամբողջությամբ իր ձեռքն էր վերցրել նաև արտաքին առևտուրը, այն դեպքում, երբ մինչև 1965 թ. պիտուական իշխանությունը Սիրիայում անմիջականորեն շլյու միջամտում արտաքին առևտուրի ուղղութին<sup>45</sup>:

<sup>42</sup> Հ. Սարգսյան, Սովորության ամուսնության ու տիկինական համագործակցության (1955-1970 թ.), Ալբանու և Սիրիա Ազգական երկներ և ժողովրդներ VI, Արարական երկներ, Երևան, 1974, էջ 97:

<sup>43</sup> «Զարգություն», Լիբանան, 05. 09. 1970, լուս Հ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 93:

<sup>44</sup> Խաչի անդամ, էջ 113:

<sup>45</sup> Բ. Բ. Վասիլյով, Социально-экономические преобразования в Сирии (1946-1970 гг.), М., 1972, с. 211.

Զախրասասակամների իշխանության շրջանում մերժվում էր համագործակցությունը արևմտանիլուսպական նրկըների և ԱՄՆ-ի հետ: Զախրասասակամները նույնիսկ վերապահությամբ էին մոտենում նաև, այսպես կոչված, ոչ սոցիալիստական ուղի ընտրած արարական նրկըների հետ առևտրատնտեսական համագործակցության խնդրին: Եթե մինչև 1960-ական թվականները Սիրիայի եկմանական առևտրային գործընկերներն էին ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Անգլիան և Գ-Ֆ-Շ-ն, ապա 1966 թվականից այդ պետությունների հետ Սիրիայի տնտեսական համագործակցությունը հասցեց նվազագույն շափնքի<sup>45</sup>:

Զախրասասակամները ցանկանում էին նմանառողական բաղարականությամբ օրինակ ծառայել մյուս արարական պետությունների համար, որոնց տնտեսությունը սերտորեն կապված էր կապիտալիստական երկրների և արևմտյան ընկերությունների հետ: Նրանց օրոր տարրեր երկրների հետ առևտրային հարաբերությունները և հատկապես արտաքին առևտուրը, նրա ծավալները, ուղղվածությունը որոշվում էր ըստ այն շափանիշի, թե օրինակ ինչ դիրքորոշում ունի տվյալ պետությունը մերժավորարկելուն հականարության նկատմամբ, կամ ինչ հարաբերությունների մեջ է հսկայելի հետ:

Իշխանության գալոց հետո ձախրասասական վարչակարգը նաև հետապնդումներ սկսեց այն անձանց նկատմամբ, որոնց սեփականությունը ազգայնացվել էր՝ նրանց մեղադրելով կոռուպցիայի և տնտեսական հանգանդությունը բաժանել էր որպեսկամների և քննամիմներին: Վերջնների մեջ մտնում էին մեծահարուստները, ձեռնարկատերները, խոշոր առևտրականները և այլն: Թացի օրենքով սահմանված շափնքից հողեր էին բոնագրավիում նաև բաղարական նետապնդումների գոհ դարձած և պետության կողմից պիտակավորված, այսպես կոչված, «ժակարդիցուքրյան ներկայացուցիչներից» և դավադիմներից: Բռնազրավումների ընթացքում հողատերներին ընդհանրապես չէին վճարվում որևէ վիտիսառուցումներ:

<sup>45</sup> Վ. Պ. Վուկորոս, 624 աշխ., էջ 212:

Քաջմարիվ ամսեղ մարդիկ անհինն մեղադրանքներով բանտարկվեցին, իսկ շատերն էլ կարողացան մի կերպ հեռանալ երկրից:

Չախրասասականների բաղաքականության հետևանքով Սիրիայի սոցիալ-տնտեսական իրավիճակը մնում էր չափազանց լարված և պայրունակությունը: Երկրում դժվարացել էր առաջին անհրաժեշտության ապրանքների ձևորդերման հնարավորությունը: Այս պատճառով Սիրիայում բոլորի հումկու ալիք բարձրացավ ճախրասասականների իշխանության դեմ, որի գործ կամզմեցին խաճական հոգևորականները: 1966 թվականից հետո, երբ նոր իշխանությունը նոշակեց օգիտական սոցիալիզմի հիմքի վրա Սիրիայում սոցիալիստական հասարակար կառուցելու իր նպատակի մասին, երկրում հաճախակի դարձան դժգոհության զանգվածային համբաւավացներն ու ցոյցերը, որոնք դեկավարվում էին հոգևորականության կողմից<sup>47</sup>: Մզկիթները դարձել էին բաղաքական հակառատելիներ, որտեղից սույն մեղադրանքներ էին հնչում կառավարության հասցեին և կոչեր էին արևուն տապալելու ճախրասասականների վարչակարգը: Խստորեն դատապարտվում էր կառավարության ինչպիս սոցիալ-տնտեսական բաղաքականությունը, այնպէս էլ արտաքացված տեսպերով ունեցվածքի և մասնավոր սեփականության բռնագործումը, պիտականացումն ու վերաբաժանումը: Երկրի դեկավարությանը մնացած լոլի խալանի սկզբունքներից շնորհեց մեջ՝ հոգևորականությունը նրա դիմ հանեց քաղաքային շուկայի առևտրականներին, կրաքակատերերին ու արիեսապորներին: Ընդդիմադրյաններն ոչնչի շխատան, և անկարգությունների կազմակերպչները ձերքակալվեցին, որոնց բարս էր շնորհ Հասան Հարաբանին, որը հայտնի էր իր կապերով Սասույան Արարիայի և «Անտուլյան-Եղբայրներ» կազմակերպության հետ<sup>48</sup>: Ռուբրի նույրմեր տեղի ունեցան մաս 1967 թ. Համասկզնում և Հալեպում, առկային դրամը ճնշվե-

<sup>47</sup> Э. Пир-Будагова, Некоторые особенности религиозной оппозиции Сирии в 70-80-е годы, Специальный бюллетень, № 4 (261) М., 1989, ДСП, с. 57.

<sup>48</sup> 457/5/4. درجة، دوّنی.

ցին իշխանությունների կողմից, որից հետո պետականացվեցին դրամը մասնաւորին պատկանող քաջարիլ խանությունը<sup>49</sup>:

Արաբականանյան մեմաշնորհների հետ կապիս առևտրա-արդյունաբերական շրջանակների ներկայացուցիչների իրենց սեփականության բնագրավճանն ուղղված պետության միջոցառումները հայտարարում էին շարիաթի սկզբու նշանին հակառակ: Նման ուղրությունը էին որդեգրում նաև խոշոր հողատերերը<sup>50</sup>:

Այսպիսով՝ Բաասի ճախ թի կողմից 1966 թվականից իրականացվող շափազանց մեծ մասշտաբների հասնող ազգայնացման գործընթացի, նոոյն բնագրավումների և ազրարային քարեփոխումների, արտաքին տնտեսական քաղաքականության, արևմտյան և նշի շարք արարական պետությունների հետ տնտեսական կապերի ընդհատման, տնտեսական համացարդությունների պատրակակով քաջարիլ քաջարացիների ձերքակալման և երկրորդ վտարման, Սիրիայից արտասահման հոսած հսկայական կապիտալի, ինչպես նաև երկրում անհրաժեշտ ապրանքների պակասի հետևանքով Սիրիայում ստեղծվել էր շարված սոցիալ-տնտեսական դրույթն: Արանք էին ուղղիչ շարժման սոցիալ-տնտեսական գլխավոր պատճառները:

Տնտեսության ոլորտում Ասադը և նրա կողմնակիցները կողմ էին որոշ չափով տնտեսության ազատականացմանը և մասնավոր ներդրումների խրախումանը<sup>51</sup>: Նախատեսվում էր օգտագործել մասնավոր կապիտալի հնարավորությունները՝ դրա հետ մեկտեղ պահպանելով պետական հատվածի դերը, ասկայն աստիճանաբար փորրացնելով պետության մասնակցությունը երկրում տնտեսական զորժընթացների դեկավարման գործում:

<sup>49</sup> С. Манукян, Исламский фундаментализм в Сирии (30-60-е годы XX в.), Востоковедный сборник, выпуск четвертый, М., 2002, с. 174.

<sup>50</sup> Борьба идей в современном мире. Развивающиеся страны: проблемы и идеологические течения, том 3, Москва, 1978, с. 262.

<sup>51</sup> Худа Абу-Табих, Исправительное движение и опыт либерализации сирийской экономики, Арабский сборник: выпуск второй. Москва, 2000, с. 83.

թ) Կուսակցական-գաղափարական պատճառները

Այլդիչ շարժման սկզբնավորման դրյապատճառների շարքում կարևոր տեղ նն գրադացնում նաև կուսակցական-գաղափարական պատճառները:

Բառաս կուսակցության սոցիալ-դասակարգային հենքը էին կազմում քաղաքային մամր բույժուազիան և գյուղացիությունը, ինչպես նաև ռաս-նորությունը, մտավորականության լայն շերտերն ու գինվորական շրջանակները, հատկապես ցածր և միջին սպայական կազմը: Իրեն դիտարկելով որպես համարարարական կուսակցություն՝ այս իր առջև խնդիր էր դրվ բրդր արարական երկրների միավորում: Ինչպես նշվում էր առաջին համագումարում ընդունված կուսակցության կամունապետթյունում, «արար մերը մեկ ազգ նն և իրավումը ունեմ գոյություն ունենալ Ծիսանական պետությունում»<sup>32</sup>: Կուսակցության հիմնական կարգախոսներից էր՝ «Ուժմա արարիյա վահիւա, գարու ռիսաւա խալիսա» (արարական ազգը միանալիք է և ունի հավերժական առաջելություն): 1954 թ. կեսերին ծևավորվեց կուսակցության առաջին համարարարական դեկավարությունը, որը կոչվում էր ազգային, իսկ կուսակցության ազգայինական բնայրն ու ուղղվածությունը վերաբերում էին ոչ միայն Սիրիային, այլև ամբողջ արարական աշխարհին: Բառաս կուսակցությունը դարձավ արարական աշխարհում քաղաքական առաջին ուժերից մեկը, որի միասնության կարգախոսներն արտօնայութեցին կռնկիւթ պահանջմներով: Սակայն, եթե կուսակցությունը միշնչ ճախրասականների կառավարման շրջանը չէր կորցնում իր համագույշին դեմքը, ապա ներդիմ քաղաքական և սոցիալ-տնտեսական ուղղվածությունն երբեմն ենթարկվում էր արմատական վոլուխությունների:

1963 թ. մարտի 8-ին, երբ Սիրիայում հերթական հետաշրջման արդյունքում ԱՎՍԿ-ն եկավ իշխանության զլույս, սկզբնական շրջանում կուսակցությունն աջակցություն էր գտնում ԱՄՆ-ի և արևմտահվյուպական պետությունների կողմից, այն, մեր կարծիքով, բացարկվում է զլաւավորա-

<sup>32</sup> Կամունապետթյան տերւու տեսն. ۲۷, Բերութ, ۱۹۷۱, թ. ۲۶, հայ.

սիս այն պատճառով, որ Մերձավոր Արևելյան ԽՍՀՄ-ը ուներ իր հեմարանն ու ուզմավարական դաշնակիցն ի դեմ ԱՍՀ-ի (Եղիպատոսի), իսկ Բասարի արտօնարին քաղաքական կողմնարշումը դեռ ամփայտ էր և զարդարական ուղղվածությունը միանցանակ չէր մնենարանվում։ Ինչպես 1963 թ. օգոստոսին հարևան Լիբանանում հայտարարեց ԱՄՆ դեսպան Արմին Մեյերը՝ «Մենք իրավունք ունենք օգնություն ցուցաբերելու Բասար կուսակցությանը Իրաքում և Սիրիայում կոմոնիզմի դեմ նրանց վճռական պայքարի համար»<sup>33</sup>։

Հարկ է նշել, որ Սիրիայում և Իրաքում իշխանության գալուց հետո բառական վարչակարգերի դիրքերը բավական բույ էին, և երկու երկրներում էլ տեսի էին ունենում վարձեր դրանք տապալելու համար, իսկ Սիրիայի, Իրաքի և Եղիպատոսի միջև միավորման գործընթացի տապալումից հետո բավական սրվել էին նաև բառասականների հարարերությունները Եղիպատոսի նախագահ Նասերի հետ<sup>34</sup>։

Ընդհանրապես հարկ է նշել, որ Բաաս կուսակցության որոշումների մեծամասնությունը, ինչպես նաև տարրեր ոլորտներում նրա քաղաքականության ուղղվածությունը որոշվում էր կուսակցական մեջ շրջանակում, և նրա նամազումարմերի մեծ մասը ծևական բնույթ էր կրում։ Նշվածը վկայում է այն մասին, որ Բաասը նույնիսկ իշխանության գալուց և կոստավորող կուսակցության դասմալցաց հետո չճերրազատվեց «զննիաստակուրյան սինդրոմից»։ Խոսքը վերաբերում է ընդհանրապես նրա գործունեությանը, որը պարուժված էր գաղտնիության շղարշով<sup>35</sup>, ինչպես նաև նրա քարտ կազմակերպարական կառուցվածքին։ Նույնը վերաբերում էր նաև նրա զարդարականությանը, որը կարծիվ է բաժանել երկու մասի առաջինը, որը հետևողականորեն տարածվում էր և հայտնի էր բոլորին, ինչպես երկրում, այնպես էլ նրանից դուրս, ամբողջ արաքական աօզի միավորումն էր Ատլանտյան օվկիանոսից մինչև Պարսից ծոց, և երկրորդը, ո-

<sup>33</sup> Азия и Африка сегодня, 1964, № 1, с. 50.

<sup>34</sup> Մամրաման ան/ն Չալոմի Խնար, Օսրբско-իրական հարաբեկություններ 1961-1967 թ., Երևան, 2002, ս. 70-72.

<sup>35</sup> Иванов С. А., Межарабская политика Сирии, Том 1, Москва, 1986, с. 17, с. 17.

<sup>36</sup> Այն քր երրին արևմ համարվում էր կոստական գարունը, ինչպես և կոստական բանական կազմը։

Նման պայմաններում երկիրը քաղաքական և տնտեսական ճշշություն վրա դմելու և իր հականգնաժամային ծրագրերն իրականացնելու համար պաշտպանուրյան նախարար Ասադին ոչինչ չեր մնում անելու, քան իշխանությունը Սիրիայում կննտրունացնելու իր ժամանելու: 1970 թ. նոյեմբերի 13-ին՝ Բաասի 10-րդ արտահերթ համագումարից մեկ օր անց, Սիրիայի պաշտպանուրյան նախարար գեներալ Հաֆեզ ալ Ասադը հսկողություն աշհանեց երկրուն իրավիճակի վրա: Սիրիական բանակը զրահեցրեց Դամասկոսի ռադիոկայամբ և հեռուստաշեմիերությունը, ինչպես նաև «Արքաս» և «աս-Մառուրա» պաշտոնական թերթերի խճագրությունները: Ասադը մինչ այդ քաջնարիկ սպամների տեղափոխություններ էր անցկացրել քանակում՝ բռնը զրամասերը դնելով իր ողբակի հսկողության տակ<sup>107</sup>: Այդուհանդեռձ, հարկ ենք համարում նշել, որ շնայած այն համզամանքին, որ Բաասի մարզային դեկավարուրյան մեջ զտնվող բարձրաստիճան սպամները կողմնակից էին պաշտպանուրյան նախարարին և համամիտ էին նրա հետ, նրանցից ոմանք առաջարիկ էին Ասադին, որ ամերիանցները է փոխազդամբ և խաղաղ ճանապարհով հաղթահարել այն անջրապետը, որ գոյություն ունի նրա և երկրի բարձրաստիճան դեկավարուրյան միջը<sup>108</sup>: Նույն օրը ճերբակավեցին և «Մեզիկ» բանուում բանտարկվեցին Սիրիայի նախազահ Նոր աղ-Դին ալ-Արասին և Բաաս

<sup>106</sup>Տե՛ս Գ. Մ. Գրիգորյան, Պօնիա Սիրիա և Բլույնեաօստօնու կոփոնք, Երևան, 1989, է. 137., John F. Devlin. Syria. Modern State in an Ancient Land, 1983, p. 55.

<sup>107</sup>Բ. Ալեքսանդրով. Հօնություն Սիրիա “Հա բայկոն” 1970, 20–26 նուբր, №. 47.

<sup>108</sup>Հովհան Բերլան. Հագեց անձ. Տիրապետություն և պատերազմ, 136, 136.

կուսակցության սիրիական մասնաճյուղի գլխավոր քարտուղար Սալահ Զադիլը, իսկ արտաքին գործնքի նախակին նախարար Խրբահիմ Մախուսը փախառվ Ազիմ<sup>109</sup>, որից հետո իշխանությունը երկրում ամբողջությամբ անցավ զինվորական խմբակցության ձեռքը: 1970 թ. նոյնմերի 13-ին Ասարդի իրականացրած հեղաշրջումն անարյուն էր: Չնայած այն ուներ դասական ռազմական հեղաշրջման ձև՝ կարող է նաև անվանվել դիկավարության կամ վարչակարգի փոփոխություն<sup>110</sup>: Անզիացի գլուխական Պատրիկ Սիլը Սիրիայում տեղի ունեցածը որպես է որպես «ինկիրար արյար» («սպիտակ հեղաշրջում»)<sup>111</sup>: Եվ իսկապես, հեղաշրջումը Նամակուսում կատարվեց հանգիստ, առանց մարդկային զոհերի և մեծ զննումների: Հաֆեզ աղ Ասարդին կայծակնային արագությամբ կատարած հեղաշրջման համար երթեմն անվանում էին «մերձափորաբելյան նորչելք»:

Ըստ Երուսաղեմի «Հրեական» համալսարանի պրոֆեսոր Մարզի, տարածաշրջանում, բացի Հորդանանի իրադարձություններից, տեղի ունեցավ ևս մեկ վճռորոշ իրադարձություն, որը շտապիցը Ասարդին իշխանությունից հեռացնել Զադիլին, այն է՝ 1970 թ. սկսվելու 28-ին Եզիզուսուի նախագահ Գամալ Ալ-Նասերի անսպասնի մահը, որը «ուպատճանաց է ավելի տրե՛ Սիրիայի խոցելությունը Խարայնի կողմէց»<sup>112</sup>: Ասարդ շափազանց մեծ ակնածանք ուներ Նասերի նկատմամբ՝ նրա մեջ տինմնելով արաբներին միավորող և առաջնորդող դիկավարի: Հեղաշրջումից հետո, երբ Ասարդ նկալ իշխանության գլուխ, նա իրեն ողջունող անքուից պահանջեց «սկզբում բուավել Նասեր, իսկ հետո միայն Ասարդ»<sup>113</sup>: Հեղաշրջման օրերին տեղի ունեցավ ևս մեկ իշխարժան իրադարձություն, որը ստիպեց Ասարդին գործել շափազանց արագ: համագումարի սկարտից անմիջապես հետո Ասարդի համար բավական անսպասնի Նամա-

<sup>109</sup> باترك سيل، صرائع على الشرق الأوسط، ص. ٢٦٧.

<sup>110</sup> John F. Devlin, Syria: Modern State in an Ancient Land, 1983, p. 56.

<sup>111</sup> باترك سيل، صرائع على الشرق الأوسط، 268.

<sup>112</sup> Moshe Ma'oz, Assad: The Sphinx of Damascus, p. 39.

<sup>113</sup> К. Капитонов, Ближний Восток в лицах, М., 1998, Хибз Асад-из летчиков и президенты, с. 69.

կու ժամանեց Լիբիայի առաջնորդ գնդապետ Մուամար ալ Քատթաֆֆին։ Խնչվես հետագայում հիշում են, Ասաղի զինակիցները, տեղեկամալով այդ մասին Ասաղը տարակուսեց այն հավանականությունից, որ Քատթաֆֆին Շամասկոս է ժամանել Սիրիայում Բաասի երկու հակամարող խմբակցություններին հաշտեցնելու առաքելությամբ, ինչը ստիպեց Ասաղին, Վերոհիշյալը կամխելու համար օր առաջ Սիրիայում ամրող իշխանությունը կենտրոնացնել իր ձեռքում<sup>114</sup>։

Նոյնմերերի 15-ին տտեղծվեց ԱՎՍԿ-ի ժամանակավոր մարզային ղեկավարությունը։ Վերջինս նոյնմերերի 16-ին հայտարարությամբ ղիմեց բնակչությանը, որտեղ շարադրվում էր Սիրիայի նոր ղեկավարության գործունության ծրագիրը ներքին և արտաքին քաղաքականության հիմնակամ դրսությունը։ Հայտարարության մեջ նշվում էր, որ «նոյնմերերի 16-ի շարժումը» կոչված էր ուղղվելու ԱՎՍԿ-ի պիրիական մասնաճյուղի նախորդ ղեկավարության սխալները և նրկի առջև կամգնած խնդիրները լուծելու Բաասի համագումարների որոշումները կյանքի կողելով։ Այսուղից էլ ծնունդ առավ «ուղղի շարժում» անունը (արաբերեն՝ «جيش التحرير»՝ «ազ-հարարա ար-բասիլիյա»), որի նիմնադիրն ու իրականացնող Համբեզ առ Ասաղն էր։

Ասաղը<sup>115</sup> ծնվել է 1930 թ. հոկտեմբերի 6-ին Սիրիայի Լաքաքիա մոհամբագայի<sup>116</sup> Կարսահա գյուղում, որտեղ զինավորացներ բնակվում էին նրկի ալավիական համայնքի<sup>117</sup> Մուտավլիրա ցեղի կամարի աղանդի հետևողմերը։ Նրա ինքնուրույն կյանքի ուղին սկսվում է 16 տարեկանից։

<sup>114</sup> لوسان بیتلان، حافظ الأسد. مسيرة مناضل، ص. 128.

<sup>115</sup> تبعت، دمشق ١٩٧٠/١١/١٧

<sup>116</sup> Ամրողքական ամունց՝ Համբեզ իբն Ալի իր Սույերամ ալ-Ղանիաչ՝ «կահնաց արաբ-պետց քարգանաքար նշանակում է միայն։ Ասաղն այն փոխոց տակար»՝ «առաջնա անունով։

<sup>117</sup> Լաքաքիա մոհամբագայում բնակչության մնացածանությամբ արևմտներ են։

<sup>118</sup> Ալավինեց շխտերի մի ճայրագրության մեջ, որում 4-րդ նախկի Ալիմի դրամքներ են իրենց պաշտամունք առարկան։ Նրանց կողմանակ առաջնորդ՝ ուսիւ ազ-ղին Շամակայութ գովում է Կարսահա բնակայութ։

նոր 1946 թ. հարազատ գյուղից տեղափոխվում է Լաբարիա, որպեսզի ավարտի միջնակարգ դպրոցը: 1947 թ. նա անդամագրվում է կազմակույժող Բաաս կուսակցության գաղտնի խմբակներից մեկին: Դպրոցում Ասադը կազմակերպում է ընդհատակյա քաասական ուսանողական միուրյում: Որպես ուսանողական շարժման ակտիվ մասնակից, նա ընտրվում է սկզբում Լաբարիայի ուսանողական կողմիւնի անդամ, այնուհետև նրա նախագահ: Այդ պաշտոնում նա նախագահեց Սիրիայի ուսանողական առաջին համագումարում<sup>119</sup>:

1948 թ. արարա-իսրայելյան պատերազմում Սիրիայի պարտությունը խոր ազդեցություն բռնից Ասադի վրա և որոշ չափով վիճակը նրա նպատակները: «Ես նրազում էի ընդունվել համալսարան և սովորել բժշկություն, բայց միևնույն ժամանակ նուածում էի նաև գինվորական ակադեմիայի նախին: Ուժի և դաժանության կիրառումն իմ ժողովրդի դիմ համոզեց ինձ, որ գինվորական ծառայությունն ամենազործուն ճանապարհն է իմ հայրենիքին ծառայելու համար.....Եթու ես դիմ երեխա էի, ես տնօնում էի, թե ինչպես են ֆրանսիացի գինվորները հարվածում իմ ժողովրդին իմ երկրում.....Նոր ես լսում էի, թե ֆրանսիական ինքնարիոններն ինչպես էին ուժակութում մեր քաղաքները, ես որոշեցի դառնալ օդաչու, որովհետև կարծում էի, որ եթե օդաչու լինեմի, ապա կեարողանայի կանգնեցնեմի այդ ամենը»<sup>120</sup>: Ասադը հատուկ տեղափոխվեց «Դամասկոս» անդամագրվելու կամավորական ջոկատներին, սակայն զբակուշային տարիքը լրացած շինելու պատճառով նրան մերժվում: Ամշուշտ քժիշկ դառնալու համար նրա ընտանիքը անհրաժեշտ միջոցներ չուներ, և ուստի ավարտելուց հետո, ինչպես և նրա հասակալից ալավիների մեծ մասը, նախընտրեց գինվորականի ճանապարհը: Ընդհամարապես արավիները երկրի ամենաճնշված և շրագու համայնքն էր, գինվորական ծառայությունը Սիրիայում չուներ երիտասարդներին սոցիալական առավելությունների հնարավորություններ էր ընծեռում, իսկ սումմի մեծամասնության համար, որոնք գտնվում էին համեմատարար քարվոր սոցիալ-տնտեսական պայմաննե-

<sup>119</sup> <http://www.arabji.com/Syria/assad.htm>, p. 1.

<sup>120</sup> «The Times», London, 13 March, 1978, interview by Judith Listowel.

բուժ, զինվորական ծառայությանը համարվում էր ոչ հեղինակավոր<sup>121</sup>: Այս իրադրույթունը տարիների ընթացքում հանգեցրեց նրան, որ թիվ Բաաս կուսակցությունում, թիվ բանակում սկսեցին մեծ թիվ կազմել ծայրանասային շրջանների ներկայացուցիչները, որոնց բվում ալավիները: Նրանք ունեն ավելի մեծ դեր բանակում՝ համեմատած ընդիանուր բնակության թվաքանակի մեջ նրանց տոկոսային հարաբերակցության<sup>122</sup>:

1952 թ. Ասադը ընդունվեց Հոնսի ուսումնարանի ուսումնական ուսումնարանի ուսումնական ֆակուլտետ, որը հետագայում տեղափոխվեց Հալեպ: Այնուհետև նրան ցուցակագրեցին ուսումնաօրային ուժերի (ՌՕՌԻ) ակադեմիա, որը և ավարտեց 1955 թ.<sup>123</sup> Եյտենանութիւնում կոչումով: Ասադը իրեն դրանուրեց որպիս բավական ցնութեակ օրացու և ուղարկվեց Եզիդոսու օրացուների հասուկ կուրսերի: Այնուհետև նա ճանաչվեց պիրիական ՌՕՌԻ բակագույն օրացու և 1957 թ. Աշանակվեց Խոկադիլիայի երաժանաւոր<sup>124</sup>: Այնուհետև նա մեկ տարով վերապատրաստում է անցնում և կատարելագործվում ԽՍՀՄ-ում, որտեղ սովորում է Միջ. 15 և Միջ. 16 օրանակների վրա<sup>125</sup>: Փարթիրույնի Միտրյունում նա մեծ փորձ ծնող թերեցի, այդ ժամանակ նա կապիտուն էր: Ասադը ճշում էր, որ սիրիացի զինվորականները ԽՍՀՄ-ում մեծ հարգանք և զնահաւատանք էին վայելում<sup>126</sup>: Ծուռով նա ստանում է սիրիական ՌՕՌԻ մայորի կոչում: Ծառայության ընթացքում Ասադը շարունակում է կապերը նաև բառասականների հետ և զատի հաջորդույնների է հասնում նաև կուսակցության մեջ<sup>127</sup>: Ասադը և նրա ալավիական շրջապատը ուժ և ազիցություն են ծնող թերում կոսակցության դեկանակարգությունում: Սակայն 1958 թվականից<sup>128</sup> սկսված Սիրիայի և Եզիդոսուի միավորման գործընթացներում առաջատար էր:

<sup>121</sup> Мирский Г. Армия и политика в странах Азии и Африки. М., 1970, с. 85.

<sup>122</sup> John F. Devlin, Syria. Modern State in an Ancient Land, p. 64.

<sup>123</sup> هاشم خليل، حافظ الأسد.. الإيداع لوجية الشورى والفكير السياسي، الطبعة الثانية، دمشق، ١٩٨٧، ص. ٣٢.

<sup>124</sup> ԽՍՀՄ Ֆրանզիք քաղաքում Ասադի հետ մասնի խորհրդակցին Միջ. 17 ինքնարինելուով վերապատրաստում էր անցնում նաև Եզիդոսու ապահով նախագահ Սուսան Հասնի Սիրաբարը:

<sup>125</sup> Խօսիան Բիթլան، حافظ الأسد.. سيرة مناضل، ص. ۶۱.

<sup>126</sup> Տես Միք լուսաման պրովինցիա Սիրիա Խաքա Ասադ, с. 2-5.

<sup>127</sup> 1958 թ. նաև Ասադի ամսանույն տարին էր:

րի և ԱՄՀ-ի կազմավորման շրջանում Եղիպտոսի նախագահ Նասերի հրամանով բոլոր առավելապես քասական տպաները (հիմնակամում ալավիններ), որոնց բվում էր Ասադը, տնդափոխվում են ծառայության Եղիպտոս, որտեղ նա ծառայում էր զիշերային կործանիչների էսկաղրիլիայի կազմում: Կահիրենում նյուու սպաների հետ միասին, որոնց բվում էին Սալահ առ Դին Բիրարը, Մուհամմադ Ռոմրանը, Արդ ալ Ջարիմ ալ Ջունին, Մուստաֆա Տշասը, ճախրասասականների ապագա առաջնորդ Սալահ Զարյիլը, Ասադը ստեղծում է քասական գաղտնի ուսումնական կոմիտե<sup>128</sup>: Նրանք հարձար պահի էին սպասում Սիրիա վերադաշնար և այնուել քաղաքական պայքարի մեջ մտնելու համար: Այդ ժամանակվանից Ասադը ծզուում էր ամրապնդի քասականների դիրքերը քանակում: Ասադը հայրենիք վերադարձավ ԱՄՀ վիլզումից հետո՝ 1961 թ. վերջին: Դամակառում նա տեղիկացավ, որ գրկիլու է զինվորական կողումից քաղաքական պատճառներով: Նրանից հետո Ասադը որոշ ժամանակ աշխատում էր Սիրիայի Էլուն-միկայի նախարարության ծովային փոխադրումների վարչությունում՝ որպես շարքային աշխատող<sup>129</sup>:

1963 թ. մարտի 8-ի քասական հեղափոխությունից հետո, որի նախապատրաստական աշխատանքներում Ասադն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերել, վերադարձավ ծառայության ՌՕՌԻ-ում: Այդ ժամանակվանից սկսվեց Ասադի սրբնաց կարիերան, շուտով նա նշանակվեց ավիացիոն գնդի հրամանատար և ստացավ զննապետի կոչում: 1964 թ. դեկտեմբերին Ասադն արդեն քրիզադային զիներայի կոչումով դառնում է ՌՕՌԻ և ՀՕՊ հրամանատար: Այս ժամանակ էր, որ Բաաս կուսակցությունը պատակտվեց երկու թերթի՝ աջերի և ձախրասասականների: Հետզհետև հեռանարկ իր նախկին հաճախումներ Բիրարից և Ռոմրանից, որոնք համեստ էին գալիս աջ դիրքերից, Ասադը ժամանակավորապես մերձենում է ձախրասասականների հետ, չնայած պահպանվող լուրջ տարածայնություններին: 1966 թ. վիետրվարի 23-ին ձախրասասականների՝ իշխանության գալու գործում իր ունեցած դերի շնորհիվ Ասադը դառնում է Սիրիա-

<sup>128</sup> لویزان بیتلان، حلقة الأسد. مسيرة متاحف، ص. ۷۴.

<sup>129</sup> Սամբաման տես, Moshe Ma'oz. Assad: The Sphinx of Damascus. A Political Biography, p. 31.

Ք պաշտպանության նախարար՝ Խամատելելով ՌՕԲ և ՀՕՊ իրամանառարի պաշտոնները: 1968 թ. Խովհի 1-ին նա ստացավ ուազմաօջախին ուժիք գեներալ-լեյտենանությ կոչում<sup>130</sup>: Այդ ընթացքում նա զինված ուժերի ամբողջ կառուցվածքը և հատուկ ծառայությունները դրեց իր ուղղակի հակողության տակ՝ շնչարձ այն հանգանանին, որ նրանցում դժո պահպանվում էր ճախրաստականների կողմանակիցների ագրեսորյումը: Հանգ ալ Ասաղի դիրքերը երկրում զնալով ամրապնդվում էին: Սիրիայի երկու առանցքային ուժային կառուցվածների դեկավարներ՝ զինված ուժերի զիսավոր շտարի պետ Մուստաֆա Տիասը և զինվորական հականետախողության դեկավար Հիրմար Շիհարին Ասաղի ընկերներն ու համախոհներ էին<sup>131</sup>: Այդուհանդերձ Ասաղի կողմից իրականացված կայծակնային հեղաշրջումը զգեթք անհնարին կիմներ, եթե նա նախօրոք նախապատրաստական աշխատանք տարած չիմներ բանակում, հատկապես նրա սպայական կազմի հետ: Թեև վեցօրյա պատերազմի շրջանում, եթե արարական մյուս երկրների շարքում Սիրիան ծանր պարտություն կրեց, և Ասաղը զիսավորում էր Սիրիայի պաշտպանության նախարարությունը, սայրուհանդերձ նա մեծ հեղինակություն էր վայելու բանակում, նրա հայցքներն ու ծրագրերը աջակցության էին գտնում զինվորականների շրջանում:

Հեղաշրջումից անմիջապես հետո՝ նոյեմբերի 16-ի Բաասի Սիրիայի երկրամասային ժամանակավոր դեկավարության հայտարարության մեջ նաև նաև ափորապես նշվում էր. «Բաաս կուսակցության մարզային ժամանակավոր դեկավարությունը իր վրա պատմական պատասխանառվություն է Վերցնում անցումային ժամանակաշրջանը դեկավարելու գործում»: Ըստ ժամանակավոր դեկավարության՝ ուղիղ շարժման ծրագրերը պարունա-

<sup>130</sup> هاشم خليل، حافظ الأسد.. الآيدىولوجية الشورية والذكر السياسي، ص. ٣٤.

<sup>131</sup> Мир глазами президента Сирии Хафеза Асада, с. 26.

կում էր դրույթներ կուսակցության որոշումներից և նրա գաղափարական հայացքներից<sup>132:</sup>

Որո՞նք էին ուղղիչ շարժման ներքին և արտաքին քաղաքական, ինչ-պես նաև սոցիալ-տանտեսական հիմնական սկզբունքները:

### Ներքին քաղաքական առավարեգում.

1. Քանի կուսակցության դեկավարությանը առաջադիմական ճակատ առեղջեցու միջոցով երկրի բոլոր առաջադիմական և ժողովրդական ուժերի միավորում՝ նրանց ծառայեցնելով ցննիանուր պայքարին:

2. Ոչ ոչ, բայց երեք ամսվա ընթացքում ձևավորել ժողովրդական ժողով՝ քաղկեցած կուսակցության, ժողովրդական և արհեստակցական, ինչպես նաև առաջադիմական կազմակերպությունների ներկայացուցիչներից օրենսդրական գործունեություն իրականացնելով նախատակով։ Ընդունել երկրի նոր նշանական սահմանադրություն։

3. Ժողովովի հիմնական կարիքներին և պայքարի պահանջներին համապատասխան իրականացնել տնտեսության գարզացմանն ուղղված քայլեր։

4. Խորացնել և զարգացնել սոցիալիստական վերափոխումները՝ ձևավորելով արարական միասնական սոցիալիստական հասարակարգ։

5. Գործուն դեր համակացնել ժողովրդական կազմակերպություններին սոցիալական քարենվոխումների գործընթացի դեկավարման գործում, ժողովրդական հոկումություն սահմանել պնտական պարագաների վրա և դրա միջոցով կառուցել ժողովրդավարական հասարակարգ։

6. Հետևողական աշխատանք տանել զինված ուժերի կայացման և զարգացման համար<sup>133:</sup>

<sup>132</sup> Քառակի Սիթիայի երկրամասային ժամանակակոր պեկարության նոյներին 16-ի հայտարարությունները.

الحركة التصحيحية الجديدة في الذكرة الخامسة والعشرين. دمشق، ١٩٩٥، ص. ٣٩.

<sup>133</sup> Ուղղիչ շարժման ծրագիրը ներբեր քաղաքական առարեգում. نصال حزب الأبعث.

العرب أوشتراكي ١٩٧٥-١٩٣٣: دراسة تاريخية تحليلية موجزة، دمشق، ١٩٨٣، ص. ١١٧.

7. Ընդունել տեղական ինքնակառավարման մասին օրենք<sup>134</sup>:  
Արարական առաջարկում:

1. Լայն համագործակցություն բոլոր արարական պետությունների և ուժերի հետ բոլոր ոլորտներում, որոնք անրապնդում են զինված պայքա-ռի ռազմավարությունը:

2. Արարական համախմբվածության իրականացում և արարա-կան պետությունների հետ անհարկի տարածայնությունների և հակա-սուրյունների վերացում:

3. Միավորման գործընթացների իրականացում արարական առաջադիմական պետությունների, հատկապես Արարական Միացյալ Հանրապետության հետ:

4. Կոռակցությունը և հեղափոխությունը Սիրիայում ոգեշնչված և լավատեսառությամբ է նայում այն համեմատումներին և միավորման գործըն-թացներին, որոնք տեղի են ունենում Արարական Միացյալ Հանրապե-տության, Լիբիական Արարական Հանրապետության և Սուլյանի Ժո-ռովորական Դեմոկրատական Հանրապետության միջև: Սիրիայի Արա-րական Հանրապետությունը պետք է իր բնական տեղը գտնի այդ միա-վորման ուղղված գործընթացներում:

5. Օժանդակություն պաղեստինյան շարժմանը և հնարավոր ջան-թերի գործադրում պաղեստինյան դիմադրական ջոկատների հետ միաս-նական պայքարն իրականացնելու համար:

6. Օժանդակություն արարական աշխարհում բոլոր առաջադիմա-կան շարժումներին և արարական առաջադիմական ճակատի տակու-մանը ուղղված գործունեության իրականացում<sup>135</sup>:

#### *Տօնտեսության ոլորտում*

1. Երկրում բնոյիանոր կենսամակարդակի բարձրացման իրականացում թե՛ տոցիական և թե՛ տնտեսական ոլորտներում:

134. Հարկե ու տարրեցության մասին օրենք, հայ. 40.

135. Առաջի շարժման ծրագիրը արարական առաջարկում,

Հարկե ու տարրեցության մասին օրենք, հայ. 40.

2. Կենտրոնացում գյուղատնտեսության և արդյունաբերության ճյուղերի վրա;
3. Տնտեսության զարգացման մեջ պետական հատկածի գերակա դերի ընդունում:
4. Քաղաքացիներին տնտեսության զարգացման մեջ ներդրումների հնարավորության ընձեռում՝ հենվելով տնտեսության մեջ բազմակազութածության վրա:<sup>136</sup>

Միջազգային քաղաքականության ասպարեզում

1. 1967 թ. գրավված արարական հոդերի ազատազրում և Պատեստինի արար ժողովրդի ազգային իրավունքների վերադարձ:
2. Հարաբերությունների զարգացում սոցիալիստական ճամրարի երկրների, հատկապնս բարեկամ Խորհրդային Միության հետ:
3. Համագործակցություն աշխարհում բոլոր ազգային-ազատազրական շարժումների և աշխարհի բոլոր առաջադիմական ուժերի հետ:
4. Միրիայի դերի ակտիվացում շմիավորված երկրների շարժման մեջ:
5. Կենտրոնացում Միավորված ազգերի կազմակերպության դերի վրա միջազգային քաղաքականության մեջ:
6. Հարաբերությունների զարգացում և խորացում արարական ազգային խմելիրների և զիսավորապնես պաղեսատինյան հիմնահարցի նկատմամբ արդար դիրքորոշում ընդունած պետությունների հետ<sup>137</sup>:

Գոյություն ունեին ծրագրեր նաև սպասարկման, հայորդակցության ների, առողջապահության, կրթության ու գիտության և այլ ոլորտներում<sup>138</sup>:

Ինչպես տեսնում ենք, ուղղիչ շարժման ծրագիրը, կրնով բավական ընդիանրական բնույթ, որևէ արտասոց դրույթ իր մեջ չեր պարունակում է

<sup>136</sup> Ռուդիշ շարժման ծրագիրը տնտեսության ոլորտում,  
الحركة التصحيحية المجيدة, Հ. 43.

<sup>137</sup> Ռուդիշ շարժման ծրագիրը միջազգային քաղաքականության ասպարեզում,  
نهضال حزب البعث العربي الاشتراكي 1975-1976, 1976, Հ. 118.

<sup>138</sup> Մանրածոսն տհ/ս, 44-45, Հ. 43.

արմատապես շեր տարբերվում Բաասի նախորդ համագումարներում ընդունվող որոշումներից, պարզապես նախկինում ընդունվող որոշումներն ու ծրագրներն ամրողությամբ չեին կատարվում: Նոյեմբերի 16-ի ծրագրում հասլավես կարելի է առանձնացնել նրկի ճշտական սահմանադրության ընդունման, պառամեմտի և Ազգային առաջադիմական նաևատի ճնապիրնան (որով փասորին, ի տարբերություն ճախրասականների, փոխվելու եր վերաբերմները մյուս կուսակցությունների և քաղաքական ուժերի նկատմամբ) կետերը: Տնտեսության ոլորտում հարկ է առանձնացնել ճամանակոր ներդրումների հնարավորության հարցը, որի ներայում եր տնտեսության որոշ շափով ազատականացմանն ուղղված միջոցառումները: Ուրդիշ շարժման ծրագրի միջազգային քաղաքականության որոշումներս ամենակարևորն Արևմտութի՝ մասնավորապես ԱՄՆ-ի համար անսպասելին Խորհրդային Միության հետ ջերմ և քարեկամական հարաբերությունների հաստատման ամերամեջտորդյան ընդգծումն եր: Խցանա արդին նշվել է, ճախրասական վարչակարգը որակվում եր որպես «առցիալիստական և հեղափոխական դեմոկրատական» ուղղվածության, համարվում եր ԽՍՀՄ հզոր հենարանը Մերձավոր Արևելու ամենաշատ և անզիջում դիրքորոշում որդիգրելով տարածաշրջանային հիմնայնությունների նկատմամբ: Խոկ արտարին քաղաքականության մեջ շափակոր և սոցիալ-տնտեսական քաղաքականության մեջ որոշ շափով սպասական հայացքներով հայտնի Հաֆնօ ալ Ասադը քավական ցանկաց անձ եր Արևմտութի, մասնավորապես Խորայիշի Խովանակուրող պետությունների համար: Խոչ վերաբերում է Խորհրդային դեկանարդանը, ապա նրա մկանամբ Ասադի ապագա քաղաքականությունը դեռևս հստակ ծևակերպված չեր և ամենայտ եր մնում, որուն գործարած այն իրողությունը, որ օրինակ, 1969 թ. մարտի 17-ին բրիտանական «Հայի Թեկնորաֆ» թերթին տված հարցազրույցում, պաշտպանության նախարար Ասադը «Սիրիայի ներքին և արտարին բոլոր դժվարությունները կապել եր ԽՍՀՄ-ի հետ»<sup>139</sup>: Այս հայտարարությունն Ասադն արել եր այն

<sup>139</sup> Daily Telegraph, 17.03.1969, բառ՝ Ռ. Կաբագիոյան, Միրիա-ամերիկան հարաբեմ բանակը (1967-1996), Երևան, 2000, էջ 40:

քանից հետո, երբ 1969 թ. Սիրիայում իշխանությունն իր ճեղքը վերցնելու փորձ էր կատարել, սակայն այդ ժամանակ խորհրդային վարչակարգն անվերապահորն էանգնել էր ճախրասասականների կողքին:

Մրագրում կասկած չեր հարուցում նաև Սիրիայի ապագա քազմակողմանի օժանդակությունը ՊԱԿ-ին Խորայելի դեմ համատեղ պայքարում, ինչպես նաև սերտ հարաբերությունների հաստատումը քոյոր արարական երկրների, հատկապես Եգիպտոսի, Լիբիայի և Իրաքի հետ, քանի որ զիսավորապես այդ երկրներն էին դասկում արարական առաջադիմական պետությունների շարքին:

Թեև Սիրիայում տեղի ունեցավ իշխանափոխություն, այնուամենայնիվ, ուղղիչ շարժման սկզբնավորմամբ Բաաս կուսակցությունը պահպանուց իր կարգավիճակը՝ որպես իշխանության կուսակցություն, կամ նոր իշխանության զաղափարական հենարան: Ինչպես հայտնի է, պատերազմի արդյունքների և հետևանքների պատճառով զգայիրներն ընկել եր նաև Բաաս կուսակցության հեղինակությունը: Հետագայում, զնահատելով 1970 թ. նոյեմբերի 16-ի իրադարձությունները, Ասադի ընդօգութ էր. «Մենք հանդիս եկանք նրանց դեմ, ովքեր ներսից զգտում էին մեկուսացնել կուսակցությունը»<sup>149</sup>:

ՊԱԿ-ն միջարարական հարաբերությունների զարգացումն ուղղակիորեն կապում էր Պատեստինի ազատազրության և արարական քոյոր զրավյալ տարածքների վերադարձի հետ, քանի որ արարական երկրները միակարծիք չեին Պատեստինի խնդրի և ընդհանրապես մերձավորարևելյան հականարարության կարգավորման մերուդների և միջոցների ընարության մեջ: Հաստատելով Բաաս կուսակցության ուղղակարական գծի ժառանգականությունը մերձավորարևելյան հականարարության մեջ, սիրիական նոր դեկազրարյունը հաստատում էր, որ նրա գործումներությունը ենրարկված կլինի միակ զիսավոր նախատակի՝ այնպիսի ուժնու պետականության և հասարակության տուղթնամը, որն ընդունակ կլինի հասնել Խո-

١٤٩ مجموعه الخطاب للرئيس والامين العام لحزب البعث العربي الاشتراكي حافظ الأسد .. دمشق، ١٩٩٤، ص. ٢٨.

բայի կողմից գրավված արարական տարածքների ազատագրմանը և պահպանի յան խնդրի լուծմամբ:

Բանակի նկատմամբ մեծ ուշադրությունը կարիք է բացատրել նրանի, որ Ասադն ինքը զինվորական էր և վատահ էր, որ 1967 թ-ի պատերազմում կրած պարտության պատճառներից մեկը ամենաբռնիւակ, փորձառու հրամանատարական կազմ չունեցող և ժամանակակից զննող ժագացքած բանակն էր: Պետք է նաև նշել, որ շնայած Ասադն իշխանության նկազ բանակի օգնությամբ, սակայն տեղի ունեցած իշխանակիրարյան ժամանակ խոսքը չեր գնում բանակի բացարձակ գերիշխանության հաստատման մասին, ինչպես օմնպատմ էր արևմտյան մասուլում: Միրիամի նոր իշխանությունը ճիշտ չեր լինի միանշանակորեն բնորագրել որպես զինվորական վարչակարգ<sup>141</sup>: 21 եռորդ բաղկացած Բաասի մարզային ժամանակավոր դեկազարությունից միայն վեցն էրն զինվորականներ, ներառյալ Հաֆեզ ալ Ասադը<sup>142</sup>: Պարզապես ուղղիչ շարժման սկզբանավորման ենուո երկրորդ բանակի դերն ու առեցությունը զգայիտն աճեց, և այն դարձավ նոր իշխանության գաղափարակիցն ու ենթարանը:

Շնայած այն հանգամամբին, որ Բաաս կուսակցությանը շարունակեց մնալ որպես իշխանության կամ կառուվարդ կուսակցություն, այդուհանդիր ակնհայտ է, որ Միրիայում տեղի ունեցավ հեղաշրջում, ու երկրի և ներքին և արտարին բաղաքականությունը մի շարք ուղղություններում արժատական վիտխանության ենթարկվեց: Որոշ զինանականներ, օրինակ՝ Վրացի հետուազուող Օ.Կաչայան, խոսելով 1970 թ. Միրիայում տեղի ունեցած իրադարձությունների, բաղարական իրադրության և դեպքերի զարգացման մասին, ներկայանալու շի անդրադառնություններում տեղի ունեցած իշխանակիրարյանը և ուղղիչ շարժման սկզբանավորմանը, ըստ երևույթին իիմը ընդունելով այն հանգամամբը, որ հեղաշրջումն իրականացնողները Շույմալիս բասարականները էին<sup>143</sup>: Այդուհանդիր, ինչպես զնում է Դեկինը, շնայած տեղի ունեցածը ճառը հեղաշրջում էր (coop-

<sup>141</sup> Г. И. Мирский, Третий мир. Общество, власть, армия, М., 1976, с. 300.

<sup>142</sup> John F. Devlin, Syria. Modern State in an Ancient Land, p. 58.

<sup>143</sup> О. Ш. Каджак, Коммунистические партии Арабских стран в борьбе за национальную независимость и социальный прогресс, Тбилиси, 1983, с. 344.

ձ'ետք), այն կարող է որուակվել որպես վարչակազմի վտակություն<sup>144</sup>, որի արդյունքում որոշ շափով վերաբայինեցին և սոցիալ-տնտեսական, և հասարակական-քաղաքական, և արտաքին քաղաքական հիմնական ուժ-դրայումները:

Հաֆնազ առ Ասադն իր իշխանության սկզբնական շրջանում որոշ քայլեր իրականացրեց Սիրիան արարական աշխարհում մնկուացումից դորս քերելու և արարական երկրների հետ տնտեսական և քաղաքական կապերը զարգացնելու ուղղությամբ: 1970 թ. դեկտեմբերի 22-ին ստեղծվեց Երկկողմ հանձնաժողով Սիրիայի և Լիբանանի միջև հարաբերությունները կարգավորելու նպատակով, շնայած Լիբանանը քաղաքական ապաստան էր տվել ուղղված շարժման սկզբնափորումից հետո Սիրիայից Լիբանան փախսած սիրիական որոշ քաղաքական գործիչների: Հանդիշելի դեպք Լիբանան սիրիացիների ուղևորությունների սահմանափակումները, որի հետևանքով զգալիորեն բարելավվեցին Լիբանանի և Սիրիայի հարաբերությունները: Կառավարությունը հաշտվողական քաղաքականություն էր վարում արարական այն երկրների հետ, որոնք քննադատվում էին նախկին վարչակազմի կողմից: Ասադի իշխանության զարուց մի քանի օր հետո նրա հրամանագրով հանվեց Սիրիայի օտարյան տարածքով բռնու Սառույան Արարիայի ինքնարդինների վրա դրված արգելքը: 1971 թ. վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները Մարոկկոյի և Թունիսի հետ դեսպանների նակարգակով, միջավայրակով, միջավայրական հարաբերությունները զարգացնելու նպատակով այցեր և ընդունելություններ էին կազմակերպվում Քուվեյթի, Սարույան Արարիայի, ինչպես նաև Ծոցի այլ երկրների պաշտոնատար անձանց համար:

Սիրիայի նոր առաջնորդը զնալով խորացնում էր իր հետինակառությունը արարական աշխարհում և նույնիսկ փորձում էր համեմա զալ հաշտեցնողի դիրում և խաղաղության կոչերով, մասնավորապես՝ 1972 թ. հոկտեմբերին նա կոչ արեց Եմենի հակամարտուու կողմերին վերջ դնել արյունահեղության ու եղայրասպան պատերազմին և արար ժողովրդի ջանքերն ու կարողություններն ուղղել արտաքին վտանգի և ազգի քննամարդ դեմ

<sup>144</sup> Devlin F. John, Syria: Modern State in an Ancient Land, 1983, p. 56.

պայքարին: Նույն ամսին ձեռք բերվեց համաձայնուրյան, որի շնորհիվ հնարավոր դարձավ նետ քաշել հականարուող կողմների զինված ուժերը և բացի ասհմանները<sup>145</sup>: 1972 թ. նոյեմբերին, շարունակելով իր կարելի է ուժին ինչփրահի, այսինքն՝ բաց դրույթի բաղադրականությունը արարական օջախավորք երկրների նկատմամբ, Ասադը պետական այցելեց Արև Դարի և Դուրայ<sup>146</sup>, որտեղ արժանացավ ջերմ ընդունելուրյան: Միքայիլ և Եմիրուրյանների միջև ծագաբած համազործակցության շնորհիվ Միքայան նրան տրամադրում էր տարրեր ուրբաթի նախագծաներ՝ փոխարինը նավթարդյունահանող հարուստ արարական մասնակիություն<sup>147</sup>: Հաֆեզ ալ Ասադի վերոնշյալ բայցերը ևս վկայում են այն մասին, որ նա առաջնորդվում էր ոչ միայն զարագացնական համոզումներով և բաղադրական վերացական սկզբումբներով, այլ նախապատվություն էր տալիս իրաւուսական բաղադրական նկատուակներին և պետուրյան տնտեսական շահերին:

Ներին բաղադրական որորուում սահմանափակվեցին 1962 բականից գործող արտակարգ իրավուրյան միջոցառումները, նվազեցին արտասահման կատարվող ճանապարհությունների սահմանափակումները, նաև անը վերանայվեցին բաղադրական բանտարկվածների գործերը և սկզբնական շրջանում որոշ շափով կրծառվեց բաղադրական հետախուզության ծառայությունների գործունեությունը<sup>148</sup>: Ասադը զգալի նեղմեց արտասահման զինված համար Միքայիլ բաղադրականների վրա դրված արգելուները, ինչպես նաև բոլյառեց արտասահմանյան մասովի ազատ մուտքը երկիր՝<sup>149</sup>:

Հաֆեզ ալ Ասադը սկսեց որակապես նոր բաղադրականություն գարել նաև Պատեստինի դիմադրության շարժման նկատմամբ: Ի տարբերություն նախորդ Ճախրասական բաղադրական գործիչների, որոնք փաստու-

<sup>145</sup> Խոյմ անդրու, էջ 149–151:

<sup>146</sup> Արև Դարին և Դուրայ անոնք էին 1971 թ. դվկոմքների 2-ին կազմակիրված Շրաբական Սիառայակ Ենիշուրյանների պատուրյան կազմի մեջ:

<sup>147</sup> Լուսան Բերլան, Հանձնական. մասնակիություն, էջ 151:

<sup>148</sup> Նոյմ անդրու:

<sup>149</sup> Mosahe Ma'oz, *Assad: The Sphinx of Damascus. A Political Biography*, p. 77.

բնակչության մասնակի քաղաքացիություններն ու զինված խմբավորումներն օգտագործել ի հականշիր քամակի, Ասադի իշխանության գալուց ի վեր Համասկուս խիստ հսկողության տակ էր պահում իր տարածքում տեղակայված Պ.Ն.Հ.-ի պարտիզանական ջոկատներին և ՊԱԿ-ի այլ զինված խմբավորումներին: Կարգավորվեց նաև Բաասի կողմից «աս-Սահիկ» կազմակերպության դեկավարման ոճը<sup>150</sup>: 1971 թվականի ապրիլից սիրիական կառավարության կողմից արգելվեց անվերահսկի պարտիզանական գործունեությունը Պուլանի քաղաքությունների շրջանում: Մեր կարծիքով՝ այս քաղաքականությունը նպատակ ուներ վերջ դնել Սիրիայի տարածքից կատարվող սարդիչ գործություններին և հնարավորին շափ ժամանակ շահել՝ Խարային դեմ պատրիազմին համակարգված նախապատրաստվելու համար:

Հաֆեզ ալ Ասադը կոնկրետ քայլեր ծննդարձեց նաև արարական պետությունների հետ տնտեսական և քաղաքական միավորման քաղաքականության իրականացնելու ուղղությամբ: Սիրիան միացավ Եզիզուտուսի, Սուլամի և Լիբիայի կողմից 1970 թ. նոյեմբերին ստորագրված Տրիպոլիի դեկլարացիային<sup>151</sup> Արարական պետությունների դաշնություն ստեղծելու վերաբերյալ: 1970 թ. նոյեմբերի սկզբին Եզիզուտուսի նախագահ Անվար առ Սադաթ համաձայնություն էր տվել Սուլամի նախագահ Նիմեյրի և Լիբիայի նախագահ Կառտաֆիի հետ ստեղծել միություն երեք պետությունների միջև: Հետագայում որոշվեց Սուլամին հանել միությունից ներքին իրադրության պատճառով և Սիրիայան մեջ ընդգրկվել Սիրիային: Սիրիան, Եզիզուտուսը և Լիբիան 1971 թ. ապրիլի 17-ին<sup>152</sup> հայտարարեցին Արարական Պետությունների Դաշնության ստեղծման նախին<sup>153</sup>: Սիրիայի, Եզիզուտուսի և Լիբիայի միջև դաշնության պայմանագրի զինավոր դրույթներից մեկն այն էր, որ նրա իշխանությունները կարող են իրենց իրավունք վերապահել միջամտել դաշնության անդամ նրկություն ներքին գործերին

<sup>150</sup> نظال حزب البعث العربي الاشتراكي ١٩٤٣-١٩٧٥، ص. ١٢٤.

<sup>151</sup> Սարիլի 17-ը Սիրիայի անկախացյալ օրն է:

<sup>152</sup> Новейшая история Арабских стран Азии, с. 93.

<sup>153</sup> ١٩٧١/٩/٣، المصور، القاهرة.

այն դեպքում, եթե իրական վտանգ սպառնա հանրապետություններից մեջ կայունության ու անվտանգությանը: Դաշնության ստեղծման կապակցությանը երեք հանրապետություններում էլ անցկացվեցին հանրարածեր, որոնց բնակչության ճնշող մեծամասնությունն արտահայտվեց նրա ստեղծման օգուին: Սիրիայի նախագահը, խոսեղով այս մասին, հայտարարեց. «Դաշնությունը առեղծվում է մեր երկրների տնտեսական, ռազմական և այլ ռեսուրսների կենտրոնացման նպատակով: Դաշնային պետությունը կանոն ամեն հնարավոր և անհրաժեշտ բան, որպեսզի տնակ լինի պաշտովամել իր շահերը»<sup>133</sup>: Այդուհանդերձ, հարկ է վաստել, որ արարական այդ երեք պետությունների միջև միավորման գործընթացներն ոչ մի իրական արդյունք չտվեցին՝ կրելով ձեւական ու դեկարատիվ բնույթ, և բոլոր որոշումները հիմնականում մնացին բորի վրա: Մեր կարծիքով՝ առ տեսի ունեցավ այն պատճառով, որ արարական վերոհիշյալ սփյուռյանների դեկավարներից յուրաքանչյուրը հետապնդում էր իր սեփական շահերը: Եթե Եզիզուսի նախագահ Սադամ, անդամակցելով Պաշտությանը, նպատակ էր հետապնդում ամրապնդել իր վիրքերը նոկալ և ցույց տալ իր հավատարմությունը Նասերի սկզբունքներին<sup>134</sup>, ապա նոր իշխանության եկած Ասադը ցանկանում էր ցույց տալ իշխանության նոր մուտքումները արարական երկրների հետ հարաբերությունների ոլորտում, իր հավատարմությունը Բաասի հոչակած միասնության գաղափարներին, դուրս գալ արարական աշխարհում քաղաքական մնկուացումից, սակայն ամենակարևորը Եզիզուսի հետ ուսզմավարական համարդությունների վերականգնումն էր, որովհետև Ասադը գիտակցում էր, որ առանց Եզիզուսի հնարավոր չէ որևէ էական հաջողության հասնել համարարական հիմնահարցում:

Ասադը ցանկանում էր մերժել նաև 1963 բվականից ի վեր բարկած հարաբերությունները Սիրիայի և Իրաքի միջև, որոնք իրմանականում կապված էին կուսակցական խնդիրների հետ: Հայտնի է, որ Բաասը համարական կուսակցություն էր՝ իր համազգային դեկավարությամբ: Այն ուներ իր կազմակերպությունները առանձին արարական երկրներում՝ մար-

<sup>133</sup> A. J. Dawisha, Egypt in the Arab World. The elements of Foreign Policy. A Halsted Press Book. John Wiley and Sons, New York, 1976, p. 197.

զային դեկավարություններով։ Համապարական Թաաս կուսակցության ամենաառածնու կազմակերպությունները Սիրիայում և Իրաքում էին։ Սիրիա-Իրաքյան հարաբերությունների լարվածության զիսավոր պատճառները կուսակցական-գաղափարական տարածայնություններն էին և մերձավորարենելյան խնդրի վերջնական լուծման տարբեր նոտեցումները<sup>155</sup>։ Հասուկանշական է, որ 1972 թ. մարտի 24-ին Սադամ Հուսեյնի զիսավորությամբ իրաքյան պաշտոնական պատվիրակություն այցելեց Դամասկոս, և տեղի ունեցած քանակցությունների արդյունքում ձեռք բերվեց միասնական և փոխհամաձայնեցված դիրքորոշում պաղեստինյան հիմնահարցի լուծման գործում<sup>156</sup>։ Եթե 1972 թ-ի հունիսի 1-ին Իրաքի հեղափոխական հրամանատարության խորհուրդը (ՀՀԽ) որոշում ընդունեց ազգայնացնել «Իրաք Վերընդուռ» նավային ընկերությունը, Սիրիայի նախագահ Ասադը իր աջակցությունը հայտնեց Իրաքի վճռական դիրքորոշմամբ<sup>157</sup>։

Այսպիսով, 1970 թ. նոյեմբերի 16-ին Սիրիայում Հաֆնա աղ Ասադի կողմից հոչակվեց ուղղիչ շարժումը, որն հանդիսացավ երկրի ներքին և արտարին քաղաքական, ինչպես նաև սոցիալ-տնտեսական կյանքի զարգացման կարևոր փուլի սկիզբ։

<sup>155</sup> Н. О. Оганесян, Отношения Иракской Республики со странами Арабского Востока, Ереван, 1985, с. 51

<sup>156</sup> لوسان بيترلان، حافظ الأسد. مسيرة مناضل، ص. ۱۴۹

<sup>157</sup> Н. О. Оганесян, Отношения Иракской республики со странами Арабского Востока, с. 61

**ԳԼՈՒԽ**  
**ՈՒՂՂԱՉ ԸԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԾԱԿԱՐՄԱՆ  
 ՆՈՐ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՄԻՐԻՎԱՑՈՒՄ**

2.1 Ժամանակավոր կառավարության և ժողովրդական ժողովի  
 ստեղծումը: Նախագահական համբարկմի ամցկացումը Սիրիայում և  
 Հաֆնազ ալ Ասադի ընտրվելը Սիրիայի նախագահ

1970 թ. նոյեմբերի 18-ին, մինչև նոր նախագահական ընտրությունները, Սիրիայի նախագահ նշանակվեց Ահմադ ալ Խարիրը, իսկ երկրի նախարարների խորհրդյուն նախագահ և ԱՎՍԿ-ի սիրիական նախային գլխավոր քարտուղար դարձավ Հաֆնազ ալ Ասադը, որը պաշտպանության նախարար նշանակեց իր ընկեր և համախոհ Մոստաֆա Տիասին: Ասադի կողմից նոյեմբերի 21-ին կազմավորված կառավարությունը համույսանուն էր «ազգային միասնության» կառավարություն, որտեղ՝ ինչպես բխում էր ուղղիչ շարժման ծրագրից և երկրի բոլոր առաջավիճակներ կազմակերպությունների հետ համագործակցության ամերաժեշտությունից, ներկայացված էին Սիրիայի գրեթե բոլոր քաղաքական ուժերը, այդ թվում և Սիրիայի կոմոնիւստական կուսակցությունը, որով օրինական գործունեության իրավունք ստացավ: Հաֆնազ ալ Ասադն առաջարկեց երկու կոմոնիւստական ընդորկվել նոր ձևավորված կառավարության կազմում: պետականախարար դարձավ ՍԿԿ-ի կենտրոնի քաղյությունի անդամ Զահիդ Արդ աս Սամադը, իսկ հաղորդակցությունների նախարար՝ Աւել-ի կենտրոնական կոմիտեի անդամ Օնար աս Սիրահն<sup>158</sup>: Ասադը ԽԱՀԱ-ի կողմից դնուս մնում էր անհայտ ու չբացահայտված քաղաքական գործիչ, առավել ևս, որ նա մինչ իշխանության գալը չեր առանձնանում իրապարակային գործունեությանք, իսկ կոմիտեի քարծրաստիճան անդամների ընդորկվումը կառավարությունում նախատակ էր հետապնդում քայլացական վերաբերմունք շահել իրորդային Սիրիայն կողմից, ինչը հնարա-

<sup>158</sup> Սարգսյան Պ. Հ., Արարական Արևմերի կոմոնիւստական կուսակցությունների և առաջադիմական տեսչի պայքարը զննելուառողջական և սոցիալ-տնտեսական վերափոխությունների հաճար, Երևան, 1986, էջ 59:

վորություն կտար ակնկալել նոյն բազմակողմանի՝ ուսադական, բաղարական և տնտեսական օգնությունը: Բացի բասարականներից ու կոմունիստներից կառավարության մեջ նուան նաև Արարական տոցիալիստական միության, Արարական տոցիալիստական շարժման և Սոցիալիստ-յունիոնիստների շարժման ներկայացուցիչները:

1971 թ. փետրվարի 17-ին նախագահ Ահմեդ ալ Խարիբի հրամանագրով կազմակորչեց Սիրիայի Ժամանակավոր իիմնադիր խորհուրդը (մաջլիս բասիսի), կամ Ժողովրդական ժողովը (մաջլիս աշ-շաար), որտեղ 173 պատգամավորներից<sup>159</sup> 87-ը ԱՎԱԿ-ի անդամներ էին: Մնացած տեղնքը բաշխվեցին կոմունիստների, նասերականների, ինչպես նաև արհեստական կազմակերպությունների ներկայացուցիչների միջև: Հիմնադիր խորհրդում ներկայացված էր նաև շորս կին: Հիմնադիր խորհրդի անդամները ներկայացնում էին Սիրիայի տարրեր շրջաններ և հասարակության խավեր, որոնք բացի մի շարք օրինագծերի մշակումից, սկսեցին աշխատել նաև պետության նոր մշտական սահմանադրության նախագծի վրա<sup>160</sup>; 1971 թ. փետրվարի 22-ին ելույթ ունենալով ժողովրդական ժողովը նույաշրջանի բացմանը՝ Ասադն ասաց. «1970 թ. նոյեմբերի 16-ի Բաասի մարզային Ժամանակավոր դեկանարարության հայտարարությամբ<sup>161</sup> նոր Ժամանակաշրջան սկսվեց հեղափոխական գործընթացի պատմության մեջ, և այդ Ժամանակաշրջանը սկսվում է ժողովրդական խորհրդի գումարությունք»: Ասպար Փաստեց, որ այստեղ ներկայացված են հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչները և օգտագործեց իր հնարած «Ժողովրդական դեմոկրատիա» տերմինը, որը հետագայում սերտորեն կապվելու էր Ասադի անվան և նրա բաղարականության հետ ու համարվելու էր երկրում ուղղիչ շարժման գլխավոր ծնորքերությներից մեկը: Նա շեշտեց, որ ժողովրդական կազմակերպությունները և արհեստական միությունները մեծ մասնակցություն պետք է ունենան օրենսդրա-

<sup>159</sup> Ըստ որոշ տվյալների՝ պատգամավորների թիվը 179 է:

<sup>160</sup> لوسان پետրان, حافظ الأسد. میرة متاحف, ص. ۱۳۹.

<sup>161</sup> Պաշտոնական նյութերում օգտագործվում էր Թայմ «Նոյեմբերի 16-ի առջիկ շարժում» կամ Բաասի մարզային Ժամանակավոր դեկանարարության հայտարարության անվանմանը՝ իսկապահությունը կամ «Ոշխանականություն» տերմիններից:

կան նախագծերի մշակման և ընդունման գործընթացներում<sup>162</sup>: Նա ասաց, որ ժողովն իր վրա վերցրել է նրկու գլխավոր պատասխանատվորյան՝ օրինադրական, և 1963 թ. Թաասի հեղափոխության հիմնական մկրտչներն արտահայտող պետության մշտական սահմանադրույան նախագծի մշակման պատասխանատվությունը: Խոսելով տնտեսության նախն՝ ընդդում էր, որ պետությունն ամեն կերպ խրախուսելու է ամեստական նախաձեռնությունները, մասնավոր հաստվածի կայացման հնարիափորությունները: Նա այն կարծիքն էր հայտնում, որ տնտեսության մեջ նախավոր սեփականության մասնակցությունը պետք է ծառայի հասարակության զարգացմանը<sup>163</sup>:

Արտաքին քաղաքականության ոլորտում ինչպես հայտնի է, սկզբնական շրջանում Ասադը նույնական չէր ընդունում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ընդունած թիվ 242 բանաձևը և ելույթ ունենալով Սիրիայի ժողովության ժողովի առաջին նիստում ասաց, որ 242 բանաձևը չի արտահայտում ոչ Պատիստիմի արարական ժողովովի, ոչ արաբական ազգի շահերը: Նա նաև նշեց, որ «Սիրիայի կարծիքով՝ մերձավորարևելյան կարգավորման համար քաղաքական պայքարը հանդիսանում է կարևոր գործոց զինված պայքարի օժանդակ գործոնների բվում»<sup>164</sup>:

Սիրիայի վարչապետի պաշտոնը ստանձնելոց հետո Ասադի առջև քացի հրատապ տոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքական մեկուսացման խնդիրներից, կանգնած էին նաև մի շարք այլ խնդիրներ, որոնցից պնտը է նշել պետության պաշտպանութակության ամրապնդման, բանակի վերաօդինման և քարոյական ոգու քարձրացման, պետական կառավարման համակարգի բարեփոխումների. Թաասի կուսակցության դերի և հեղինակության քարձրացման, երկրի բոլոր քաղաքական ուժերի հա-

<sup>162</sup> 1971 թ. գնումայի 22-ի Ասադի ներքո ժողովրդական ժողովի նույնացման մասին:

مجموعة خطب الفريق القائد حافظ الأسد. الكتاب الأول.

١٤٣-٩١. ١٤٧٦/٨/٣ - ١٤٧٧/٢/٢٤.

<sup>163</sup> Խոսյա անդում, էջ 97:

<sup>164</sup> 1476/2/22. Զմեռ. Զմեռ.

մախմբնան և որ ամենակարևորն էր նոր իշխանության լօգիտիմության խնդիրը, որն ուղղված շարժման հայեցակարգային հիմնական դրույթներից էր<sup>185</sup>: Վերոհիշյալ խնդիրները լուծելու համար Հափեզ ալ Ասադը սկսեց իշխանության օրինականացման գործընթացը: Լինելով նրերի փաստացի դեկապարը և ամրող օրենսդիր և գործադիր իշխանությունը կենտրոնացնելով իր ծնորում նա այդուհանդերձ հասկանում էր, որ, ներկայացնելով երերի ալավիական փորրամասնությունը, վերցրել է իշխանությունը երկրում ռազմական հեղաշրջման միջոցով, քեզ առանց կրակոցների, սպանությունների, զանգվածային ճերրակադրությունների և արյունահեղության, սպակայն բանակի անմիջական մասնակցությամբ և հենվելով նրա աջակցության վրա: Բացի այդ՝ նա քաջ գիտակցում էր, որ իր իշխանավարության շրջանում, եղնելով բազմարիվ օրյեկտիվ և սույնեկտիվ պատճառներից, նենվելու է բանակի, անվտանգության և հատուկ ծառայությունների բազմաշերտ հաճակարգի վրա, որը լինելու է վարչակարգի պահպանման հիմնայումը, և որտեղ գերակշխութիւն էին կազմում Սիրիայում փորրամասնության հաճարվող արավիւները: Նրանք, ինչպես հայտնի է, սուննի ազգաբնակչության մեծանասնության և ուղղափառ կրոնական գործիչների կողմից նույնիսկ շիմ ընդունվում որպես մահմեջականներ, այլ շատ դնարքերում համարվում էին նաև հերետիկոսներ և անհավատներ: Բացի այդ Հափեզ ալ Ասադն ու նրա հայացքները ժողովրդի լայն շրջաններին, ինչպես նաև կրոնական գործիչներին դեռևս անհայտ էին, այլ կիրայ ասած նա անհայտ էր որպես քաղաքական ականավոր գործիչ: Ասադը, լինելով պաշտպանության նախարար և Բաասի սիրիական մասնաճյուղի գինվորական խմբակցության ղեկավար, հայտնի էր միայն քաղաքական դեկապարության շրջանում ու քանակում և սկզբանական շրջանում մեծ վստահություն ու հեղինակություն էր վայելու միայն գինվորականների կողմից: Ահա այս իրողություններից եղնելով՝ Ասադի և նրա ալավիական շրջապատի համար առաջնահերթ խնդիր էր դարձել իշխանության օրինականացման հարցը, միայն դրանից հետո հնարավոր կլիներ անցնել

<sup>185</sup> Գ. Ղարիբամյան, Սիրիայում ուղղված շարժման հայեցակարգային ընու խնդիրների շուրջ, Երևանասրդ արևելագետների համբախտական ԽՍՀ գլուխան ճառաշրջան, գնդացումների թեմպը, Երևան, 2003, էջ 35:

երկրի պետական կառավարման համակարգի բարեփոխումների: Ասադը նուազիր էր Սիրիայում անցկացնել համաժողովրդական հանրաքանչ պետությունը դեկազրելու գործում ժողովոյի կողմէոց վատահոքյան ստանալու համար:

1970 թ. նոյեմբերի վերջից իրադրությունը երկրում վերահսկելի դարձնելոց հետո Ասադը, այսպէս կոչված, նախընտրական քարտագ սկսեց ամրութ երկրու մեկ՝ այցելելով Սիրիայի բոլոր մուհաֆազաները (ճարզերը), մեծ ու փոքր քաղաքներ, գյուղեր, ինչպէս նաև տարրեր կազմակերպություններ, արհմիուրյուններ, գիտական, կրթական ու ճշգկութային հաստատություններ՝ հանդիպելով հասարակ ժողովութիւններ, հասարակության բոլոր խավերի ներկայացուցիչների հետ և նրանց ներկայացնելով իր հայացքները, ծրագրերը, ինչպէս նաև իշխանակութային իրական պատճառները, ուղղիչ շարժման պատճական անհրաժշտությունը Սիրիայի համար, նրա քաղաքականության իշմական նպատակները, սկզբունքները, իր նվիրվածությունը Բաաս կուսակցությանը, նրա զաղափարախոսությանը՝ ընդգծելով կուսակցության ներայական դերը սիրիական հասարակության զարգացման գործունեութեանը ուղակավարների համար, նա չէր ցամկանում արտերկրի առաջնորդների կողմէից դիմումի որպէս իշխանությունը զաված բոնապետ և այդ նպատակով իր հայացքներն ու ծրագրները հասանելի դարձնելու համար հանդիպում էր նաև Սիրիայում հավատարմագրված արարական և արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչությունների և առարկությունների դեկազրելուն հետ<sup>166</sup>, որոնց ներկայացնում էր սիրիական ժողովրդի արդարացի և օրինական պայքարը՝ հանուն հայրենի հողերի ազատագրման, ինչպէս նաև Պահեստինի եղբայրական ժողովրդի սուսահարկած իրավունքների վերականգնման: Այդ գործում նա շեշտում էր լի-վանագետների մեծ դերը, որոնց գործունեության միջոցով է ձևավորվում միջազգային համբուրյան կարծիքն ու դիրքորոշումը:

<sup>166</sup> مجموعه خطب القائد حافظ الأسد، ١٩٧١/٨/٣٠ - ١٩٧٠/٢/٢٤، ص. ١٥٦.

1970 թ. նոյեմբերի 24-ին Ասադի այցելեց աշխատավորների համբույսնուր արհմիւրյան կենտրոնակայան, որտեղ ելույր ունենալով նասնավորապես ասաց. «Մենք տարբերություն չենք դնում զինվորականների, աշխատավորների, զյուղացիների և մյուս ոլորտներում զբաղված մեր հայրենակալիցների միջև։ Նրանք բոլորը մեր պայքարող ժողովությի նասնիկներն են և պետք է օժուկած լինեն հավասար իրավունքներով և պարտականություններով։ Բանակի և ժողովրդի համագործակցությունը պետք է հանգեցնի տցիալիստական հասարակարգի կառուցման, և մեր գործունուրյան հիմնական նպատակը պետք է լինի բանակի մարտունակության բարձրացումը և դրա միջոցով զրավիած արարական հողերի ազատագրումը»<sup>167</sup>: «.....Ժողովրդական կազմակերպությունները պետք է հիմնական և գործուն դեր ունենան հասարակության կառուցման, ժողովրդի դեկավարման և աշխատավորների, զյուղացիների, ուսանողների և մյուսների շահերի պաշտպանության գործում»<sup>168</sup>:

1970 թ. նոյեմբերի 25-ին նա նախարարների խորհրդի շենքում հանդիպեց տարբեր արհեստակցական միությունների պատվիրակությունների հետ, որտեղ հաստատեց իր մտադրությունները Բասս կուսակցության դեկավարությամբ Ազգային առաջաշխատական ճակատ ստեղծելու ուղղությամբ, որը պետք է համախմբի սիրիական հասարակությանը կորցրած տարածքների ազատագրման համար<sup>169</sup>:

Հանդիպելով Դամասկոսի առևտրականներին ներկայացնող պատվիրակությամբ՝ Ասադի ասաց. «Մենք ունենք ներքին խնդիրներ, քայլ և զիսավոր պարտականուրյուն, որը զրավիած հողերի ազատագրումն է, և բոլոր քաղաքացիների ջանքերը պետք է ուղղվին այդ նպատակի իրականացմանը։ «.....Մենք պետք է աշխատենք տնտեսության մեջ համբային հատվածի ամրապնդման ուղղությամբ, միևնույն ժամանակ զնահատելու, խրախուսներու և մեծ նշանակություն ենք տալու նախաձեռ-

<sup>167</sup> Ասադի 1970 թ. նոյեմբերի 24-ի ելույրը աշխատավորների համբույսուր սրմանության կենտրոնակայանում,

مجموعه خطب الفريق اللائد حافظ الأسد. الكتاب الأول. ٢/٢٤ - ١٩٧٠/٨/٣ - ١٩٧١، ص. ٥

<sup>168</sup> Նոյեմ անդում, էջ 6:

<sup>169</sup> Նոյեմ տեղում:

նորյաններին, հնարավորություններ ենք ընծեռելու և բացելու ենք ճանապարհները բոլոր աշխատանքը և նախաձեռնող մարդկանց առջև»<sup>170</sup>.

Ասայի հաճախ էր անմիջականորին համեյառն ժողովրդի հետ, և ոչ միայն վակ վայրերում, այլև դրում՝ հրապարակներում, փողոցներում և այլն, մասնակցում էր հանրահավաքների, որտեղ շեշտում էր ժողովրդի հետ անմիջական շիման կարևորության և անհրաժեշտության մասին, ընդունում, որ դեկավարության և ժողովրդի միջև համագործակցությունը ժամանակի պահանջման է: Նա շեշտում էր, որ նոր իշխանությունը գուման է ժողովրդի վատահության և աջակցության կարիքը ուղղիչ շարժման ծրագրով նախատեսված միջոցառումների բայլ առ բայլ իրագործման համար:

1971 թ. հունվարից Ասայի սկսեց հիմնականում այցելել մարզեր և տարրեր քաղաքներ: 1971 թ. հունվարի 9-ին այցելեց Սիրիայի հյուսիսային մայրաքաղաք Հալեպ, որտեղ հանդիպելով զինված ուժերի բազմաթիվ սպաների հետ՝ մասնավորապես ասաց. «Հայրենիքի համար զինված մեր նահատակների և հերոսների զործը շախուր է կիսատ բողնենք. և նրանց արժանին մատուցելու ամենաճիշտ ճանապարհը կը մի շարունակել պայքարը, ազատազրման ճանապարհը մինչև հաղթանակը»<sup>171</sup>:

1971 թ. հունվարի 14-ին Հաֆեզ ալ Ասադի իր հայրենի Լարաբիայում հանդիպեց բնակչության, ինչպես նաև զինված ուժերի սպաների հետ, որտեղ մասնավորապես հայտարարեց. «Նոր բանակը կուսակցական բանակ չէ և ոչ էլ քաղաքական կուսակցություն, այլ նա զաղափարական բանակ է, որը պաշտպանում է Բաաս կուսակցության գաղափարախուսությունը և աշխատում է իրականացնել զեկավարության կողմից ծրագրված մասնակները՝ ի շահ ժողովրդի: ԱՎՍԿ-ի սկզբունքները

<sup>170</sup> Դամասկոսի առևտականների պատվիրակության հետ հանդիպմանը ընթացքում Ասադի մշուրից Խطب գրի գործության հաջողական առաջարկությունը՝ աշխատում հայտնի է ԱՄՆ պատմագրությունում:

Հ. Ա. Վ. 1971/8/30-1970/2/26.

<sup>171</sup> 1971 թ. հունվարի 9-ի Ասադի կոյքը Հալեպում զինված ուժերի սպաների հետ հանդիպմանը ընթացքում, աշխատում հայտնի է ԱՄՆ պատմագրությունում:

Հ. Ա. Վ. 1971/8/30-1970/2/26.

ցույց են տալիս, և այդպիս է կարծում նաև ժողովուրդը, որ նախորդ դեկա-  
վարությունը չէր գործում ի շահ ժողովրդի, ինչպիս նաև շեղվել էր կուսակ-  
ցության օրենքներից և գաղափարներից»<sup>172</sup>:

1971 թ. Խոնվարի 12-ին Ասաղը մասնակցեց Լարարիա մոռհաֆա-  
զայում տեղի տեսեցած մեծ ցույցին, որտեղ, ելույր ունենալով, ժողովրդին  
հիշեցրեց, թե ինչպիս է այդտեղ անցկացրել իր պատասխանական տարիները,  
կրթվել, առվորել և միաժամանակ համախմբել ուսանողությանը և պայքա-  
րել երկրի անկախության համար: Ասաղը շեշտում էր իր հայրենակիցնե-  
րի հերոսությունը, աննկուն պայքարն ու սկզբունքայնությունն: ‘Նա կոչ ա-  
րեց շարունակել պայքարը նույն ոգով, ամրապնդել համաձայնությունն ու  
վստահությունը ժողովրդի և դեկավարության միջն’ ի շահ ուժեղ հասա-  
րակության և պիտության կայացման: Նա ժողովրդին տղեկացմում էր,  
որ Հայեափից մինչև Լարարիա կանգ է առնել բոլոր բնակավայրերում և  
գյուղերում: Ցանկանալով քարծրացնել կուսակցության հեղինակությու-  
նը՝ նա շեշտում էր, որ Թաաղ ժողովրդի կուսակցությունն է, նրա պայքա-  
րի առաջամարտիկը: Ասաղը չէր ուրանուեց անցյալը, չափազանց մեծ  
նշանակություն էր տալիս 1963 թ. հեղափոխությանը Սիրիայի պատմութ-  
յան մեջ, նշում էր, որ Թաաղ հեղափոխական կուսակցությունն է: Ասաղը  
համենև էր գալիս նաև արարական միասնության կարգախոսներով՝  
պարզաբանելով, որ դա մեկ միասնական ազգի միավորումն է, այլ ոչ թե  
իշխանությունների կամ կառավարությունների: Նա ընդգծում էր սոցիա-  
լիզմ կառուցելու անհրաժեշտությունը՝ այն համարելով արդարացի հա-  
սարակարգ՝<sup>173</sup>:

<sup>172</sup> 1971 թ. Խոնվարի 14-ին Լարարիայի բնակչության ներ համելվածան Ժամանակ Ասաղի  
ելույթից:

ՀԱ-17, 1971/8/20-1971/8/2/224

<sup>173</sup> 1971 թ. Խոնվարի 12-ին Լարարիայում տեղի ունեցած համահավարի բնակչության  
Ասաղի ելույթից:

94-61, 1971/8/20-1971/8/2/224

1971 թ. փետրվարի սկզբին Ասադին այցելեց Մոսկվա: Նախագահական հանրապետից առաջ սա կարևոր քայլ էր Ասադի կողմից, քանի որ ԽՍՀՄ դեկանարությունը պիտի է տեղյակ լիներ մի շարք հարցերում Սիրիայի նոր իշխանության դիրքորոշման, ծրագրերի և քաղաքական ուղղվածության մասին: Թագի այդ, ինչպես արդեն նշվել է, Սիրիային անհրաժեշտ էր անհապաղ ուղղաւոնինիկական և մասնագիտական օգնություն՝ զինված ուժերի վերակազմակերպման, ժամանակակից զիմանակական նորույն ապահովման և մարտունակության բարձրացման համար: Մինչ այդ Ասադը արդեն բազմարիվ անգամ համեմատ էր Եկեղ Խորհրդային Սիրիային սիրաշահելու և նրա հետ բազմակողմանի համագործակցության պատրաստակամության հայտարարություններուն: ԽՍՀՄ կոմիտեի կենտրոնի անունից նրա պատվին տրված ճաշի ընթացքում, նույր ունենալով Ասադը ՎԿԱԿ-ի սիրիական նախօային ժամանակավոր դեկանարության և սիրիական ժողովրդի անունից, զերմ ողջույններ հղեց խորհրդային դեկանարության ու ժողովրդին: Նա մասնավորապես ասաց. «Մեր այցելությունը Շեր քարեկամ երեկից տեսի է ունենամ մի քայլ ժամանակաշրջանում, նրա արար ժողովրդը պայքարում է սիրիական ժողովրդային ինքնանդատական ուժերի ազատագրման համար»<sup>174</sup>: Ասադը խորհրդային դեկանարությանը տեղեկացրեց, որ ուղիղ շարժման սկզբնավորումից ի վեր կառավարությունը մի շարք միջոցաւումներ է ձեռնարկել երեկի տեսնանական դրաւյունը քարեւավագիր և ներքաղաքական կայումություն ու միասնություն ստեղծելու ուղղությամբ: Ասադը հայտարարեց, որ իրենց պայքարում իրենց հենվելու և քարեկամ ստցիալիստական պետությունների վրա՝ ԽՍՀՄ գլխավորությամբ, որն անվերապահութեն պաշտպանում է արար ժողովրդի շահերն ու իրավունքները: Հաֆնազ ալ Ասադը շնորհակալություն հայտնեց նաև ԽՍՀՄ օգնությամբ Սիրիայում ձեռնարկված մի շարք կարևոր ծրագրերի

<sup>174</sup> 1971 թ. փետրվարի Մոսկվայում ԽՍՀՄ կոմիտեի կենտրոնի անունից Ասադի պատվին սրված ճաշի ժամանակ նրա կույքից.

مجموعة خطب الفريق القائد حافظ الأسد . الكتاب الأول، ١٩٧٠ / ٢ / ٢٤ . ص ٧٥

իրականացման համար, որոնցից ամենազիստորն ու հակայական մասշտաբներ ունեցողը Եփրատի ջրամբարտակի կառուցման ծրագիրն է<sup>173</sup>: Ասադն անվերապահ աջակցություն գտավ խորհրդային դեկավարության կողմից և նրա հայտարարությունները Մոսկվայում նման ոգով և հակասիոնիստական և հակաարևմտյան ուղղվածությամբ սկիզբ դրեցին տարբեր ոլորտներում սերտ համագործակցության և ուղղմավարական հարաբերությունների հաստատմամբ Սիրիայի և ԽՍՀՄ միջև:

Ընդհանուր առմամբ Ասադի քարոզարշավն ու հանդիպումները ժողովոյի հետ կարելի է որակել հաջողված, նրա հեղինակությունը երկուու օրբառորք աճում էր: Իր հանդիպումներում և ելույթներում նա բացի ժողովոյի վատահությունը ստանալուց, նրան նախապատրաստում էր պայքարի: Գեներալ Ասադը աշխի էր ընկենում հոհտորական ընդունակությամներվ և հանգատարաստից ժողովոյի առջև նրկար և ուղղակի ելույթ ունենալու կարություններուց: Նա պարզաբանում էր, որ բոլոր նախատեսվող և ներքաղաքական, և սոցիալ-տնտեսական ծրագրերն ու միջոցառումները միջոց են լինելու ամենազիստական հասնելու համար, այն է դիմակայումը Խորայելի կողմից իրականացվող քաղաքականությանը, նրա կողմից բոնազալթված հողերի ազատագրումը: Ասադի նպատակն էր այս գաղափարները դարձնել սիրիական ողջ հաստրակության սեփականությունը, որ սիրիական ժողովուրդը, անկախ իր խայտարդես էրնիկական ու կրոնական կազմից, դաստիարակվի հենց այս ոգով, ինչն իր երրին նրկար տարիներ, նույնիսկ ամենապայյունավտանգ ներքաղաքական և հաստրակական լարված իրադրություններում համեստանալու էր վարչակարգի և Բաաս կուսակցության իշխանության պահպանման կարևոր գրավականներից մեջը:

1971 թ. մարտի 12-ին Սիրիայում նրա պատմության մեջ առաջին անգամ տեսի ունեցավ համաժողովրդական ուղղակի գաղտնի հանրարկե, որով, պաշտոնական տվյալների համաձայն, ստանալով ընտրելու իրավունքը ունեցող քաղաքացիների ծայների 99,9 տոկոսը՝ Հաֆնազ ալ Ասադը յոր տարի ժամկետով ընտրվեց Սիրիայի նախագահ: Ծիշու է, Ասադը

<sup>173</sup> Նոյն տեղում, էջ 76-78:

Ազգային առաջադիմական ճակատը ներկայացված էր իշխան Սիրիայի Ժողովրդական Ժողովում (պաշտամնութ), այնպես էլ կառավարությունում<sup>246</sup>: 1972 թ. մարտի 23-ին կազմավորված «ազգային միասնության» նոր կառավարությունում իրենց անդամներն ունեին ԱԱԾ-ի բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները: Չնայած վարչապետ Շշանակված Արդ առ Ռահման Խոկիչառուիի հիմանդրյան և հրաժարականի, 1972 թ. դեկտեմբերի 24-ին կազմավորվեց նոր կառավարություն Սահման ալԱյորի գլխավորությամբ, նրանում իրենց ղիրքերը պահպանցին ԱԱԾ-ի բոլոր կազմակերպությունների ներկայացուցիչները<sup>247</sup>:

ԱԱԾ-ի շրջանակներում թինարկվում էին ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությանը վերաբերող հիմնահարցեր<sup>248</sup>: Շակատը համագործակցում էր մյուս քարեկան համարվող երկրներում գոյություն ունեցող մնանառիկ կառուցների հետ, գոյուրյուն ունեին մի շարք կնքած պայմանագրեր, տեսի էին ունեմում պատվիրակությունների փոխայնություններ և այլն<sup>249</sup>:

Օրյեկտիվության համար հարկ է նշել, որ Սիրիայում այդպիսի համախմբություն կազմակերպության ստեղծնան հարցը քարձրացվել էր դեռ մինչև 1970 թ-ը: 1956 թ. Սիրիայում կոմկուսի նախաձեռնությամբ ստեղծվեց Ազգային առաջադիմական ճակատ, որի կազմում էին Բաասը, կոմկուսը, տղյալիստուկան բժնիկ և ազգային կուսակցության խմբակցությունը: Նրա շրջանակներում մշակվեց գործողությունների միասնական քա-

<sup>245</sup> Նոյն տեղում, էջ 34-35:

<sup>246</sup> Michel Ma'at, Assad. *The Sphinx of Damascus. A political Biography*, Weidenfeld and Nicolson, London, 1988.

<sup>247</sup> Современная Сирия, с. 229.

<sup>248</sup> المـركـبة التـصـحـيـحـيـةـ العـجـيدـاـ فـيـ الذـكـرـةـ الـخـاتـمـةـ وـالـعـشـرـينـ، صـ. 131ـ.

<sup>249</sup> Նոյն տեղում:

դարական ծրագիր, որի հիմքում ընկած էր Ազգային Խարտիան, այդուհանդերձ այն ժամանակ ներքին տարածայնություններն ավելի խոր էին, չկար քաղաքական կայունություն և առուվել ևս ոմն ժողովրդականություն վայելող անհատ, որ զիտավորներ այդ գործընթացները:

ԱԱԾ-ի առեղծումը հաճարվում է ուղղված Ժարժանան Ժեղքերումներից մեկը, այն կարևոր քայլ էր նրանի միասնության և ներքին հակասությունների հաղթահարման ճանապարհին, ինչպիս նաև Սիրիայի քաղաքական հաճակարգի գործացնան գործում: Սիրիայում ԱԱԾ-ի հիմնադրումը նաև երկրում հասարակության քաղաքական գարզացման ենտևանք էր<sup>209</sup>: Շահատի մեջ ներգրավված կուսակցությունները լուրջ քաղաքական կազմակերպություններ էին, որոնցից մի քանից առեղծվել էին մինչև Բաասի կազմակերպումը և ուժիմ նրկար պայքարի պատմություն և քաջմարիզ հետևողությունը ու որոշակի ազդեցություն Սիրիայի քաղաքական քառերաբեմուն: ԱԱԾ-ի առեղծումը նաև որոշ շափով առաջնորդաց քայլ էր սիրիական իրականության մեջ ժողովրդավարության գարզացման և դեմոկրատական իմաստիուտների կայացման ճանապարհին:

ԱԱԾ-ի ձևավորումից հետո, փաստումն, Բաասի արդեն իր քաղաքականությունն իրականացնելիս կարող էր համեմատ զակ ճակատի կողմից ընդունված ծրագրերով և որոշումներով, այսինքն՝ երկրի բոլոր քաղաքական ուժերի անումնու: 1973 թ. ապրիլի 2-ին Սիրիայի նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Մահմուդ Հայդարը, անդրադառնացով Սիրիայի ԱԱԾ-ի ղերին ու նշանակությանը, ընդունեց, որ ճակատի առեղծումը «Բաաս կուսակցության ոչ թե մարտավարությունն է, այլ ռազմական նպատակը»<sup>210</sup>:

Խորիրազային դեկավարությունը դրական ընդունեց ճակատի առեղծումն փաստու և ուղերձու շնորհավորնեց Ասադին: Ճակատի առեղծումը Սիրիայում առաջինն էր և նախադիպ սահեծեց նյուտ արաքական նրկնե-

<sup>209</sup> يوسف مرعش، الجبهة الر/legalية التقديمية والتعددية

<sup>210</sup> أسياسية في القطر العربي السوري، ص ۱۶۲

<sup>211</sup> البعث، دمشق، ۱۹۷۳/۴/۲.

բուժ այդ փորձի իրականացնան համար: Տակատի հիմնադրությօց որոշ ժամանակ անց՝ 1972 թ. հուլիսի 5-ից 8-ը տեսչի ունեցավ Հաֆնօ ալ Ասադի պաշտոնական այցը ԽՍՀՄ: Ասադն, օգտագործելով պատճե առիթներն, ընդգծու էր, որ ԱՍՏ-ի ստեղծումը կապ չունի Սիրիայի և ԽՍՀՄ - ւակ հարաբերությունների հետ և կոմկուսի ընդգրկումը ճակատու և կառավարությունու պայմանագրաված է ներքին քաղաքական մոլումներով և նպատակ ունի ամրապնդել երկրի ներքաղաքական կայունությունը: 1972 թ. օգոստոսի 10-ին թերության «աղ-Անուար» թերթի թրակցի այն հարցին, թե որևէ կապ կա՞ արդյոք խորհրդա-սիրիական խորացող քարեկամբարյան և Սիրիայի կոմկուսի ազատ գործունեության միջև, Ասադն ասաց. «Կոմկուսի հետ մեր համագործակցությունը դիսու է մեր ներքին քաղաքամության եռյունից և ոչ մի կապ չի կարող ունենալ խորհրդա-սիրիական քարեկամության հետո»<sup>252</sup>:

Նշելով Ազգային առաջադիմական ճակատի ճևավորման մի շարք որական և կարևոր կողմերը Սիրիայի համար՝ անհրաժեշտ նոր համարում ընդունել նաև, որ կազմակերպության խարտիան և կամոնադրությունը ծայրատիճան տահմանափակու էր ընդգրկված ուժերի քաղաքական գործունեության հնարավորությունների շրջանակը, երկրի քաղաքական դաշտում նրանց գործառնությունը, իսկ ժողովրդական ժողովում և կառավարությունու նրանց ներկայացվածությունը դարձնու է հիմնականում ճևական բնույթ կրող երևույթ: Սիրիայում կուսակցությունների գործունեությունը կարգավորող օրենքի քացակայությանը որոշ շափով փոխարի-նեցին ԱՍՏ-ի խարտիայի և կամոնադրության հոդվածները: Տակատի փաստաբերեց միանշանակորեն շիմ մեկնարանվում նրա անդամ կազմակերպությունների կողմից: Տակատի անդամ կուսակցությունների մեջ գոյություն ունեցող անհամաձայնությունը կամոնադրության մի շարք հոդվածներին պառակտման գործընթացների սկիզբ դրեց այդ կազմակերպություններում: Հարկ է նշել, որ ԱՍՏ-ի մեջ մուած գրեթե բոլոր կուսակցություններում հնտագայում կային թեր կամ ուղղություններ, որոնք հանդիս էին զայիս Բաասի հետ համագործակցության դիմ և որոնք դուրս էին

<sup>252</sup> 1972/8/11 Ամսական:

Այս պաշտոնավես գործառնող կազմակերպությունից՝ սերտաճելով ընդունակությունը ուժին հիմքում է:

ԱԱՏ-ի ստեղծումը հնարյավորություն տվեց Աստիճան ավելի վառահ իրազործել իր քաղաքական ծրագիրը, քանի որ նրա մասնակիցները պետք է իրականացնեին Բաասի հավանության արժանացած ընդհանուր քաղաքականությունը, իսկ երկիրը ձեռք բնրեց ներքաղաքական կայունություն։ Աստիճանակը՝ Սրբիայում առևդել մշատական քաղաքական կազմակերպություն, որը նրա գիշատիքությանը երկրում պաշտպանեալ ուղարկեած ուժաւունություն խառաւար, հաջողվեց<sup>354</sup>։

Օնայած այն հանգամանքին, որ անդամագրվելով ԱԱԾ-ին և ստորագրելով նրա կանոնադրությունը վերոնշյալ չորս կուսակցությունների ու կազմակերպությունների որոշ չափով զրկվեցին Միջիայի ներքին քաղաքական առաջարեցում ամբողջապես ինքնուրույն գործեալ հնարավորությունից, սակայն փոխարենը, նրանք իրենց ներկայությունն ապահովեցին և ժողովուուան ժողովում, և Խառավարությունում<sup>255</sup>:

ԱԱԾ-ի ստեղծումը, փաստորին, Հաջեզ ալ Ասադի քաղաքական հմարքներով արգելք տուղծեց Սիրիայում գործող կռասկցություններին երկրի հասարակական-քաղաքական կյանքի վրա ազդեցություններից և նույսատափոր պայմաններ տուղծեց Եղիպատ ամրոց Խշխանության իր ձեռքում կինտրոնացնելու համար, ինչպես նաև ամբափնից Թաւու կռասկցության դերը Սիրիայում:

<sup>251</sup> Э. Пир-Будагова. Итоги внутренней и внешнеполитического развития Сирии к концу 80-х гг. // Средиземноморье. № 2 (273). Москва, 1991, с. 27.

<sup>218</sup> 80-х гг., Специальный бюллетень № 2 (273), Москва, 1991, с. 27.  
<sup>219</sup> 4. «Циркюлярий», Письмо генерала в Царский министерство в Бакинской Азербайджанской республике. 1914.

Upprörslag, s. 1  
och senare.

## 2.4 Սիրիայի մշտական սահմանադրության ընդունումը և Ժողովրդական Ժողովի (Մաջլիս աշ-շաար) ձևավորումը

Ուղղիչ շարժման ծրագրով նախատեսված հաջորդ կարևոր քայլը Սիրիայի նոր մշտական սահմանադրության ընդունումն էր, որի նախագիծը մշակել և կազմել էր ժամանակավոր Ժողովրդական ժողովը:

Սիրիայի անկախության նվաճման ժամանակ երկրում գործում էր 1930 թ-ի սահմանադրությունը, որը մշակվել էր Սիրիայի Սահմանադիր Ժողովի կողմէից 1928 թ. և Ֆրանսիայի բարձրագույն կոմիսարի կողմէց մի շարք փոփոխություններով և լրացրաներով ուժի մեջ էր մտել 1930 թ.: 1930-1943 թթ-ի ընրացրում սահմանադրությունը գործել է միայն 4-5 տարվա ընթացքում՝ 1931-1932 և 1936-1939 թթ.<sup>236</sup>: Հաջորդ սահմանադրությունն ընդունվեց 1950 թ. սեպտեմբերի 5-ին, որը զգալի առաջընթաց քայլ էր 1930 թ-ի սահմանադրության համեմատությամբ, հատկապես պատշաճնեմուի, ինչպես նաև քաղաքացիների քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավունքների ընդլայնման առումով<sup>237</sup>: 1951 թ-ի դեկտեմբերին Շիշերիի հեղաշրջումից հետո պարտապելվեց նոր սահմանադրություն, որը, փաստորեն անսահմանափակ էր դարձնում քանակելի իշխանությունը: 1954 թ. Շիշերիի տապալումից հետո վերականգնվեց 1950 թ-ի սահմանադրությունը<sup>238</sup>:

1963 թ-ի Բաասի հեղափոխությունից հետո Սիրիայում ձևականութեն գործում էր ժամանակավոր սահմանադրություն, որը չեղյալ հայտարարվեց ծախրասական հեղաշրջումից հետո:

1973 թ. հունվարի 31-ին և փետրվարի 20-ին Ժողովրդական ժողովն ընդունեց նոր մշտական սահմանադրության նախագիծը: Սակայն փետրվարի վերջին ստունի կրոնական գործիչների և ժողովույի որոշ հատվածի նշումների պատճառով անհրաժեշտ նորակ վերամայել նախագիծը և այնտեղ մտցնել կետ կրոնի մասին: 1973 թ. մարտի 12-ին կայացած համբարհանուր հանրարկուում ժողովուրդն, քան պաշտոնական տվյալների, 95,6

<sup>236</sup> Конституции государства Ближнего и Среднего Востока, М., 1956, с. 453-454.

<sup>237</sup> Նույն տեղամ, էջ 455:

<sup>238</sup> Նույն տեղամ, էջ 458:

%-ով կողմ արտահայտվեց Սիրիայի նոր սահմանադրությանը, որը ուժի մեջ մտած էրաբարակման պահից: Այսուամենայնիվ այդ ընթացքում երկու շարունակում էին սահմանադրական նախագծին ընդդիմադիր ուժերի բռնորդի ելույթները, որոնք հատկապես ուժեղ էին Համա քաղաքում<sup>259</sup>: «Դժողովրյան իիմնական պատճառը այն էր, որ սահմանադրության նախագծի մեջ չկար որևէ իիշատակում, որ «իսլամը Սիրիայի պետական կրոնն է»: Սահմանադրության 3.1 հոդվածը նշում է, որ «Համապետորյան նախագահի կրոնը իսլամն է: Այս հոդվածը նախագծում չկար և Համիզ այլ Ասադը հարկադրված էր այն մասնել սահմանադրության մեջ՝ որպես վոլուսիցում: Ընդգործմների պատճառը նաև այն էր, որ սունի մնամասնության մի մասի կողմից իշխանությունը համարվում էր ազայիտական, իսկ նրանք չին ընկալում արաբիներին՝ որպես լիարժեր մասնդականներ: Այս իրավիճակը շարունակվեց մինչև 1973 թ. վերջերը, երբ Սիրիայի զիսափոր մոլորդի ֆերվայում<sup>260</sup> ազայիմները նույնական հանդիպեցին լիիրավ մուտքամաններ: 1973 թ. նմանատիպ ֆերվարական հանդիպեց նաև Լիրանամի շիական խալամական քարձրագույն խորհրդի նախագահ իմամ Մուաա Մազրը, ինչն առավելապես ուներ քաղաքական, այլ ոչ թե կրոնական նշանակություն: Նախկինում այդպիսի ֆերվար էր հրապարակել նաև Պաղմատինի սունի մոլորդ Հաջ Ամին ալ Հուսեյնին, որով հայտարարում էր, որ ազայիմները նույնականներ են՝ կոչ անելով համագործակցել նրանց հետ քարիդջացիության և խալամական եղբայրության ուղում համապատասխան, սակայն այդ ֆերվար շատերի կողմից շընդունվեց<sup>261</sup>: Հարկ է նշել, որ այդ հարցը այդպես է վերջնական լուծում շատացավ, քանի որ քաջի կրոնական հարցից նաև քաղաքական լուրջ խնդիր էր, իսկ Ասադի՝ անձի պաշտամունքի շրջանում ընդհանրապես եթերորդ պլան մղվեց: Ծայրահեղ մահմնդականների կրթերը գովելու նախատակությունը

<sup>259</sup> Հայուան Բիշրան, Հագանական. Սուրբ Հայուան. Հայուան Բիշրան, Հայուան Բիշրան.

<sup>260</sup> Մոլորդի խարմանակի կրօնական առաջնորդ է, իսկ ֆերվար նրա արձակած երախմազք կում հայտապետությամբ, որը մահմերականների համար ունի պարտավորություն:

<sup>261</sup> Kester Martin, Syria's Alavis and Shiites, T-A, 1984, p. 6-7, ու B. H. Saitov, Сиринские алавиты в новейшее время, в сб. «Арабский мир в конце XX века». Материалы II-ой конференции арабистов Института Востоковедения РАН. М., 1996, с. 81.

Առաջը սահմանադրության մեջ նշոցին էր մեկ այլ հոդված, որը նշում էր, որ «Բնակչական իրավունքը օրենսդրության հիմնական առյութը»<sup>262:</sup>

Սահմանադրության նախարանում ընդգծվում էր Թասահ 1963 թ-ի մարտի 8-ի հեղափոխության հոկայական նշանակությունը Սիրիայի պատմության մեջ: Նշվում էր, որ Թասահ առաջին արարական ազգային շարժուն էր, որն առաջ բաշեց արարական միասնականության գաղափարը: Ուստիշ շարժման հովանու ներքո հնարավոր դարձավ իրականացնել ժողովրդի համախմբումը ազգային միասնության գաղափարի շորջ, որի շնորհիվ տոնեցվեց ԱԱԾ-ը: Նշվում էր, որ հայրների ազատությունը կարող նե ապահովել միայն ազատ քաղաքացիները, իսկ քաղաքացու ազատությունը չի կարող ամբողջամազ առանց սոցիալական և տնտեսական ազատագրման և այլն<sup>263:</sup>

Սահմանադրության առաջին հոդվածն ընդգծում է, որ Սիրիայի Արարական Հանրապետությունը իմբնիշխան, դեմոկրատական, ժողովրդական, սոցիալական պետություն է և չի կարող երաժարվել զերչանությունից իր ոչ մի հոդակառորի նկատմամբ (նկատի էին առնվում 1967 թ. կորցրած տարածքները): Հաջորդ երկու հոդվածները վերաբերում էին արարական միասնության խնդրին. «ԱԱՀ-ը արարական աշխարհի մի մասն է, և «ԱԱՀ ժողովուրդը արար ազգի մի մասն է, որը պայքարում է նրա ամբողջական միավորումն իրականացնելու համար»<sup>264:</sup> Սահմանադրության 8-րդ հոդվածը նշում է, որ «ԱԱՍԿ-ն հասարակությունում և պետությունում կառավարող կուսակցություն, որն առաջնորդում է ԱԱԾ-ը...»<sup>265:</sup> Հոդվածն ընդգծում է Թասահ կենտրոնական դերը երկրի քաղաքական կյանքում:

<sup>262</sup> Տե՛ս, Սիրիայի սահմանադրությունը.

دستور الجمهورية العربية السورية الصادر بالمرسوم رقم ٢٠٨ تاريخ ١٣-٣-١٩٧٣، ص ٣١.

<sup>263</sup> دستور الجمهورية العربية السورية، ص ٤-٥.

<sup>264</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>265</sup> Նույն տեղում, էջ 12:

Ըստ սահմանադրության՝ երկրի տնտեսությունը սոցիալիստական պլանային տնտեսություն է և նպատակ տնի վերջ տալու բարը տեսակի շահագործումներին: Հոդված 14-ը նշում է, որ «օքննության հաստատվում են սեփականության հետևյալ երեք ձևերը. 1. Ժողովրդական սեփականություն. իր մեջ ներառում է երկրի բնական պաշարները, հասարակական ենթակառուցվածքը, պետականացված հաստատությունները կամ նրանք, որոնք հիմնվում են պետության կողմից, և պետությունն է վերահսկում դրանց շահագործումը կամ կառավարումը»; 2. «օքնենկության սեփականություն, որի մեջ մտնում հասարակական, արինառակցական, արտադրական միավորումների, կոռավերատիվների ունեցվածքը»; 3. «անհատական սեփականություն. ընդգրկում է անհատների մասնավոր սեփականությունը. և օրենքով սահմանվում է դրանց հասարակական դերը ազգային տնտեսությանը ծառայեցն մեջ: Մասնավոր սեփականության օգտագործման ձևերը պետք է շնորհանձ ժողովրդի շահերին»<sup>266</sup>; 15.1-ին հոդվածն ընդգծում է, որ անհատական սեփականությունը չի կարելի օտարել, բացառությանը օրենքով սահմանված փոխառությունը դիմումի համընդիանութ բանագրավումն արգելված է: 15.3-րդ հոդվածը նշում է, որ մասնակի բանագրավումը կիրավում է միայն դատարանի վճռով<sup>267</sup>; Հոդված 37-ը նշում է, որ ուստի Սիրիայում ամփճար է, որը երաշխավերվում է պետության կողմից, այն անվճար է բոլոր փուլերում և պարտադիր է նախակցորդականութեան<sup>268</sup>: Օրենսդիր իշխանությանը վերաբերու գլխի 53-րդ հոդվածը նշում է, որ ժողովրդական ժողովի անդամների բժարանակի ոչ պակաս, քան կեսը պետք է լինեն բանկութեր և զյուղացիներ<sup>269</sup>:

Հանրապետության նախագահի մասին գլխի հոդված 83-ը սահմանում է, որ օհանրապետության նախագահի թեկնածուն պարտավոր է լինել սիրիացի արար, քառասուն տարին բոլորա<sup>270</sup>, և որն օժտված է առևա-

<sup>266</sup> دستور الجمهورية العربية السورية، جن. ١٣.

<sup>267</sup> Նոյն տեղում, էջ 13-14:

<sup>268</sup> Նոյն տեղում, էջ 18:

<sup>269</sup> Նոյն տեղում, էջ 21:

<sup>270</sup> 2000 թ. այս կտոր նախարկեց փոխփոխական, բայի որ Աստիճ մատից հետ քառ օրին նախագահի թեկնածու Բաշար ալ Ասադը, չեւ բուրեկ բառասուն տարին:

բաղարացիական ու բատարական բոլոր իրավունքներով»: Հանրապետության նախագահի թեկնածուն առաջադրվում է ժողովրդական ժողովի կողմից Բասս կուսակցության երկրամասային դեկալարության առաջարկով<sup>271</sup>: Հոդվածն ուղարկյուղն չի պահանջում նախագահի թեկնածուի՝ բատարական լինելու անհրաժեշտությունը, սակայն այն հաճախանաբար, որ նա պետք է լինի Բասսի անդամ: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, երկրի նոր սահմանադրությունը ճախրասասականների իշխանության համեմատությամբ մի շարք ազատական և ժողովրդավարական դրույթներ էր պարունակում թե՝ սոցիալ-տնտեսական և թե՝ ներքաղաքական ոլորտներում՝ ապահովելով բնակչությանը համատարած ազգայնացման գործողություններից և բաղարական հետապնդումներից:

Ազգային առաջադիմական ծակատի ձևափորությունը հետո Սիրիայի առջև կանգնենի էր ուղղակի ընտրությունների միջոցով կազմավորվող ժողովրդական ժողով՝ խորհրդարան ունենալու խնդիրը, որը պետք է փոխարիներ ուղղիչ շարժություն հետո կազմավորված ժամանակավոր ժողովրդական ժողովին: Ինչպես արդյո՞ւն նշվել է, ճախրասասականների կառավարման ժամանակաշրջանում Սիրիայում գոյություն չտներ նորմալ գործառույթ և ընտրությունների միջոցով ձևափորված օրենսդիր մարմնի: Այստեղ գոյություն ունեն կուսակցական անհանդուրժողականություն, կուսակցությունների միջև պայքար բաղարական և իրավական դաշտից դուրս, արդյունքում՝ ներքաղաքական լարվածություն և անկայում իրավիճակ: Ճախրասասականների մրցակցությունն ու անհաջու կեցվածքը Սիրիայում գործառնող նախարարներ բարերարացնեն բաղարական խմբավորումների և կազմակերպությունների հետ, Սիրիայում նրանց ազինցության տարածման և դիրքերի ամրապնդման հետ կապված խնդիրները անհմարին էին դարձնում նրանց ներկայացուցիչների ներգրավվումը գործադիր և օրենսդիր նարմներում, իսկ իշխանության թերթի գոմն արտաքուստ տարանջաւառում և նորմալ բաղարական համակարգի ստեղծումը պատերազմական իրադրության պայմաններում բնույթ էր անիրազործելի ծրագիր: Վերոնշյալ բա-

<sup>271</sup> دستور الجمهورية العربية السورية، ص. ٤٧.

ցաւական երևոյթներից շատերը վերացան Ասաղի կողմից իշխանության գաղուց հետո, ինչն էապես փոխոց իրավիճակը և քարենապատ պայմաններ ստեղծեց երկար ընդմիջումից հետո Սիրիայում օրենսդիր մարմնի ձևավորման համար: Այս գործընթացին առավելապես նպաստեց նաև 1972 թ. հիմնադրված առաջադիմական ճակատը, որը հնարավորություն տվեց Ասաղին ճակատում գերակա դիրքեր ունեցող Թաաս կուսակցությանը նոյն պատուից ստեղծելու նաև ժողովրդական խորհրդամայ' արտաքուստ պահպանելով պատամանություն բաղադրական տժերի ներկայացվածության գործոնը: Այս ենթաերթում իշխանության կողմից ակտիվութեան ցրանառության մեջ եր որպէս մնկ այլ կարգախոս՝ «ար-թա'այլությա աս-սիյասիյա», բազմակուսակցական բաղադրական համակարգը բնութագրեց համար:

1963 թ. մարտի 8-ից հետո օրենսդիր մարմնին փաստացի փշխարինում էին հեղափոխական հրամանաւորության ազգային խորհրդող և նմանասին այլ կառույցներ, որտեղ գլխավորապես զինվորականներ էին ու կուսակցության առաջատար գործիչներ և գաղափարախոսներ: Զայսրաասականների օրոց վերոհիշյալ մարմնի ցրելուց հետո օրենսդրական գործունեությունը սահմանափակվում էր կուսակցության գլխավոր բարտուղարի որոշումներով կամ կառավարության արձակած հրամանագիրով ու իրավական ակտերով: Դիշու է, Ասաղի օրոք այս առողության ժամանական ժողովության բարեփոխումներ տեսի շունչան, այդուհանդեռ, ակնհայտ է, որ Ասաղի օրենսդրական գործընթացը երկրու ոյնց օրինական և բաղադրակից հիմքների վրա: Երկար տարիներ Սիրիայում գոյություն ունեցող ներքաղաքական անկայունության և սոցիալ-տնտեսական անքարհնության իրավունքության հետևանքով երկիրը տարրեր նորութներում բազմարիվ հիմնարար օրենքների կարիք եր գում, որով պեսու է գրավելու նորմնութիւն ժողովրդական խորհությունը:

Ինչպես արդեն նշվել է, 1971-1973 թթ. Սիրիայում գործու ժողովրդական ժողովը ընդունեց պատության համար կարևոր նշանակություն տնեցող օրենքներ, որոնցից հատկապես կարևոր է նշեց տնտեսական իմքնակառավարման մասին օրենքը, տնտեսական ինքնակառավարման մարմնների ընտրությունների մասին օրենքը, ինչպես նաև 1973 թ. փետրվարի 20-ին

Սիրիայի նոր ճշտական սահմանադրույթյան նախագծի ընդունունը, որը նրա կողմից երաշխավորվեց համաժողովրդական հանրաքաղաքական և հավանության արժանացավ ազգաբնակչության կողմից:

1973 թ. մայիսի 25-ին վերջին տասնմեկ տարում առաջին անգամ Սիրիայում տեղի ունեցան Շողովրդական ժողովի ընտրույթումներ, որոնց արդյունքում չորս տարի ժամկետով ընտրվեց Սիրիայի օրենսդիր մարմինը, որի կազմի մեջ մտան 186 պատգամավոր<sup>272</sup>. Խորհրդարանական ընտրայուններին մասնակցելու իրավունքից օգտվում էին 18 տարին լրացած բոլոր քաղաքացիները, բացառությամբ ժամկետությին ծառայություն անցնող քանակի և անվտանգության ուժերի անձնակազմից. իսկ պառամենափառ անշաբ կարող էին ընտրվել 25 տարին լրացած քաղաքացիները: Առաջադիմական նակատը հաղթանակ տարակ ընտրույթուններին մասնակցելով միասնական ցուցակով: Երկրի օրենսդիր մարմնում ներկայացված էին առաջադիմական նակատի բոլոր քաղաքական կուսակցությունների առաջնորդները: Խորհրդարանի կազմի մեջ մտան նաև քաղաքի և գյուղի աշխատավորական խավի ներկայացուցիչներ, ինչն ուղղիչ շարժման ծրագրային դրույթներից եր: Նորընտիր Շողովրդական ժողովի առաջին նախարարանը բացվեց հունիսի 9-ին, և նրա նախագահ ընտրվեց ԱՎԱԿ-ի ներկայացուցիչ Մոհամենդ Ալի ալ Հաջարին<sup>273</sup>: Խորհրդարանական ընտրույթունների արդյունքում<sup>274</sup> ԱԱԾ-ի ցուցակով պատգամավոր դարձավ նաև հայազգի Լևոն Ղազալը<sup>275</sup>:

Համեց աղ Ասադի կողմից հոչակիած նոր քաղաքական և տղիսալ-տնտեսական ուղղությունը օրենսդրական ամրագրման հրատապ կարիք էր զգում: Պետության նախագահի կողմից իրականացվող քարենիությունների վերաբերյալ համապատասխան իրավական դաշտի ապահովումը

<sup>272</sup> 1971-1973 թթ.-ի Շողովրդական խորհուրդը բաժկացած էր 173 պատգամավորից:

<sup>273</sup> فضل عفان، المجال الشعبي والثيابية في الوطن العربي. الجزء الأول.

مجلس الشعب في سوريا ١٩٨٨-١٩٢٨، ١٤٧، ص.

<sup>274</sup> 1971-1973 թթ. Շողովրդական ժողովում կար նրկանայի պատգամավոր՝ քաշնակցական Գրիգոր Եղիշեարյանը և մշակումների ներկայացուցիչ Ռազմիկ Ֆրանյանը:

<sup>275</sup> فضل عفان، مجلس الشعب في سوريا ١٩٨٨-١٩٢٨، ١٦٦، ص.

طمليوكريجي կողմից ընտրված օրենսդիր մարմնի կողմից շահազանց անհամաժշտ պայման էր Ասադի հետագա ծրագրերի իրագործման համար:

Եթ չորսամյա գործունեության ընթացքում՝ մինչև Խաջորդ ընտրությունները, Սիրիայի Ժողովրդական ժողովը ըննարկեց և ընդունեց ներքին և արտաքին քաղաքականության, ինչպես նաև սոցիալ-տնտեսական ուղղության առնչվել ավելի քան 440 օրենք և օրենտուրական ակտ՝<sup>236</sup>:

Արարական և միջազգային առարկեալներում խորհրդարանն ընդուրձակեց իր գործունեությունը երկկողմ հարաբերությունների հաստատման, միջազգային ատյաններում արարական ինմանահարցի քննարկման ուղղությամբ՝<sup>237</sup>: Սիրիայի խորհրդարանն իրագործեց արարական խորհրդարանների միուրյան կամ դաշնություն ստեղծելու գաղափարը, Օրա առաջին համագումարը տեղի ունեցավ 1974 թ. ամռանը Դամասկոսում, որը և դարձավ միուրյան մշտական կենտրոնակայանը: Կառույցի ինմանական խնդիրներն էին համարվում արարական երկրներում ժողովրդավարության արմատավորումը (ի գոյր էր դրվում ուղղիչ շարժումից ի վեց Սիրիայի օրինակը, որտեղ 1970 թ-ից հետո անցկացվեցին մի շարք համաժողովրդական ընտրություններ՝ Գ. Ն.), արար օրենսդիրների փոխանձակարգված գործունեությունը, համատեղ աշխատանքը միջազգային առյաններում և հատկապես միջազգային խորհրդարանական ընկերակցության շրջանակներում (կենտրոնակայանը՝ Ժն.) ի նպաստ արարական ինմանահարցի արդարացի լուծման: 1975 թ. Սիրիայի Ժողովրդական ժողովին արարական պատղամնենների միուրյան հետ միասին հաջողվեց երավիրել արարա-եվրոպական համագումար, որը կայսացակ նույն թվականին՝ Դամասկոսում՝ արարա-եվրոպական համագործակցության խրամանամ համատեքսուում՝<sup>238</sup>:

Առանձնահատուկ ոշադրության է արժանի նաև ուղղիչ շարժման քաղաքականության հոչակումից ի վեց երկրի պետական կառավարման համակարգում և ընդհանրապես սիրիական հասարակությունուն կանանց

<sup>236</sup> الحركة التصحيحية الجديدة في الذاكرة الخامسة والعشرين، ص. ١٦١.

<sup>237</sup> فضل عقاش، مجلس الشعب في سوريا ١٩٢٨-١٩٨٨، ص. ١٤٨.

<sup>238</sup> Լույց տեսքին:

դերի քարձրացմանն ուղղված իշխանության քաղաքականությունը: Սիրիայի նորմնութիւնը պատրամնառութ կանանց դիրքերն անկանոնութեան, որտեղ 186 պատգամավորից 5-ը կանայք էին<sup>279</sup>: Հաջորդ զումարման խորհրդարաններում կանանց քվարանակը գնալով աճում էր:

Հարկ է հիշատակել, որ դեռ Արարական վերածննդի սոցիալիստական կուսակցության կանոնադրության 12-րդ հոդվածը նշում էր, որ կինը օգուվում է քաղաքացիների բոլոր իրավունքներից՝ ընդգծելով, որ կուսակցությունը պետք է պայցարի՝ կանանց դիրք հասարակությունում առավելագույն քարձրացմելու համար<sup>280</sup>: Չնայած Սիրիայի անկախությունից որոշ ժամանակ անց կինը ստացավ ընտրելու և ընտրվելու իրավունք, 1949թ. ընտրելու, իսկ 1961 թ.՝ ընտրվելու, այնուամենայնիվ այն իրազործվեց միայն 1963 թ.-ից, այսինքն՝ Բաասի իշխանության գալուց հետո, եթե 1965 թ. առաջին կինն ընտրվեց հեղափոխական ազգային խորհրդում: Բաասի իշխանության գալուց հետո կուսակցության մեջ կանանց կազմակերպությունները<sup>281</sup>: Այդուհանդերձ կանանց ներառմամբ քաղաքամությանը նաև անդամանութեան, 1967 թ. ծախրաասականների օրոր ստեղծվեց կանանց համընդիմութ ֆեմբրացիան, որի մեջ միավորվեցին բոլոր կազմակերպությունները<sup>282</sup>: Այդուհանդերձ կանանց ներառմամբ քաղաքամությանը նաև անդամանութեան փոխվեց միայն Ասադի օրոր՝ ուղղիչ շարժման հրակութիւնից հետո, եթե հասարակությունում նրանց կարգավիճակի խնդիրը ստացավ հիմնավոր օրենսդրական լուծում: Եվ ինչպես նշվեց, 1973 թ. ընդունված պետության մշտական տահմանադրությամբ կանանց իրավունք և հնարավորություն տրվեց ներկայացված լինելու պետության գործադիր, օրենսդիր և դատական համակարգերում:

Այսպիսով՝ Բաաս կուսակցության իշխանության գալուց ի վեր առաջին անգամ նրկիր ձեռք բերեց օրենսդիր իշխանության մշտական գործող մարմին՝ Ժողովրդական ժողով:

1973 թ. հունիսի 9-ին Համբեց ալ Ասադը, եղույթ ունենալով երեք տարվա ընթացքում ուղղիչ շարժման արձանագրած ճնորդերումների և ներքա-

<sup>279</sup> فصل نقاش، مجلس الشعب في سوريا ١٩٤٨-١٩٧٦، ص. ١٨٧.

<sup>280</sup> Նույն տեղամ, էջ 186:

<sup>281</sup> Նույն տեղամ, էջ 186-187:

լարական տեղաշարժերի ու զարգացումների մասին, մասնավորապես հայտարարեց. «Ժողովրդական դեմոկրատիայի կառուցման ընթացքը եղի և այն նպատակներից մեզ, որ մենք դուք էինք մեր տարվ 1970 թ. նոյեմբերի 16-ից ենտու: Ժողովրդական դեմոկրատիան բացարձակ հասկացություն չէ, այլ ամենօրյա գործունեության ծե, որն անպայման պետք է ընդի ուալ իրականությունից և նրա պայմաններից: Ժողովրդական դեմոկրատիայի կարևորագույն գործնական բայց ժողովրդական ժողովի ձևավորումն էր, տեղական ինքնակառավարման իշխանությունների ընտրությունները, որոնք կայացան 1972 թ. մարտի սկզբներին, ինչպես նաև ճշտական սահմանադրության ընդունումը, որը տեղի ունեցավ ժողովրդի ազատ կամքի արտահայտման միջոցով»<sup>282</sup>:

### 2.5. 1973 թ. հոկտեմբերյան պատերազմ ու արարական միասնորյան խնդիրը ուղղից շարժման հայեցակարգի ներք

Ուղղից շարժումից ի վեր Ասադը մեծ ուշադրություն էր հատկացնում սփրիֆական բանակի հզորացմանը, վերացնենան ու մարտունակառյան բարձրացմանը, քանի որ ի թիվս մի շարք գործուների, չեր բացառված նաև նպայինի հետ պատերազմի հավանականություննից ինչպես վեր նշվել է, 1967 թ. արաբա-խարայիւսան պատերազմի ժամանակ Ասադը պարսպած Սիրիայի պաշտպանության նախարարն էր և ցանկանում էր ազատազգել զբավկած սփրիֆական նորդերց:

1972 թ. նոյեմբեր սկզբին խորիրային կառավարության հրավերով ԽԱՀԱ-ում էր գտնվում Համիդ ազ Ասադի գլխավորած պատվիրակությունը: Այօի ընթացքում իրավաբակեց սիրիա-խորիրդային նամատեղ հայտարարությունը, որտեղ նշվում էր նաև Սիրիայի ռազմական հզորությունն ու հնարավորությունները մեծացնելու, ռազմական համագործակցության մակարդակի բարձրացման, ինչպես նաև տեղեկատվության փոխանակման ու բարդարական խորիրակցությունների անցկացման վերաբերյալ

<sup>282</sup> الحركة الصهيونية الجديدة، ص. ١١٧-١١٩.

կողմերի մտադրությունների մասին<sup>233</sup>: Այցի արդյունքում ռազմական հաճախայնագիր կմրգեց 700 նկ ԱՄՆ դպար արժողությամբ, ներառյալ Սիր 21s ինքնարիտներ, հակաօդային իրիտներ և այլն ձեռք թիրալու վերաբերյալ, իսկ խորհրդային ռազմական խորհրդառությունների և մասնագետների թիվն ավելացավ՝ մի քանի ամսվա ընթացքում 700-ից հասնելով 3000-ի<sup>234</sup>: Խորհրդային Սիրիյունը նմանատիպ հաճածայնագիր էր կործ Սիրիայի հետ նաև 1972 թ. Գիտարվարի սկզբին<sup>235</sup>, իսկ նույն բավականի մայիսին Շամակոս էր այցելել ԽՍՀՄ պաշտպանության նախարար մարշալ Գրեշկուն<sup>236</sup>: 1973 թ. Գիտարվարին Սիրիա առարվեցին խորհրդային տանկեր: Նույն բավականի մայիսին Ասադը գաղտնի այց կատարեց Սոսկվա՝ Շամակոս վերադառնարով խորհրդային օդուժի հրամանատար մարշալ Կուտուզովի ուժեկցությամբ<sup>237</sup>: Սիրիա առարկով ժամանակակից զենք ու զինամքերը և հատկապն հակաօդային պաշտպանության հաճակարգեր՝ Խորհրդային Սիրիյունն ուղարկում էր նաև դրամբ պահապահիող մասնագետներ: Անհերթելի փաստ է, որ խորհրդային ռազմական խորհրդառությունները մեծ լուսա ներդրեցին Սիրիայի զինված ուժերի ամրապնդման գործում, ինչը բազմիցս ընդգծվել է նրա դեկադակարմերի կողմից: Եթե Եգիպտոսի նախագահ Անվար աս Սադարը 1972 թ. հունիսի 17-ին որոշում ընդունեց Եգիպտոսում խորհրդային ռազմական մասնագետների առարելության դադարեցման մասին, ապա նույն բավականի օգոստոսին Ասադը հայտարարեց, «Սիրիական ժողովով շահերը պահանջում են խորհրդային զինվորական մասնագետների առարելության շարունակումը մեր երկում: Խորհրդային մասնագետները բավական ժամանակ է, ինչ աշխա-

<sup>233</sup> لوسان بيترلان. حافظ الأسد. مسيرة متاحف، ص. ١٥٣.

<sup>234</sup> Galia Golan, Yom Kippur and After, Cambridge, 1977, p. 29, լուս Moshe Ma'oz, Asad. The Sphinx of Damascus, p. 86.

<sup>235</sup> Oded Eran, Soviet Middle East Policy 1967–1973, From June to October. The Middle East between 1967 and 1973, edited by Itamar Rabinovich and Haim Shaked. New Brunswick, New Jersey 1978, p. 41.

<sup>236</sup> The Middle East and North Africa 1986, London, 1986, p. 718.

<sup>237</sup> Galia Golan, Yom Kippur and After, p. 29, լուս Moshe Ma'oz, Asad. The Sphinx of Damascus, p. 86.

տում են Սիրիայում, և նս գտնում եմ, որ նրանց առաքելության շարժման մասն անհրաժեշտությունը չի կարող լինել քննարկման պարզա»<sup>288</sup>.

1973 թ. սկզբներից բավականին սրբէ էր իրադրությունը սիրիա-խայխան սահմանում: Ծնայած այն հանգամանքին, որ Սիրիան ուղղված շարժման սկզբից ի վեր խիստ հակողության տակ էր պահում իր տարածումը գտնվող պատճառին՝ կազմակերպություններին ու զինված խօսքավորությունների միջոցով պայցրարն Խորայիշի դեմ, այնուամենայինք. 1972 թ. տեղի ունեցած մի շաբթ ահարեկական գործողությունները՝ Ամբողջ 1973 թ. Անբացրում բախտություններ էին տեղի ունենալու սիրիա-խայխան սահմանագծում: Սովորական երևոյց էին դարձել Խորայիշան ինքնարիոնների կողմից Սիրիայի ողպային տանձանակի խախտումը և պարբերական բռիչընթաց նույնականացնելու վրայովէ, իսկ անպետմքերի 13-ին Սիրիայի օպային տարածում տեղի ունեցած ճակատամարտի արդյունքում խորայիշան մեկ խփված ինքնարիոն դիմաց Սիրիան կորցրեց 13 օպայակ՝<sup>289</sup>:

1973 թ-ից հաճախակի էին դարձել նաև Եզիզուսի նախագահ Ամփար առ Սարգսի հայտարարություններն Խորայիշի դեմ պատերազմի անխուսափելիության մասին, և թե՛ Ասազը նման բացահայտ հայտարարություններ չեր անում, նոյնական չեր կարող բարցնել իր մուաղղությունները, հակառակ դեպքում ինչո՞ւ կարող էր բացատրել արագ տեմպերով բանակի վերագիտումը և Խորենացային Ալտրյան հետ ուսզմական գործարքների կարումը: Բացի այդ, տեղին է եիշել, որ ուղղիչ շարժման սկզբանական պատճառներից մեկն էլ նախորդ ճակատամարտական դեկավարության և Համեզ առ Ասազի կողմից իրարամեր ճենքի և միջոցների ընտրությունների նախագահ Խորայիշի դեմ պայցրարում:

Պատերազմի նախապատրաստման փուլում Սիրիայի համար Վիանզավոր էր եզիզուս-խորենացային հարաբերությունների վատրարացումը: Ծնայած այն հանգամանքին, որ «Եզիզուսին մասնակակիցից հարձակողական գենք տրամադրել չկամենալու պատրիվակով» 1972 թ.

<sup>288</sup> 1977/Ա/1 • Տարու, Արշակ

<sup>289</sup> "The New York Times" 14. 09. 1973

հովհանսի Սադարը Եզիպտոսից վտարեց մոտ 21 000<sup>290</sup> ուստական ուսզմական խորհրդատունների<sup>291</sup>, Ասադի ջամբերով 1973 թ. ընթացքում Եզիպտա-խորհրդային հարաբերություններն արձանագրեցին քարելավման ուղարկի միտումներ, ինչը կարևոր նախապայման էր Խորայիլի դիմ ուազմական գործողություններ սկսելու համար:

Ակզրնական շրջանում Սիրիան և Եզիպտոսը ուսզմական գործողությունների համար նախապատրաստել էին «Գրանիտ» ծրագիրը, սակայն հետագայում Եզիպտոսի նախագահ Սադարը վերամայեց իր որոշումը, քանի որ «Գրանիտ» ծրագիրը նախատեսում էր ուսզմական գործողություններ ծավալի մինչև պատերազմի հաղթական ավարտը և բոլոր արարական տարածքների վերջնական ազատագրումը, որն, իմշալու ցույց տվեցին հետագա զարգացումները, չեր համապատասխանում Սադարի ծրագրերին:

1972 թ. Կահիրեի մոտ գտնվող Գիզա վայրում՝ Սադարի առանձնատանը տեղի ունեցավ Եզիպտոսի զիմված ուժերի բարձրագույն խորհրդի գաղտնի խորհրդակցություն, որտեղ Սադարը միանանակ համեստ եկավ սահմանափակ պատերազմի օգուին՝ պատճառաբանելով, որ եթե Խորայիլից հաջողվի ազատագրել Սուեզի ջրանցքի արևելյան ափի թնկութ մի փոքր հեղակուր, ապա այդ համզանանը կանրապեսի նրա դիրքերը հետագա բանակցություններում<sup>292</sup>; Եզիպտոսի նախագահն, անկատակած, վախճանում էր ուսզմական գործողությունների տարածումից, որին կարող էր հաջորդել զերտերությունների՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջամտությունը պատերազմին, ինչը կարող էր հանգեցնել անկանխատեսելի հետևանքների: Կասկած չի հարուցում այն վտառը, որ, ուժենալով արտարին հետախուզական ծառայությունների ուժեղ համակարգ, Խորայիլը նոյնպես տեղյակ էր պատերազմ սկսելու Սիրիայի և Եզիպտոսի մտաշրություննե-

<sup>290</sup> Ըստ Ֆրեզերի՝ Սադարը վտարեց ոչ քա 21 000, այլ 15 000 ուսզմական խորհրդաւոր: See T. G. Frazer. The USA and the Middle East Since World War 2. St. Martin's Press, New York, 1989, p. 99.

<sup>291</sup> A. I. Dawisha, Egypt in the Arab World. The Elements of Foreign Policy. A Halsted Press Book. John Wiley and Sons, New York 1976, p. 182.

<sup>292</sup> Е. Примаков, История одного стояния: Ближневосточная политика США в 70-е начиная с 80-х годов. Москва, 1985, с. 206.

ըի մասին: Խնչկիցն, 1973 թ. ամռանը սիրիական և նօդպատական կողմերը նախապատրաստեցին ուզմական գործողությունների նոր ծրագիր, որը հայտնի դարձավ «Բաղր» ծածկանումը: 1973 թ. պատերազմի կոնքերուն նախապատրաստական միջոցառումների մասին շատ տեղեկություններ չկան, բացի զինվորականների հաճախակի հանդիպումներից: Սրայն պատերազմից երկու տարի անց՝ 1975 թ. Խոլիսին կայացած Թատի հանգստային 12-րդ համազումարում Ասադը նշեց, որ պատերազմի պահ-ափորումը սկսվեց ուղղիչ շարժումից անմիջապես հետո, և այդ առողմակ հիմնական խոնդրներից մեկը միջարարական հարաբերություններում տիրու անառողջ մքնուրուտի հաղթահարումն էր<sup>293</sup>:

Նախօրոր տեղյակ վնասով արաբների սպասվող հարձակման մասին Խորայինը պատրաստվում էր դիմել նախառաջաշտամական հարվածի: Այդ նախառաջայի Խորայինի գննիքը ուժերի սպայակազմի հրամանաւոր գններալ Դավիթ Էլազարը մարտական պատրաստվածուրցան թերեւ գործեց, ուսկայն Խորայինի վարչապետ Գորդա Մելիքն այդ ժամանակ դեռ մոռորդումների մեջ էր: 1973 թ. Խոկտեմբերի 5-ի լույս 6-ի գիշերը նրա մոտ շուտով այցով ժամանեց Խորայինը ԱՄՆ դեսպան Քեննետ Քերտինզը<sup>294</sup>: Հավանաբար նրա այցի նպատակն էր համոզել վարչապետին հրաժարվել «կանչող հարվածից, որպեսզի Խորայինը համաշխարհային հանրության կողմից շփոսվի որպես ազբուր պետություն, և ԱՄՆ-ը կարուղան նրան բազմակողմանի օգնություն ցուցաբերել պատերազմի ընթացքում»:

1973 թ. Խոկտեմբերի 6-ին<sup>295</sup> շաբաթ օրը, 700 սիրիական տանկեր հեռուակի աջակցությամբ գրոհեցին խորայինան դիրքերը Գորանի քար-ծովներում, միաժամանակ օդադիսանտային ուժերը պատրաստվում էին գրավել Խորայինի համար կենսական նշանակություն ունեցող դիտակները Հերմոն լեռան վրա: Սիրենայն ժամանակ ավելի քան 1000 հօդա-տական հրամուրներ գնդակուեցին «Բաղր»ին պաշտպանական գիծը<sup>296</sup>:

<sup>293</sup> Иванов С. А., Межарабская политика Сирии, с. 111.

<sup>294</sup> Л. И. Мелкян, К востоку и западу от Суэца, Москва, 1985, с. 162.

<sup>295</sup> Հոկտեմբերի 6-ը Հայեց առ Ասուր ծննդյան օրն է:

<sup>296</sup> T. G. Frazer, The USA and the Middle East Since World War 2. St. Martin's Press, New York, 1989, p. 98.

Նրանից հետո Եղիպատական գորքերը կայծակնային արագությամբ ամցան Սունդի ջրանցքը, այնուհետև «Թարլեփ» պաշտպանական գիծը<sup>297</sup>: Սիրիական կողմից մարտի մեջ մոտավ վեց դիվիզիան՝ նույն 45 հազ. զինվոր և հազար տական<sup>298</sup>: Սիրիական գորքերը երկու օր հաջողությամբ հարձակվում էին, առկայան իրադրությունը կորուկ փոխվեց Եղիպատական գորքերի հարձակման անսպասելի դադարի պատճեռով: Այս հաճախամանը հնարավորություն տվեց Խարայեցին Սիրիայից խոշոր ուժեր տեղափոխելու և կենտրոնացնելու սիրիական ուսագնաճակատում, որտեղ երկու շարար տևած մարտներում Խարայեցի կորուստները ավելի զգալի էին, քան Սիրիայի թերակղզում:

Եղիպատական գորքերի առաջխաղացման դադարն անակնկալի թիրեց Սիրիայի նախագահ Համեդ ալ Ասադին, և այս կապակցությամբ նա նշում է. «Սադարի հետ մներ ունինք պայմանավորվածություն, որ սիրիական և Եղիպատական գորքերը պետք է գործեն միաժամանակ: Խախատեսվում էր, որ հասնելով Սիրիայի լոռնամերքները՝ Եղիպատակները «օսկերատիվ դադար» կուն այնուեղ, իսկ սիրիական գորքերը կշարունակին հարձակումը Գորամի քարառմբներուն»: Սադարի հետ պայմանավորվածությունը նախատեսում էր նաև, որ այդ «դադարից» հետո Եղիպատական քանակը կշարունակի հարձակումը մինչև Խարայեցի սահմանը»<sup>299</sup>: Սադարը պարուափորվել էր նաև ՌՕՌ-ի միջոցով հարվածներ հասցնել Խարայեցի ուսագնաճարությանը՝ կառույցներին, ինչը նույնական տեսի չունեցավ: Այս ամենը Ասադին թիրեց այն եղանակացության, որ «Սադարն ամենեղծ չէր և Սիրիայի հետ իրականացնեմ էր համագործակցության ամենավատ տարրերակը»<sup>300</sup>, իսկ արարների մեջից հետևում Սադարի զաղանի կապերը Ասադը որակեց որպես «զինվորական դավաճանության գործողություն»<sup>301</sup>:

<sup>297</sup> Леонид Медведко, *Этот Ближний Восток*, Москва, 1985, с. 162.

<sup>298</sup> Amnon Shultz. Soviet Military Doctrine and Arab war aims, From June to October. The Middle East between 1967 and 1973. New Brunswick. New Jersey. 1978, p. 82, 192-193. میراث الـ ۱۹۷۳-۱۹۶۷. میراث مناضل، ص.

<sup>299</sup> Е. Примаков, История одного слова, с. 47.

<sup>300</sup> Նոյն տեղում:

<sup>301</sup> Л. Медведко, *Этот Ближний Восток*, с. 173.

1973 թ. հոկտեմբերի 16-ին Սաղարը ելույթ ունեցավ Եզիզուսի Ազգային ժողովի առջև, որտեղ հայտարարեց, որ պատրաստվում է դադարեցնել եզիզուսկամ գործերի հարձակումը եզիզուսկամ ճակատում առանց նախօրոր խորհրդակցելու նախազահ Ասադի հետ: Այդ մասին նա պաշտոնապես տեղեկացրեց Ասադին միայն հոկտեմբերի 20-ին: Այս կապահպերյամբ Ասադը հետագայում իր գինուրական գործընթերթը հիշեցրեց, որ «մա ուներ իրավունք իմանալու Սաշարի առաջարկների մասին, նախըան ուղիղութեադրդմամբ ուրանց նախն լեզը»<sup>382</sup>:

1973 թ. հոկտեմբերի 22-ին Եզիզուսի կառավարության խնդրանքով գումարվեց ՄԱԿ ԱԽ նիստ, որի ընդունմած թիվ 338 բանաձևը երկու ճակատներում կրակի դադարեցման մասին պեսոք է ուժի մեջ մտնելու օրա հաստատումից 12 ժամ հետո: Զնայած Իրազելը պաշտոնապես հայտարարեց, որ ընդունում է 338 բանաձևը, այնուամենայնիվ հոկտեմբերի 23-ին լայնածավալ հարձակում ձեռնարկեց Սուսօի ջրանցքի արևելյան և արևմտյան ափերում<sup>383</sup>: Հոկտեմբերի 23-ին ՄԱԿ ԱԽ-ը, կրկին հավաքվելով արտակարգ նիստի, ընդունեց թիվ 339 բանաձևը Մերձավոր Արևելյան բոլոր ուսանական գործուրբյունների անհապաղ դադարեցման և պատերազմող կողմերի գորբերի վերադարձի մասին այն դիրքերը, որոնք բրանի գրադարձում էին հոկտեմբերի 22-ին<sup>384</sup>: 1973 թ. հոկտեմբերի վերջին Ասադը հայտարարեց, որ Սիրիան որոշեց համաձայնել ՄԱԿ ԱԽ-ի թիվ 338 բանաձևին:

Պատերազմի ընթացքում 17 երկրներ դադարեցրին դիվանագիտական և արարերուրյաններն Իրազելի հետ, իսկ Իրաքն ազգայնացրեց Բասրայի նավայակի ընկերության մեջ Հուանջիային սրատկանու մասնարժինը<sup>385</sup>:

Բավարարված վենելով իր կայացրած որոշմամբ արարներին սուսացի Ար Ջարվածելու վերաբերյալ՝ Իրազելի վարչապետ Գուրա Մելիքն ասում

<sup>382</sup> M. Heikal, նշ. աշխ., էջ 231:

<sup>383</sup> Новейшая история Арабских стран Азии, с. 94.

<sup>384</sup> United Nations Resolutions on Palestine and Arab-Israeli conflict. Volume I: 1947-1974. Institute for Palestine Studies. Washington, D. C. 1975, p. 151.

<sup>385</sup> لوسيان بيرلان. حافظ الأسد. سيرة مناضل، ص. ٢٠٠ - ١٩٩٦.

եր հետևյալ խոսքները. «Ես իրավացի չի, որ մերժեցի կանխարգելիշ հարվածի գաղափարը, այն կարող էր փրկել կյանքեր սկզբում, բայց ևս համոզված եմ, որ մենք չենք ունենա այն օպային կազմը և օգնությունը, որն այժմ է (այսինքն՝ պատերազմի ժամանակ-Գ.Դ.) փրկում շատ կյանքներ»<sup>306</sup>.

Թեև պատերազմում Արդիային Անվար աս Սադարի գործադրած ռամբավարար ջանքերին՝ պատճառով ոչ միայն շնչացողվեց ազատազրել գրավված տարածքները, այլև նա 600 կմ քառ. շահով նոր հողեր կորցրեց. այնուամենայնիվ, 1973 թ. հոկտեմբերյան տրաբա-իսրայելյան պատերազմի գոտու ուղղական արդյունքներն ինչպես Արևմտուրքում, այնպես էլ Արևելյում զնահատակեցին ոչ-որի, և այն կարծիքը հայտնվեց, որ նրանում ոչ հաղորդ է եղել, ոչ պարտված; Արևմտյան մամուլը գրում էր, որ 1973 թ. պատերազմի առաջին խոկ օրներից իսրայելյան գործերը բախվեցին ժամանակակից զինուով հազեցած սիրիական բանակի հետ: «Նյու Յորք Թայմս» թերթը հատկապես նշում էր Արդիայի նշանակալի բարենավաճախական պաշտպանությունը, որը զինված էր իսրայելյան ինքնարդության հարձակումները դիմագրավելու ունակ բարու անհրաժեշտ հրահոներով: Արդիական հակաօդային պաշտպանությունը ծանր կորուստներ էր պատճառում իսրայելյան օդուժին, որոնք միշտ առավելություն էին ունեցիլ: ԱՄՆ ուղղական մասնագետների զնահատմանը ԱԱՀ և Արդիայի հակաօդային պաշտպանության ուժերին հաջողվել է խիել Արայի Նահանգների կողմից Իսրայելին հատկացված ինքնարդուների 1/4-ը»<sup>307</sup>:

Օրյնկանչության համար պետք է նշել, որ, այդուհանդեմ, իսրայելյան ավիացիան մեծ ավերածություններ պատճառուն ԱԱՀ նավթավերամշակող արդյունաբերությանը, էնեկորակայաններին, Լարարիա և Տարտոս նախանազիւսներին, ինչպես նաև տրանսպորտային հաղորդակառություններին:

Խոսելով հոկտեմբերյան պատերազմի բարոյահոգեցանական կողմի և արդյունքների մասին՝ պետք է նշել, որ սիրիացիները հոգեբանական մեծ խոշոշություն հաղթահարեցին՝ վախը Իսրայելի նկատմամբ: Պատե-

<sup>306</sup> Bernard Reich, The United States and Israel. Influence in the Special Relationship, p. 165.  
<sup>307</sup> "The New York Times" 10. 10. 1973.

բազմի քննացքում Ասադը գործերի մարտական ոգին ցարծրացնելու համար մի քանի անգամ կոչով դիմեց նրանց՝ հիշեցնելով, որ նրանք Արև Բաբրի, Օճարի, Օսմանի և Ալիի<sup>308</sup> հետևողաբերմ են: Նա իր գործերին կոչ էր անում վերականգնել ազգային հարաբուռքյունն ու պատիվը<sup>309</sup>: Արարա-խրայելյան այս 4-րդ պատերազմում երկու կողմերի կորուստներն է մեծ էին, սակայն հատկանշականն այն է, որ Խարայելը ավելի շատ մարտկային կորուստներ կրեց, քան նախորդ բոլոր արարա-խրայելյան պատերազմներում միասին վերցրած: Կորուստները ժամը էին հատկապես սիրիական ուազմանակատում տևել ոնեսցած կատարի նարուելում: Զայած այն հանգանանքին, որ պատերազմում արաբների կորուստներն ավելին էին, քան Խարայելինը, կարևոր այն էր, որ արաբների աշռու հօլու ցնդից Խարայելի անպարտելիության լինենցը, որը 1967 թիվ եղոր և համոզիչ գործուն էր միջազգային դիվանագիտությունում<sup>310</sup>:

Պատերազմը գործնականության ենթած արարա-խրայելյան հակամարտությունը ուազմական Ծիցոցներով լուծվու համեզնությունը: Հերքվածին նաև արարական բանակների ցածր մարտունակորքյան նաևին նախկինում գոյության ունեցող պատկերացումները: «Արաբները, հնարափոր է, արդին տարել են իրենց հարաբնակը: Նրանք ցույց տվեցին, որ իրենց գործեց կարող են նարունչել, իսկ նրանց հրամանաւուարթները՝ դեկավարնել»<sup>311</sup>:

Հոկտեմբերյան պատերազմը նախորդ արարա-խրայելյան պատերազմների համեմատությամբ առավել ցայտուն կերպով ցույց տվեց արարական աշխարհի միասնականությունը ոչ միայն ուազմական առաջարկում, այլև քաղաքական և տնտեսական միջոցների կիրառման վեջ՝ ցնդիանուր շահերին և նպատակներին հասնելու համար: 1973 թիվ սպատերազմը ցուցաբերեց նաև, թե ինչքան կարող են խորանար տարածայնությունները արևմտյան դաշնակիցների շրջանում<sup>312</sup>. մասնավորապես այն պատճառով, որ արարական երկրները կիրառեցին նավային զենքը Խա-

<sup>308</sup> Արարական խովհանության պատշաճ լոր խովհանություն:

<sup>309</sup> Al-Ma'rifa, October, 1973, No 141, բան Moshe Ma'oz, Assd. The Sphinx of Damascus, p. 93.

<sup>310</sup> T. G. Frazier, The USA and the Middle East Since World War 2, p. 112.

<sup>311</sup> "The Times" London, 16. 10. 1973.

<sup>312</sup> William B. Quandt, 02ը աշխ., էջ 16.

բայելին աջակցող պետությունների դեմ: Հաֆեզ աշ Ասադը մեծ ուշադրություն էր դարձնում նավթի խնդրին, քանի որ, ըստ իր հայտարարության, նա ուղղի շարժման հոչակտություն անմիջապես հետո պատրաստվում էր պատերազմի, որի դեմքը նավթը ծներ է թնդում ու գործառավարական նշանակություն: Որոշ արար վերլուծաբաններ, շեշտնկով նավթի կարևորությունը, ասում էին, որ տանտեսական և քաղաքական ասպարեզներում նավթը ունի նույն ուժը, ինչ որ ուսմբերը՝ պատերազմում<sup>313</sup>:

Արարական նավթ արտահանող երկրների կազմակերպությունը եվրոպական երկրներին բաժանել էր մի քանի խմբի՝ կապված արարա-խրայելյան հակամարտության համեմակ նրանց դիրքորոշման հետ. քարեկանական՝ Մինչ Բրիտանիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, չեզոք՝ Գերմանիա, և, այսպէս ասած, էմարգոյի ենթակա՝ Հոլանդիա<sup>314</sup>. Դեռևս 1973 թ. մայիսի վերջին Սաուդյան Արարիայի արտաքին գործերի նախարար Օնար աս Սակաֆը հայտարարել էր, որ արարական երկրները կօգտագործեն նավթային գնճը Խորային օժանդակող երկրների դեմ<sup>315</sup>: Եվ իրոք, արարական ամենախոշոր նավթարդյունահանող պետությունը՝ Սաուդյան Արարիան, մասնակցեց նավթային պատժամիջոցներին արևմտյան պետությունների դեմ: Սաուդյան դիմաստիայի այդպիսի կեցվածքը նպաստեց նրան, որ պատերազմի ավարտից հետո Սիրիան, որպես Խորային ովանակայող արարական երկիր, հաճածայնվեց օգնություն ստանալ Սաուդյան Արարիայից, իսկ մինչ ուղղի շարժումը նա հրաժարվում էր այդպիսի օգնություն ստանալ միապետական վարչակարգերից<sup>316</sup>: Թացի այն, որ մի շարք արարական երկրների՝ Իրաքի, Մալթայի, Սաուդյան Արարիայի, Ալժիրի, Քուվեյթի, Հորդանանի, Թունիսի, Սուդանի գործամասերը Սի-

<sup>313</sup> شام متولي، أبحاث في الاقتصاد السوري وألغوري، دمشق، ١٩٧٤، ص. ٢٦٨.

<sup>314</sup> Joan O'Leary Elshtain, Euro-American Energy Diplomacy in the Middle East, 1970-80. The Pervasive Crisis, The Middle East and the Western Alliance. Edited by Steven L. Spiegel, London, George Allen and Unwin, 1982, p. 85.

<sup>315</sup> شام متولي، أبحاث في الاقتصاد السوري وألغوري، ص. ٢٩١.

<sup>316</sup> Л. В. Валыкова, Особенности политики Саудовской Аравии на Арабском Востоке, Проблемы современной советской арабистики, выпуск I: современные политические и социально-экономические проблемы арабских стран, Ереван, 1988, с. 235.

թիայի և Եղիպատոսի բանակների հետ նասմակցում էին պատերազմական գործողություններին, արարական նավարբերության նոր երկրները դադարեցրին նավի արտօնանումը ԱՄՆ և Հողանույն և միաժամանակ որոշեցին ամսական 5 տուրուտվ իջեցնել նավի արդյունահանումը մինչև մերձավորարևելյան հակամարտուրյան լուծումը<sup>217</sup>, որի հետևանքով 1973-1974 թթ. ԱՄՆ-ում և արևմտավլուպական մի շարք երկրներում վատեցիի և Եներգետիկ սուր ճնշաժամ էր տիրում: 1973 թ. հոկտեմբերի 17-ին Քուվեյրում կայացած արարական երկրների նավի նախարարների խորհրդակցության ժամանակ որոշվեց նաև Ենրարգության ոչ միայն ԱՄՆ և Հողանույն նավի վաճառքին, այլև ԱՄՆ-ից դրւու գտնվող այն նավարկամշակող գործարաններին, որոնք արարական նավից ստացված նավարամբերը բերուվ մատուկարարում էին ամերիկյան սպառողներին և ուղարկած վարչության նավառորմը<sup>218</sup>: Նավային պատերազմի ժամանակ Ասազը պարթարարար հանդիպում էր արար դեկավարների հետ՝ նավային ենքարգույթ հարցում հաճընդհանուր և փոխհաճային եցված ոլորտուցմ որդեգիր համար<sup>219</sup>: Նա ջանքեր էր գործարում նմարավորին երկարածիւ նավային էմբարգոն, որը ոչ միայն պայմանափորձած էր քաղաքական նպատակներով, այլև հետապնդում էր զուտ տնտեսական շահեր, քանի որ այդ ընթացքում կորուկ աճեցին նավի համաշխարհային գները, իսկ Սիրիայում գնալով ավելանում էր նավի արդյունահանումը:

1974 թ. Միացյալ Նահանգների ակտիվ ջանքերով վերականգնվեցին դիվանագիտական հարաբերությունները Սիրիայի հետ, որոնք խզվել էին սիրիական կողմից 1967 թ.: 1974 թ. հունիսին պաշտոնական այցով Դամասկոս այցելեց ԱՄՆ նախագահ Շիրատոնը<sup>220</sup>:

Հոկտեմբերյան պատերազմը մնել հետևանքներ ունեցավ ոչ միայն Սիրիայի, այլև ամբողջ մերձավորարևելյան տարածաշրջանի համար:

<sup>217</sup> С. Կարանընուկյան, Արարական պետություններ լիազ ուղղ արարական երկների հականձերիալիտական պրայրամ, Երևան, 1988, էջ 163:

<sup>218</sup> Л. Медведко. Уроки «Нефтяной войны», Азия и Африка сегодня, Март 1974, № 3, с. 19.

<sup>219</sup> ٢٠٦-١٩٩. حافظ الأسد. مسيرة متاحف، ص.

<sup>220</sup> Р. В. Борисов, США: Ближневосточная политика в 70-ые годы, Москва, 1982, с. 74.

Ներկայացնելով, թե իբր Միացյալ Նահանգները շահագրգուփած էր բոլյ յուղա արարների և հրեաների միջև նոր պատերազմ, պետքարտուղար Քիսինչերն ասում էր, որ 1973 թ-ի պատերազմի սկզբունքային դասերից մեկն այն էր, որ «գերտերությունները չկարողացան կանխել արարա-իսրայելյան հակամարտությունը տասնիկ քոնկումից»<sup>321</sup>: ՄԱԿ-ի նախկին գլխավոր քարտուղար Բութրուս Դալիի կարծիքով «1973 թ. հոկտեմբերյան պատերազմը Մերձավոր Արևելքը մի նոր փուլ նոցրեց և դրու բացեց արարների և հրեաների միջև հաշտության հնարավորության առաջ: Այն շրջադարձային կեն համելիսացավ մերձավորաբեկյան հակամարտության հետագա զարգացումների համար»<sup>322</sup>: Տարածաշրջանին և Երախմունքներին բացատելյակ անզիյացի լուսարու ու զիտնական Սիլի կարծիքով՝ «պատերազմը հետամելար բացեց խաղաղ կարգավորման համար՝ զավելով պատճառաշինեցների կրթերը և լրիվ անհնաստ դարձնելով ահարթելությունը»<sup>323</sup>, իսկ ըստ Ֆուտադ Աջամիի՝ «Միրիան հաստատեց իր առանցքային նշանակությունը արարական աշխարհում և սկսեց հավակնել սկզբունքային հակամարտության դերին»<sup>324</sup>:

1974 թ. սկզբներից բանակցություններ էին ընթանում Սիրիայի և Իսրայելի միջև գործերի տարածառումամ և կրակի դադարեցման համաձայնագիր ստորագրելու նպատակով: Ասթիի 24-ին «աս-Սաֆիր» թերթը նշում էր Սիրիայի պահանջները համաձայնագրի վերաբերյալ:

1. Մանրամասն ծրագիր-օրացույցի մշակում գրավիած տարածքներից խրայելյամ գործերի դուրսելում մասին:
2. Խորայելյամ գործերի դուրսելում ալ-Կունեյտրայից:
3. Սիրիական բնակչությունի վերադարձ ալ-Կունեյտրա և մյուս ազատագրվելու բնակավայրեր:

<sup>321</sup> Nadav Safran, The War and the Future of Arab-Israeli Conflict, Foreign Affairs, American quarterly review, January 1974 No 2 vol. 52, p. 223.

<sup>322</sup> Boutros Boutros Ghali, The foreign policy of Egypt in The Post-Sadat era, Foreign Affairs, Spring, 1982.

<sup>323</sup> Patrick Seale, Abu Nidal: A Gun for Hire, New York, Random House, 1992, p. 84.

<sup>324</sup> Fouad Ajami, Geopolitical Illusions., The Middle East and the Western Alliance, Edited by Steven L. Spiegel, London, George Allen and Unwin, 1982, p. 152.

4. ՍԱԿ-ի դիսորդների ներկայություն կրակի դադարի օգնության մոր գծոմ հակառակ Խորայի պահմանը ՍԱԿ-ի արտակարգ ուժերի տեղակայման մասին<sup>325</sup>:

1974 թ. մայիսին ԽԱՀՄ արտգործնախարար Գրոմիկոն երկու անգամ այցելեց Սիրիա, քննարկվող զիսավոր հարցը սիրիական և խորայիշյան գործերի բաժանումն էր: Ամենայն հավանականությամբ Ասադի հետ բանակցությունների ընթացքում Գրոմիկոն փորձում էր համոզել նրան փոքր-ինչ մնանալ Սիրիայի դիրքորոշումը և Խորայի հետ զինադադարի համաձայնագիր տուրազը չհրաժարվելով հակամարտության վերջնական կարգավորման պահանջից: Ասադի համար շահազանց դժվար էր ուղղում կայացնել նաև այն պատճառով, որ Խորայի հետ Ժամանակավոր և մասնակի պայմանագրի կնքման դեմ Սիրիայում ձեռափուլի էր ընդդեմություն՝ ի դեմ պետական-քաղաքական և կրթության գործիչների, տակայյ զինվորականները նրա հետ միասին սրափ գիտակցում էին, որ պատերազմի արդյունքներին անհրաժեշտ է օրինականացնել որևէ փաստաթրի միջոցով: Վերջիվեց Առաջը համաձայնեց Խորհրդային Սիրիան առաջարկած տարբերակին, որին դեմ չեր նաև ԱՄՆ-ը: 1974 թ. մայիսի 31-ին Ժնևում Խորայի և Սիրիայի գեներալներ Շաֆիրն ու Տայարին ԽԱՀՄ-ի և ԱՄՆ-ի ներկայացուցիչների ժամանակցությամբ (որպես Սիրիակա Արևելյան հարցերով Ժնևի կոնֆերանսի համաժախազահներ) ստորագրեցին Խորայի և Սիրիայի միջև գործերի տարանջատման վերաբերյալ համաձայնագիր, որին համապատասխան Խորայի այս գործերը պրոս թերթվեցին ոչ միայն 1973 թ. գրաված սիրիական հողերից, այլև 1967 թ. գրավված Գևանի բարձունքների մի մասից, ինչպես նաև նրա վարչական կենարուն ալ-Լումեյուրայից: Նախագահ Հաֆիզ ալ-Ասադը անձամբ բարձրացրեց Սիրիայի պետական դրաշը Գոլանի բարձունքների ազատազրկած վարչական կենտրոն ալ-Լումեյուրայուն: Խորայի կողմից ազատված սիրիական հողերի տարածքը կազմում էր 663 կմ քառ., այդ թվում 1967 թ. գրավված 112 կմ քառ., ինչպես նաև 21 տարատեղական և ամբարձված հենակետ: Բացի որպանից, Խորայի ստիլաված էր հրամար-

վել Հերմոն լեռան վրա գտնվող իր ղլրդերից, որի հնատևանցով Դամակը-սոյ խորայելքան մոտակա իրեւունային մարտկոցից հեռացվեց մինչև 65 կը<sup>326</sup>. Ըստ կմբքած համաձայնազի՞ երկու երկրների զինված ուժերի միջև բաժերային գուշին գտնվեցու էր Սիրիայի իշխանության տակ, իսկ նրա բաղարացիական բնակչությունը վերադառնալու էր այդ տարածքները։ Փաստաբորում հասուն ընդգծվում էր, որ այն չի հանդիսանում խաղաղ համաձայնագիր, և որ այն միայն քայլ է վերջնական խաղաղության պայմանագրի ճանապարհին։ Զորքների բաժանման գործընթացին հետևեցու նախատակով ստեղծվեցին 1250 հոգոց բաղկացած ԱՊԿ-ի ուստորդական ուժեր 6 ամիս ժամկետով՝ անհրաժեշտության դեպքում երկարացնելու պայմանով<sup>327</sup>։

նում գործում էր երկրի ներսում, արտաքին միջամտությունն ու ճնշումները, ելնելով հասկանալի հանգամանքներից, այդքան ուժգիւմ չէին, և տեղեկատվության հասանելիության և տարածման ժամանակակիցից միջոցների բացակայության պայմաններում իշխանությունը կարողացավ կտրուկ միջոցներով արագորեն վերջ դնել մուտքան նորայինների ապառամբությանը: Խոկ այսօր, նաև Բաշար ալ-Ասադի անձնական ջանքերով տարածված և հասարակության լայն շերտի համար հասանելի համացանցը դարձավ իր խոկ դիմ պայքարի հիմնական գործիքներից մեկը, որի միջոցով ընդունությունը կազմակերպում է ցույցերն ու ընդունության գործողությունները՝ աշխարհով մեկ տարածելով իրեն նպաստավոր տեղեկատվություն ինչպես հավաստի, այնպես էլ իրականությանը շնամապատասխանող: Երկրում համացանցից օգտվողների թիվը վերջին տասը տարվա ընթացքում կտրուկ ավելացել է. 2000 թ. 30 հազար օգտվողից 2011 թ. հասնելու 4,5 մլն: Օգտվողների ընդհանուր քանակով Սիրիան տարածաշրջանում զիջում է միայն Իրանին, Սաուդյան Արարիային և Խորայիշին<sup>455</sup>. Այդուհանդեմ, ի հակառիչությանը, իշխանությունն ունի այդ ոլորտում իր հենարանը՝ այսպիսս կոչված «սիրիական էլեկտրոնային քանակը», որը գործում էր երկար ժամանակ նախագահի կողմից դեկավարած սիրիական համակարգային ընկերությունում:

2011 թ. սեպտեմբերի վերջին Մեծ Թրիտոնիան, Ֆրամսիան և Պոբատուալիան ԱՄՆ-ի աջակցությամբ ՄԱԿ-ի Ամփտանգության Խորիրով ընթարկությանը ներկայացրին քանածել նախագիծ, որը ներառյում էր պատժամիջոցների կիրառում Սիրիայի նկատմամբ: Ծնայած այն հանգամանքին, որ քանածել հետինակները մեղմեցին որոշ ձևակերպութեր և շրմնագրերիցին ուղղակի կոչեր Ասադի դեմ, այդուհանդեմ հոկտեմբերին ՄԱԿ Աև մշտական անդամներ Ռուսաստանը և Չինաստանը կիրատեցին իրենց վետոյի իրավունքը: ՄԱԿ-ում Ռուսաստանի մշտական ներկայացուցիչ Վիտալի Շորկինը որոշումը քացատրեց այն հանգամանքով, որ

<sup>455</sup> <http://www.internetworldstats.com/stats5.htm>

բանաձևի նախագծում բացակայում էր այն կետը, որը կրացառեր պինված ներխուժումը Սիրիա<sup>456</sup>.

Մեր կարծիքով՝ Սիրիային, անշուշտ, բացի Ռուսաստանից, առավելապես հուզում էր ոչ թե արևմտարի, այլ արարական Երկրների դիրքությունը Սիրիայի վարչակարգի նկատմամբ, և Ասաղի նուավայսությունն արդարացրեց իրեն: Նոյեմբերի 12-ին դադարեցվեց Սիրիայի անդամակցությունը Արարական պետությունների լիգայում, ավելին՝ լիգայի կողմից Երկրի նկատմամբ կիրառվեցին պատժամիջոցներ՝ ժամանակավորապես դադարեցվեց Սիրիայի հետ օգահադրույակցությունը, գործառնությունները կսնտրումական և առևտրային բանկերի հետ, տառեցվեցին պետական ֆինանսական ակտիվները, Ասաղին և նրա տասնվեց մերձավորներին արգելվեց մուտքը այլ արարական Երկրներ, և տառեցվեցին նրանց հաշիվները<sup>457</sup>: Մեր կարծիքով՝ ԱՊՀ, իիմմասդիր ամերա Սիրիայի ամբամակցության կասեցումը տեսի ունեցակ կազմակերպության կամոնադրության խախտմամբ, քանի որ նման որոշումները կայացվում են միաձայն, տակային այս դեպքում դեմ էնենց և Լիբանանը: Երկրում ծայր առած իրադարձություններից ի վեր հակասիրիական դիրքորոշում որդեգրեցին Ծոցի արարական Երկրները, իիմմականում Սաուդյան Արարիան և Կատարը: Հարկ է նշել, որ «արարական գարունի» իրադարձություններից և արարական մի շարք Երկրներում իշխանափոխությունից հետո էական փոփոխության ներարկվեց ուժերի հաջվելչյոր Արարական պետությունների լիգայում: Այդ կազմակերպությունում արդյին թնդարող դարձան արարական միապետական վարչակարգերը՝ իիմմականում Սաուդյան Արարիան և Կատարը, որի վարչապետն ու միաժամանակ արտօրդնախարարը գլխավորում է մոտ 2011 թ. նույնամբներին ԱՊՀ-ում Սիրիայի նարօքերով ստեղծված համմաժողովը: Նախկինում գրեթե անհավանական կիներ, որ, օրինակ, Լիբիայի առաջնորդ Մուամար Քաշիրաֆիի օրոք ԱՊՀ-ու ընդուներ հակասիրիական որոշումներ և բանաձևեր: Արարական

<sup>456</sup> Russia and China veto UN resolution against Syrian regime, The Guardian, 05.10.2011.

<sup>457</sup> Elizabeth A.Kennedy, Arab League Approves Unprecedented Sanctions on Syria, Time, 27.11.2011.

աշխարհի խոշորագույն կազմակերպությունը սկսեց արագործեն կորցնել իր հեղինակությունը և վերածվել մի խումբ երկրների որոշ նպատակների իրականացման գործիքի: Ծոցի արարական երկրները հետապնդում են մեկ զիսավոր նպատակ՝ Վերջ դեմ Սիրիա-Իրան ռազմավարական դաշնորին և Սիրիայում իշխանափոխության միջոցով բռնագանձնել մերձափրարման տարածաշրջանում իրենց զիսավոր ախոյան Իրանի դիրքորոշ: Կարծում ենք, որ միջազգային այն ուժերն ու երկրները, որոնք ցանկանում են տապալել Սիրիայի վարչակարգը, նպատակ ունեն նաև ստեղծել միարենք արարական աշխարհ՝ իրենց հավատարիմ արարական կրոնապետությունների զիսավորությամբ: Այդ իրողությունը հնարավորություն կուտա ստեղծելու տարածաշրջանում հզր հակակշիռ Խրանին, ինչպես նաև այլ երկրների օգնությամբ սամձելու իշխանական այն տարրերին, որոնք հավանականորեն կզան իշխանության արարական հեղափոխական երկրներում վարչակարգերի տապալումից հետո:

Արժանի է հետաքրքրության նաև Հորդանամի քաջակիր Արդազականի դիրքորոշումը, որը նույնական ժամանակին ուսանել էր Լուդրոնու և հար մահից հետո ժառանգել էր զահը: Նա արարական դեկապարմերից առաջնեն էր, որ կոչ արեց Թաշար աշ-Ասալին հյաժարական տալ, շնայծ այն հանգամանքին, որ քարեփոխումների պահանջով 2011 թ. հակապետական ցուցեր էին տեղի ունեցել նաև Հորդանանուն, սակայն դրամբ շոտով նարեցին միջազգային աջակցություն խստանալու պատճառով: ԱՄՆ-ի, եվրոպական որոշ պետությունների և ընդհանրապես հակասիրիական միջազգային ուժերի երկակի շափանիշների քաղաքականությունը մերձափորարևելյան տարածաշրջանում քացանայտ երևաց այն քանից հետո, եթ 2011 թ. Քիոտրվարին ընդհարումներ տեղի ունեցան նաև Բահրենյի Թագավորությունում՝ երկրու մեծամասնություն կազմող շիա բնակչության և զիսավորապես խրամի սունի ուղղության մերկայացուցիչներից քաղկեցած կառավարական ուժերի միջև: Իշխանությունը շատ արագ Սառույան Արարիայի օգնությամբ արյան մեջ ինեղենց քողորի ալիքը՝ 34 սպանված, քազմարիկ վիրավորներ, 1400 ճերքակալված: Տեղի ունեցած որակին «օտար պետության դավադրություն գոյություն ունեցող վարչակարգը տապալելու համար», անշուշտ, նկատի էր առնվազն Իրանը:

Արևմտյան մամուլում գրեթե շահայտարարվեց ժողովրդական բողոքը զեմ-  
ֆի ուժով ճնշչելու մասին:

Ընդունին, մեր կարծիքով, արարական նշված երկրների դիրքորոշում-  
նը դիմանագիտական շամտաժից այն կողմ չէր կարող գնալ, և նրանք  
գործեականում Սիրիայի դեմ ոչինչ անել չեն կարող: Սիրիայի տնտեսութ-  
յանն էլ իր հերթին սերտորեն կապված չէ Ծոցի երկրների հետ, իսկ քանի-  
կային փոխանցումների դադարեցման սպառնալիքը չի կարենի լուրջ ըն-  
դունել, քանի որ գոյություն ունի Միքանամյան հզոր քանակային համակար-  
գը, որը հավանաբար սիրիական վերնախավն ուղարկել էր իր միջոցների  
գօշայի մասը:

Ամբողջությամբ այլ հարբուրյան վրա է Թուրքիայի դիրքորոշումը և  
հակասիրիական ուժերի վերոնշյալ ծրագիրը այդքան էլ համատեղելի չէ  
Թուրքիայի նկրտումներին, որը վերջին տարիններին փորձում է տարա-  
ծաշրջանում ստանձնել երրեմնի Օսմանյան կայսրության որոշ գործա-  
ռույթներ՝ հանդիս գալով նաև խաղաղարարի. հականարարությունների  
կարգավորման միջնորդի և խոլանի դրոշակակիրի դերում: 1998 թ. Սիրիայի  
և Թուրքիայի միջև կնքված Աղամայի պայմանագրից հետո երկու երկրնե-  
րի միջև հարաբերությունները սկսեցին սրըմբաց վերելք ապրել՝ օրեօր  
խորացող քաղաքական, սոցիալ-տնտեսական, ճշակուրային կապերով՝  
2010 թ. 2,5 մլրդ դոլարի հասմող ապրանքաշրջանառություն, քազմարիվ  
համատեղ ծրագրեր, բուրքական խոշոր ներդրումներ Սիրիայի տնտե-  
սարյունում, մասնավորապես սահմանամերձ Հալեպի նահանգում, մուտ-  
քի արտօնագույնին ուժիմի փոխադարձ քացակայթյուն և այլն: Այդու-  
հանդիք Սիրիայում տեղի ունեցած իրադարձությունների սկզբից ևս թ-  
ուրքիան հանդիս եկավ Սիրիայի իշխանությունների դեմ մնալարամբ-  
ներով, սիրիա-բուրքական սահմանում կառուցեց փախստականների ցն-  
դուման ճամբարներ՝ ջամբ շխնայելով նարբե իշխանությունների պաշտպա-  
նի և խաղաղասեր ու ժողովրդական պետության դիլում հանդիս գալու  
նպատակով: Ի տարբերություն արարական երկրների՝ Թուրքիան ունի  
իրական և գործուն ազիցուրյան լծակներ Սիրիայի նկատմամբ: Բավա-  
կան է նշել միայն ջրի և էլեկտրաէներգիայի մասակարարությունները: Վեր-  
ջինս հանդիս եկավ նաև պատժամիջոցների կիրառման անհրաժեշտու-

բյամբ, սակայն այն ծևակերպմամբ, որ դրանք չպետք է շոշափեն շարքային սիրիացիների շահերը և էլ ավելի վատրարացման ժողովրդի սոցիալ-տնտեսական կացուրյունը։ Մրանով Թուրքիան մտավախռոքյուն ուներ նաև իր սեփական արտադրողների և գործարադրերի համար, որոնք բավական սերտորին կապված էին սիրիացի զործուների հետ, և Թուրքիայի վարչապետը ամենևին նապատակ շտմեր իր երկրում վատանգել սեփական վարկանիշը։ Սիրիան իր հերթին ևս ուներ ազդեցուրյան վաղեմի լժակներ Թուրքիայի նկատմամբ՝ ի դեմս իրեն ենթակա բրդական խմբավորումների, որի միջոցով ակտիվացրեց ապահայումանող զործուրույնամերը բռրքական տարածքում։

Սիրիայում ծավալվող իրադարձություններին ուղակիորեն ներգագիւղական էր նաև Սիրիայի ռազմավարական գործընկեր Իրանի Խաջանական Հանրապետությունը՝ համոզված լինելով, որ սիրիական վարչակարգի տապալումը կրուացնի տարածաշրջանում Իրանի դիրքերը և իր կառնեջի արևոտութիւնը ճշումից ճշշուների և սպառնալիքների խորացման համար։ Դրանից խուսափելու նպատակով Իրանը ցանք շխմայեց սիրիական վարչակարգը փրկելու ուղղությամբ։ Ռազի լայնածավալ ֆինանսական օժանդակությունից Իրանը ցուցարելում է նաև բազմաբնույթ տեխնիկական և ճամանակիտական աշխացուրյուն, մասնավորապես հայտնի է, որ մեծ փորձ ունեցող իրանական հատուկ ծառայությունները սերտորն աշխատում են սիրիացի զործուների հետ, Իրանն ուղարկում է հակահետախուզության և ժողովրդական անկառավարնի զանգվածների դեմ պայքարի փորձագետներ, դիպուկահարներ, ինչպես նաև օժանդակում օտար Երկրներում սիրիացի դիվանագետների աշխատանքներին, և ինարկե շարունակվում է օժանդակությունը Հրդարանակազմակերպության միջոցով, չնայած այն որքանով համարվում է իրանական, որոշ վերապահում-ներով կարելի է հանարկ նաև սիրիական։

Ի տարբերակում 1979–1982 թթ. Սիրիայում մուսուլման–ինքայրների կողմից բարձրացրած ապատաճրությանը, ներկայիս ընդդիմության զորդողությունների հիմնական կազմակերպող օրակ են Խանջխանուում աշխարհիկ կուսակցությունները։ Ներկա փուլում սիրիայում վաստորեն գոյուրյուն ունեն երես ընդդիմադիր ուժեր, սիրիական ապատազրական բա-

նակը (ՍԱԾ), որը համալրվում էր իիմնականում սիրիական կանոնավոր բանակի դասադիրների հաշվին, և որին աջակցում է զիսավորապես Թուրքիամ "մասնավորապես սիրիա-թուրքական սահմանում բռնժերային գոտի տաեղծելով՝ որպես վերջինիս համար իիմնական տեղակայան: ՍԱԾ-ը զիսավորապես կողմնակից է զինված պայցարի ընկայնմանը և սիրիական վարչակարգի տապալմանը ռազմական միջոցներով: Մյուս ուժն այսպիս կոչված համակարգող խորհրդողն է, որը հանդիս է զայիս իշխանության հետ խաղաղ երկխոսության կոչով և իշխանության բայլ առ բայլ բանափոխմանը: Եսկ ամենախոշոր միավորումը սիրիական ազգային խորհրդն է (ՍԱԾ): Սիրիական ընդդիմությունը երկրի սահմաններից դրուս տեղարաշխված և զիսավորապես Թուրքիայում, Սաուդյան Արարիայում, Կատարում և Փարիզում: Երաղարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընդդիմության ճամրարում չկա միասնություն, միասնական գողափարախոսություն և միասնական նեկափարու ուժ, այդ իրողությունը բացատրվում է այն հանգամանցով, որ Սիրիայում ընդդիմություն, որպիս այդպիսին, դրական առունով երկար ժամանակ գոյություն չի ունեցել, ինչպես նաև այն պարզ պատճառով, որ Թուրքիայում և Կատարում գործող ընդդիմության նպատակներն այլ են, քանի որ նրանք նաև ներկայացնում են առյալ երկրի շահներ Սիրիայում, իսկ Փարիզում գործող հանգատարար երիտասարդ և աշխարհիկ մոտավորական համարվող ընդդիմության նպատակներն ու պայցարի մերուժներն այլ են: Նշված պատճառներով ընդդիմությունը չկարողոցավ բավականաշահ իմքնակազմակերպվել և ջակել իշխանափոխության հատակ բաղաքարական ծրագիր: Շեայած այն հանգամանցին, որ Թուրքիայի տարրեր բացարձներում պարբերաբար տեսի վիճ ունենաւ Սիրիայի ընդդիմության համագումարներ, ընտրվում էին նեկավար մարմիններ, հանձնաւողովներ, փորձ էր արվում դրանց կազմում ընդդրկել ընդդիմության տարրեր ուժերի ներկայացուցիչներ, այդուհանդերձ, վերջին ամիսների ընթացքում ընդդիմությունը չկարողացավ տեսեղել բռնորդների կատավարման հատակ համակարգ: Արդարության համար անհրաժեշտ է նշել, որ անորոշ իրավիճակ է տիրում նաև սիրիական դեկավարությունում նետազա գործությունների առումով և Ասաղի վրա գցայի և մասնավորապես նոյնորդ՝ Մահերի ճնշումը, որի

դեկավարությամբ սիրիական բանակի 4-րդ էլիտար կորպուսը ապստամբների ելույթների մշշան զիսավոր գործիքն է:

Այսուամենայնիվ, չի կարելի անտեսել երկրում հավանական և օբյեկտիվ ընդդիմությունը, այն է՝ գերակշռաբար ալավի համայնքի ներկայացուցիչներից բաղկացած իշխող վերնախավի նկատմամբ նրկրի տուննի բնակչության մեծամասնության ներկայունս համեմատարար պասխավ ընդդիմությունը, ինչպատճեն արդեն տեսի նույնական բնույթում ալավիների և տուննիների միջև, և երկրում երմիկ-քաղաքական և երնիկ-սոցիալական հողի վրա հնարավոր բախումները օրեցօր լուրջ սպառնալիք են դառնում Սիրիայի հանար: Հարկ է նշել, որ ի տարրերություն 1979–1982 թթ. հակակառավարական ելույթների, որոնք սկիզբ առան Հայեակ քաղաքի ուազական ուսումնարանում մի քանի տասնյակ ալավի ուսանողների սպառնությամբ, 2011 թ. Հալեպի առանձնահայես աշրի շընկավ ընդդիմության ելույթներով: Նշվածը կարելի է բացատրել այն հանգանակությունը, որ Հալեպում կենտրոնացած և զիսավորապես բռնքական ընկերությունների հետ կապված սունիական առևտրական վերնախավը ակտիվորեն շարունակում է իր տնտեսական գործունեությունը՝ իշխանությունների կողմից ստանալով հարկային, օրենսդրական և այլ բնույթի արտօնություններ՝ հակապետական ելույթներից չնզոր մնալու հանար: Այդ ուղղությամբ սահմանափակումներ չկան նաև Թուրքիայի իշխանությունների կողմից<sup>455</sup>, որն իր հերթին նույնպես չի ցանկանում վնասել բռնքական ընկերությունների և գործարաբների շահերին: Նշվածին զումարած Հալեպում զգալի թիվ կազմով քրիստոնյա տարրեր համայնքների բնակչության առկայությունը, որը մեծամասամբ իշխանական է:

Որպես ընդդիմայիր տարր՝ հօգոր ուժ է նաև բրդական գործոնը: Սիրիայի քրդական ազգարնակշուրյունը կազմում է 3 մլն՝ համարվելով ամենամեծ ազգային փոքրամասնությունը, որն ունի գրեթե ամենաասահմանափակ իրավունքներն ու սոցիալ-քաղաքական կարգավիճակը: Նրանք նույնիսկ ծեյլու չեն հանդիսանում Սիրիայի քաղաքացիներ և չունեն Սիրիայի համարապարագիական անձնագրեր: Շիշտ է, վերջին իրադար-

<sup>455</sup> Խոսքը չի գումար պետական ժակարտակով գործառնությունների մասին:

ծուրյանների ընթացքում մոտ վեց հազար բրդիր տուացան Սիրիայի քաղաքացիություն, սակայն այն հիմնականում ժողովրդահաճո քայլ էր և չեղ կարող փոխել նրանց ընդհանուր տրամադրությունը:

\*\*\*

Սիրիայում տեղի ունեցող իրադարձությունները և երկրի քաղաքական դեկավարության ճակատագիրը Հայաստանի Հանրապետության և Խայերին հաճար ունի կարևոր նշանակություն երկու գլխավոր պատճառով: Սիրիան տարածաշրջանում Հայաստանի ավանդական քարեկամ երկրներից է, և ՀՀ անկախությունից ի վեր ցուցաբերել է քե՛ տնտեսական և քե՛ քաղաքական աջակցություն: Սիրիայի և Հայաստանի քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային հարաբերությունները գտնվում են Բավական քարձր ճակարդակի վրա<sup>459</sup>: Եվ երկրորդ՝ 1915 թ. Օսմանյան կայությունում տեղի ունեցած հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում է բնակվում Մերձավոր Արևելքում հայ ժողովոյի ամենախոշոր գաղրօջախը և շնայած վերջին տարիներին սիրիահայերի արտագաղթին այլ երկրները<sup>460</sup>, հայերի թիվը Սիրիայում կազմում է մոտավորապես 80-85 հազար, որից միայն 45-50 հազարը՝ Հայեց քաղաքում<sup>461</sup>. Սիրիայի հայ գաղրօջախը իրավամբ համարվում է «այլ գաղրօջախ», իսկ Սիրիան՝ հայերի երկրորդ հայրենիք եղնելով նաև այն հանգամանքից, որ աշխարհասփյուտ հայության մեծ մասը՝ եղեռնից մազապարծ, մկրում փրկություն գտավ Սիրիայի կյուրընկալ հոգում, ապա Սիրիայից գաղրեց և հաստատվեց ԱՄՆ-ում, Եվրոպայում և աշխարհի այլ երկրներում: Այդուհանդիր հարկ է հիշատակել, որ Սիրիայի տարածքում հայերը բնակություն են հստատել ոչ միայն 1915 թ-ից, այլև Թագրաստունյաց Հայաստանի և Հիմնականում Կիլիկյան Հայաստանի ամկոմից հետո: Նրանք Սիրիայի մերձծովակինյա շրջաններում հիմնել են հայեկան բնակավայրեր, սա-

<sup>459</sup> Այդ մասին ավելի մամրաման տե՛ս Ն. Հովհաննիսյան, Ցավ, աշխ., էջ 544-551:

<sup>460</sup> Սոցիալ-տնտեսական պատճեններով վերջին տարիներին Սիրիայից պատագաքեցին մոտ 30 հազար հայեր:

<sup>461</sup> Ըստ Հայեցի Հայոց Առաջնորդայի տվյալների:

կայն ժամանակի ընթացքում տարբեր դրդապատճառներով մեծ մասը կորցրել է դափանանը և հայկական ամունները: Այդ հայերը Սիրիայում հայտնի են «արման կադիիմ»՝ իյն հայեր ամունով:

Սիրիայում ապաստամ գտնելուց ի վեր և հատկապիս Հաֆեզ ալ Ասադի և որդու՝ Բաշար ալ-Ասադի կառավարման տարիներին հայերը՝ հանդիսանալով երկրի լիդերակ քաղաքացիներ, մեծ հարգամբ և համակրանք են կայեցում իշխանության կողմից և ի տարբերություն որոշ այլ վորքամասնությունների, ունեն քավական լայն իրավունքներ՝ իրենց ազգային իմքնությունը, դավանանքը, լեզուն, մշակույթը և կենցաղը պահպանելու և զարգացնելու, ինչպես նաև տնտեսական բարեկեցությունն ապահովելու հարցում: Այս ամենը ծնոր է թիրվել Սիրիայի օրինապաշտ քաղաքացիներ հանդիսանալու, աշխատավորության, նախանշված քաղաքական ուղղությանը շրմողինանալու, ինչպես նաև քնիկ ժողովրդի՝ թե՛ քրիստոնյա և թե՛ մոսուլմանակամ, կրոնը, մշակույթը, տվորությունը հարգելու հետևանքով: Տասնամյակներ ապրելով Սիրիայում՝ հայերն ակտիվ մասնակցել են հասարակական կյանքում՝ իրենց նախատց թիրենով երկրի սոցիալ-տնտեսական և ծագակորային զարգացմանը:

Հաշվի առնելով վերոնշյալ համգանանքները՝ Սիրիայում իշխանակությունը կամ վարչակարգի տապալումը կարող է ծանր հետևանքներ ունենալ հայ ազգաբնակչության տոցիալ-տնտեսական և հասարակական կարգավիճակի վրա: Ծայրահեռ խւանական ուժերի կամ ուղղիչ շարժման աճուղյ ժամանակաշրացքում Սիրիայում գոյություն ունեցած երնո-կրոնական համերաշխության իրողությունն իրենց զաղակարախոսությանը և շահերին դեմ ընդունած այլ ուժերի՝ իշխանության գալու պարագայում տասնամյակների ընթացքում իշխանանետ դիրքորոշում որդեգրած հայ համայնքի ճակատագիրն անկանխատեսելի է: Ուղղիչ շարժման հոչակումից ի վեր իշխանությունը երեք շեր հետապնդել քաղաքացիներին՝ եզիւլով նրանց երնո-դափանական պատկանելությունից, ինչը հնարավոր չէ նրաշխափորել վարչակարգի տապալումից հետո: Որոշակի առումով մասնաւոհ իրավիճակում հայտնվեց նաև Իրարի հայ համայնքը 2003 թ. սկսված իրարյան պատերազմից և Սաղման Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո, եթե սկսվեց քրիստոնյաների հալածամբները և նրանց

ունեցվածքի ուղղակի զավթումները համատարած քառսի պայմաններում։ Երարշում երբեմնի քանի հազարունաց հայ համայնքի փոխարինն ներկայում երկրում բնակվում է, մի քանի հազար հայ<sup>462</sup>.

Սիրիայի և մասնավորապես Հայեափի հայ համայնքը, հավատարիմ մնալով իր մշտական կեցվածքին, կարողանում է ստեղծված քայլ իրադրայւնում ընդիւմուր առմանը դրական չեզորոքյուն պահպանի՝ շնայծ անխոսափելի սաղրանքներին տարբեր ուժերի կողմից։

Քաղաքական առումով Սիրիայում գենքի ուժով վարչակարգի տապալունց հակասիրիական ուժերի կողմից կարող է հանգեցնել լուրջ միշազգային քաղաքական ճգնաժամի, որը հավանաբար կգուգակցվի երկրում միջէթնիկական քայլումներով և անկանխատեսելի հետևանքներով։

<sup>462</sup> Ըստ Թաղթարք Հայոց Առաջնորդութանի տվյալների։

GEVORG GHARIBJANIAN

*HAFEZ AL ASSAD AND THE CORRECTIVE MOVEMENT IN SYRIA*

**SUMMARY**

The book deals with one of the most crucial events in the modern history of Syria – the Corrective Movement, established on 16<sup>th</sup> November 1970 by Hafez al-Assad. It is the most notable event in Syrian history after the independence in 1945. The study of Syrian former president Assad's internal and foreign policy, the social-economic developments and achievements are of great scientific and social-political significance. In the light of the concept of the Corrective Movement several political and social – economic reforms have been carried out in the country.

In 1972 the National Progressive Front (NPF) was formed in Syria. On President Assad's initiative the Communist Party of Syria, the Arab Socialist Union, the Socialist Unionists and the Arab Socialist Party were united within the National Progressive Front under the guidance of the Ba'ath ruling party. The author discusses the consequences of establishing the NPF and its outcome on the Syrian domestic policy. Though Hafez al-Assad used to control all the state instruments of power, the creation of the NPF was the important initiative to strengthen the internal unity and consolidation of the Syrian community. As a result, Syria reached stable internal political situation which was the significant factor for social-economic developments.

In 1971 the Institute of the Presidency was established, in 1973 the new permanent Constitution was adopted and the National Assembly (Parliament) was elected. The Movement gained in the Arab-Israeli war of 1973 and returned part of Syrian territory occupied by Israel during the 1967 war.

In the field of social-economic reforms the Government in particular liberalized the economy to some extent and actually created a private sector; that led to the growth of foreign investment and protected the right of private entrepreneurship. Assad also took some steps in order to return the capital that had been transferred out of the country during the former left-ba'athist regime. President Assad established harmonic foreign economic relations not only with Arabic countries and Soviet Union but with Western States as well.

Since the early 1980's socio-economic reforms in Syria carried out in light of the doctrine of the Corrective Movement partially were held back, and a period of economic stagnation prevailed. The economy of Syria faced several big challenges. The sharp decrease in oil prices on the international market in the early 1980's and the resulting reduction of the financial aid provided to Syria by the oil-producing Arab countries were among the major factors.

In the early 1980's the main evolvement in Syria's domestic political life in general was the gradual shift from the ideology and the founding principles of the Ba'ath party to the President Hafez al-Assad's cult of personality, which was one of the instrumental means for preserving the regime.

The most important achievements of the Corrective Movement and the long term leadership of president Hafez Al-Assad were the establishment of unprecedented and durable political stability compared with the situation in 1950's and 1960's.

As a result of successes of the Corrective Movement Syria became one the influential centers of the Arab World.

\*\*\*

The president of Syria Hafez al-Assad died on June 10, 2000. A month later his son Bashar al-Assad was approved as the president of the Syrian Arab Republic with the official result of 97.29% of the votes cast in a national referendum. During the first years of his presidency Bashar al-Assad undertook some measures to loose the rigid State control and garner broad public support.

Bashar al-Assad began political liberalization of the country; particularly in 2002 he changed the Charter of National Progressive Front, according to which the Ba'ath party had the monopoly status for propaganda and political activities in the society. He also paid a great attention to the development of high technologies, and due to his efforts the internet and mobile communication appeared in the country.

In foreign political arena the most considerable event of the first 7 years of Bashar al-Assads leadership was the withdrawal in March 2005 of Syrian military contingent of 16 thousand from South Lebanon; the Syrian troops were deployed there in 1976 to «defeat the sovereignty and territorial integrity of Lebanon».

In 2011 large-scale clashes conditioned by social and political problems took place in Syria for the first time since 1982 that threatened the stability and security of the state.

On November 12, 2011 the membership of Syria to the League of Arab countries was suspended. Moreover the League imposed sanctions on Syria.

The change of regime in Syria might have serious consequences for the Armenian community in every aspect.

In regional and larger international terms the forcible overthrow of the regime in Syria by joint actions of anti-Syrian international alliance and the opposition may lead to a protracted internal interethnic and confessional strife and endanger not only the future of the Syrian state but the regional stability as well.

## Օգտագործված գրականության ցամկ

Փաստաբառքներ, ելույթներ, ճառեր, հարցազրոյցներ, հուշեր,  
պրոցեսներ, տեղիկառու գրականություն

1. Հաֆիզ ալ Ասադի 1972 թ. ապրիլի 7-ի ելույթը Բաաս կրտսակցության  
հիմնադրման 25-ամյակի կապակցությամբ,  
**մշուշագրություն**.  
1971/8/30-1970/2/22
2. Հաֆիզ ալ Ասադի ելույթը Բաասի 1970 թ. նոյեմբերի համագգային 10-  
րդ արտահերթ համագումարում, Kerr, Malcolm, Hafiz al-Asad and the  
Changing Patterns of Syrian Politics, International journal, 28 (4) 1975.
3. Հաֆիզ ալ Ասադի 1970 թ. նոյեմբերի 24-ի ելույթը աշխատավորմերի  
համբուղամուր արհմատությունում,  
**մշուշագրություն**.  
1971/8/30-1970/2/22
4. Հաֆիզ ալ-Ասադի ելույթը Դամակղության առևտրականներին ներկայաց-  
նող պատմիքակության հետ հանդիպման ժամանակ,  
**մշուշագրություն**.  
1971/8/30-1970/2/22
5. Հաֆիզ ալ Ասադի 1971 թ. հունվարի 9-ի ելույթը Հալեպում զինված ու-  
ժերի սպամերի հետ կայացած հանդիպման ժամանակ,  
**մշուշագրություն**.  
1971/8/30-1970/2/22
6. Հաֆիզ ալ Ասադի 1971 թ. հունվարի 14-ի ելույթը Լատաքիայում զին-  
ված ուժերի սպամերի հետ կայացած հանդիպման ժամանակ,  
**մշուշագրություն**.  
1971/8/30-1970/2/22

7. Հաֆեզ ալ Ասադի Ելույրը 1971 թ. հունվարի 12-ին Լատարիա մուհա-  
ֆազայում տեղի ունեցած մեծ հանրահավաքի ժամանակ.  
**مجموعة خطب الفريق القائد حافظ الأسد . الكتاب الأول.**
8. Հաֆեզ ալ Ասադի պատասխան ճառը 1971 թ. փետրվարի 1-ին Մոսկ-  
վայում ԽՍՀԿ կամտեկոմի անունից իր պատվին տրված ճաշի ժամա-  
նակ .  
**مجموعة خطب الفريق القائد حافظ الأسد . الكتاب الأول.**
9. Հաֆեզ ալ Ասադի ճառը 1971 թ. փետրվարի 2-ին ԽՍՀՄ նախարարնե-  
րի խորհրդի նախագահ Կոսիգինի անունից իր պատվին տրված ճաշի  
ժամանակ .  
**مجموعة خطب الفريق القائد حافظ الأسد . الكتاب الأول.**
10. Հաֆեզ ալ Ասադի Ելույրը Ժողովրդական ժողովի առջև 1971 թ.  
Վինտրվարի 22-ին Ժողովրդական ժողովի պատմական նախաջրջամի  
բացման կապակցությամբ .  
**مجموعة خطب الفريق القائد حافظ الأسد . الكتاب الأول.**
11. Հաֆեզ ալ Ասադի 1971 թ. մարտի 14-ի պատմական Ելույրը  
Ժողովրդական ժողովում հանրապետության նախագահ ընտրվելու  
կապակցությամբ .  
**مجموعة خطب الفريق القائد حافظ الأسد . الكتاب الأول.**
12. Հաֆեզ ալ Ասադի Ելույրը 1971 թ. մայիսի 22-ին Սիրիայի Արարական  
Հնարապետությունում հավատարմագրված արարական և օտար  
դիմանագիտական առաջնորդությունների դեկանարմների հետ  
հանդիպման ժամանակ .  
**مجموعة خطب الفريق القائد حافظ الأسد . الكتاب الأول.**
13. ԱԱԱԱ-ի ժամանակավոր Երկրամասային դեկանարության 1970 թ.  
նոյեմբերի 16-ի հայտարարությունը .  
**المؤتمرات القطرية لحزب البعث العربي الاشتراكي في القطر العربي السوري .**

14. Ուղղիչ շարժման քաղաքականության ծրագիրը,  
հրապարակությունը և առաջնական դեմքը՝  
«الحركة التصحيحية المجيدة في الذكرة الخامسة والعشرين»، دمشق، 1995.
15. Բաասի 1971 թ. մայիսի երկրամասային հերթական 5-րդ  
համագումարի որոշումները,  
«المؤتمرات القطرية لحزب البعث العربي الاشتراكي في القطر العربي السوري».
16. Բաասի 1979 թ. դեկտեմբերի երկրամասային 7-րդ համագումարի  
որոշումները,  
«المؤتمرات القطرية لحزب البعث العربي الاشتراكي في القطر العربي السوري».
17. Ազգային առաջադիմական ճակատի խարսխան և  
կանոնադրությունը,  
«محمد المصري، محمد منصور، من تجارب الشعب. الجبهة. الوطنية  
القدمية»، دمشق، 1973.
18. 1973 թ. մարտի 12-ին ընդունված Սիրիայի Արարական  
Հանրապետության սահմանադրությունը,  
«دستور الجمهورية العربية السورية الصادر بالمرسوم رقم ٢٠٨ تاريخ ١٣-٣-١٩٧٣».
19. Սիրիայի Արարական Հանրապետության օրենքը «Տեղական  
ինքնակառավարման մասին» (05.11.1971),  
հրապարակությունը՝ «الحركة التصحيحية المجيدة في الذكرة الخامسة والعشرين»، دمشق، 1995.
20. Հաֆեզ ալ Ասադի 1973 թ. հունիսի 9-ին ելույթ Սիրիայում ուղղիչ  
շարժման անցումային ժամանակաշրջանի ավարտի  
կապակցությամբ,  
«الحركة التصحيحية المجيدة في الذكرة الخامسة والعشرين»، دمشق، 1995.
21. Հաֆեզ ալ Ասադի նվազը 1963 թ. մարտի 8-ի Բաասի  
հեղափոխության 17-ամյակին նվիրված հանրահավաքի ժամանակը,  
«Сааджян П., Активизация деятельности организаций "Братья-Сааджян П."».

- мусульмане в Сирии в 1979–1982 гг., в сб. Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока. Ереван, 1986.
22. Համբեզ ալ Ասադի 1977 թ. ճաղո նորբնտիր ժողովրդական ժողովի առջև,
- المؤتمرات القطرية لحزب البعث العربي الاشتراكي في القطر العربي السوري.
23. Համբեզ ալ Ասադի 1983 թ. օգոստոսի 9-ի հարցազրույցը «Էլու Անգելիս քայլս» և «Վաշինգտոն փոստ» թերթե-
- خطب وكلمات وتصريحات السيد الرئيس حافظ الأسد ، دمشق، ١٩٨٣
24. Բաշար ալ-Ասադի 2000 թ. հունիսի 17-ի ելույթը ժողովրդական ժողովում Միքայելի նախագահի պաշտոնը առանձննելուց հետո،
- الخطاب الشامل الذي ألقاه السيد الرئيس الدكتور بشار الأسد الأمين القطري لحزب البعث العربي الاشتراكي أمام مجلس الشعب بعد أدائه اليمين الدستورية في ١٧-٦-٢٠٠٠.
